



ՉԵԿՈՒՅՑ

# ՄԱՐԳՆՈՒ ԻՐԱՎՎՈՒՆՔՆԵՐԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

**Լոռու մարզային հոգենյարդարանական դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ Վանաձորի մանկատանն  
իրականացված մոնիթորինգի արդյունքները**

Չեկույցը տպագրվում է Երևանի կառավարության եւ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի կողմից համատեղ ֆինանսավորմամբ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավապաշտպանական կարողությունների եւ գործունեության արդյունավետության բարձրացումը» եռամյա ծրագրի շրջանակներում:



ՀՔԱ Վանաձորի գրասենյակ



Բաց հասարակության  
ինստիտուտի օժանդակության  
հիմնադրամ



Նիդեռլանդների  
բազակորություն





# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շնորհակալություն - - - - -

Ներածություն - - - - -

Մոնիթորինգի իրականացման մեթոդական մաս - - - - -

ՄԱՍ 1

Մարդու իրավունքները Լոռու մարզային  
հոգեյարդարանական դիսպանսերում - - - - -

ՄԱՍ 2

Մարդու իրավունքները Վանաձորի ծերատանը - - - - -

ՄԱՍ 3

Մարդու իրավունքները Վանաձորի մանկատանը - - - - -

ՄԱՍ 4

Եզրակացություններ - - - - -

Առաջարկություններ - - - - -

ՄԱՍ 5

Հավելվածներ - - - - -

Լոռու մարզային  
հոգեւոյնաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

## Հնորհակալութիւն

Յետինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը հայտնում է իր խորին շնորհակալութիւնը բոլոր նրանց, ում մասնակցությամբ և օգնությամբ հնարավոր դարձավ սույն զեկույցի տպագրութիւնը:

Լոռու մարզի 5 քաղաքներից ընդգրկված նոր կամավորները ներդրեցին իրենց ջանքն ու եռանդը Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերոււմ, Վանաձորի ծերատանը, Վանաձորի մանկատանը մոնիթորինգներ իրականացնելու, արդյունքների ամփոփման համար:

Անգնահատելի է կամավորներ Սարիտա Թեմուրյանի, Անի Ղամբարյանի, Լուսինե Նգոյանի, Սարիամ Այվազյանի, Ռուզան Գոգչյանի, Սյուզի Թամազյանի, Լիլիթ Ջարգարյանի, Ասյա Դերձյանի, Արփինե Ծատինյանի, Մարիաննա Պետանյանի, Աննա Մատինյանի, Ադրինե Մուրադյանի, Լուսինե Մուրադյանի աշխատանքը մոնիթորինգի իրականացման, ինչպես նաև Ելենա Սարգսյանի աշխատանքը մոնիթորինգի արդյունքների ամփոփման գործում:

Մոնիթորինգների իրականացմանը չխոչընդոտելու և թույլտվության համար շնորհակալութիւն ենք հայտնում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարութեանը, ՀՀ Առողջապահութեան նախարարութեանը, համագործակցության համար՝ Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերի աշխատակազմին՝ հանձնիս տնօրէն Գայանե Քալանթարյանի, Վանաձորի ծերատան աշխատակազմին՝ հանձնիս տնօրէն Տիգրան Քոչարյանի, Վանաձորի մանկատան աշխատակազմին՝ հանձնիս տնօրէն Արշալույս Հարությունյանի:

Հատուկ շնորհակալութիւն ենք հայտնում Սարգոս իրավունքների լեհական հիմնադրամի մասնագետներ Ագնէշկա Կլոսովսկուն և Ջենէն Կոլոզեյին մոնիթորինգի ուսուցման, համապատասխան մեթոդների և գործիքների մշակմանն աջակցելու համար:

Հնորհակալութիւն ենք հայտնում նաև բոլոր նրանց, ովքեր չխնայեցին իրենց ժամանակը մեր ուսումնասիրութիւնների ընթացքում մեզ հետ զրուցելու, իրենց մտահոգութիւններն ու կարծիքները մեզ հետ կիսելու համար:

# Ներածություն

**2**006թ. նոյեմբերից Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն իրականացնում է «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավապաշտպանական կարողությունների և գործունեության արդյունավետության բարձրացումը» եռամյա ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում էր ձևավորել Լոռու մարզում մարդու իրավունքների խախտումների արագ արձագանքման խումբ՝ Լոռու մարզի 5 քաղաքներից մոր կամավորների ընդգրկմամբ:

Լոռու մարզից ընդգրկվեցին 16 կամավորներ, որոնց համար ծրագրի շրջանակներում կազմակերպվեցին մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված տարբեր սեմինարներ: Սեմինարների արդյունքում ձեռք բերած գիտելիքները մասնակիցները կիրառեցին պրակտիկ գործողություններում, որոնցից էր նաև մարդու իրավունքների մոնիթորինգը Լոռու մարզի փակ և կիսափակ հաստատություններում: Մինչև մոնիթորինգի իրականացումը կամավորների համար 2007թ. հունիսի 19-25-ն իրականացվեց «Մարդու իրավունքների մոնիթորինգ» սեմինարը: Որպես ուսուցանողներ՝ սեմինարին ընդգրկվեցին Ազնեշկա Կլոսովսկայան և Ջենոն Կոլոդզեյը՝ Մարդու իրավունքների լեհական Հելսինկյան հիմնադրամից: Նրանց աջակցությամբ կամավորները սեմինարի արդյունքում մշակեցին յուրաքանչյուր մոնիթորինգի ռազմավարությունը, իրականացման պլանը և համապատասխան գործիքները:

2007թ. հոկտեմբերին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կամավորներն իրականացրեցին 3 մոնիթորինգ՝ Լոռու մարզային հոգեոյադաբանական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը, Վանաձորի մանկատանը: Մոնիթորինգի նպատակն էր պարզել մարդու իրավունքների վիճակը այդ հաստատություններում, բացահայտել առկա խնդիրները, աջակցել այդ խնդիրների լուծմանը:

Մոնիթորինգի իրականացման ընթացքում ուսումնասիրվել են հետևյալ խնդիրները.

- *երեխաների առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմանները*
- *երեխայի արժանապատվությունը նվաստացնող, անմարդկային կամ այլ դաժան վերաբերմունքից, պատժից և բռնություններից զերծ մնալու իրավունքը*
- *երեխայի կրթության իրավունքի ապահովումը*
- *երեխայի անձնական կյանքը հարգելու և անձնական անձեռնմխելիության իրավունքի ապահովումը*
- *Լոռու մարզային հոգեոյադաբանական դիսպանսերի կենսապայմանները, խոշտանգումներից, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի ապահովումը*
- *բժշկական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը*

Լոռու մարզային  
հոգեւոյարդաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

- **Վանաձորի ծերատանը տարեցների բժշկական օգնություն ստանալու իրավունքի պահպանումը**
- **Վանաձորի ծերատանը տարեցների նկատմամբ աշխատակազմի վերաբերմունքը**
- **սեփականության և անձնական կյանքի իրավունքի պահպանումը**
- **Վանաձորի ծերատանը տարեցների կենսապայմաններին վերաբերող խնդիրները:**

Բացահայտված յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ ձևակերպվել են համապատասխան առաջարկություններ:

Մոնիթորինգի արդյունքում պատրաստված այս զեկույցը հանդիսանում է Լոռու մարզի փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների վիճակի մասին տեղեկատվություն տրամադրող լավագույն միջոցներից մեկը: Այն հասցեագրվում է.

- ԶԶ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը
- ԶԶ Առողջապահության նախարարությանը
- Լոռու մարզային հոգեւոյարդաբանական դիսպանսերին
- Վանաձորի ծերատանը
- Վանաձորի մանկատանը
- «Հայ Օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին»
- Ինչպես նաև այն կառույցներին ու շահագրգիռ անձանց, ովքեր հետաքրքրվում են Հայաստանում մարդու իրավունքների վիճակով, առկա խնդիրներով և դրանց լուծմանն աջակցելու պատրաստակամություն են դրսևորում:



# Մեթոդաբանություն

**Լ**ուռու մարզային հոգեմյարդաբանական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը և Վանաձորի մանկատանը մոնիթորինգն իրականացվել է 2007թ. հոկտեմբերի 3-25-ն ընկած ժամանակահատվածում: Մոնիթորինգի իրականացման համար նախապես պաշտոնական գրությամբ մոնիթորինգի նպատակի, ժամկետների մասին դիմումներ ենք ուղարկել ՀՀ Առողջապահության նախարարությանը, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, ստացել մոնիտորինգի իրականացման թույլտվություն:

Մոնիթորինգի իրականացման ժամանակ տեղեկատվության հավաքագրումն իրականացվել է հետևյալ մեթոդներով.

- **հարցազրույցներ:** Հարցազրույցներն իրականացվել են անհատապես Լուռու մարզային հոգեմյարդաբանական դիսպանսերի հիվանդանոցային բուժում ստացող 13 հոգեկան խանգարումով տառապող անձանց, Վանաձորի ծերատանն ապրող 35 տարեցների, Վանաձորի մանկատանն ապրող 17-20 տարեկան 12 երեխաների հետ: Հարցազրույցներն իրականացվել են հատուկ մշակված հարցաշարերի միջոցով, որոնց արդյունքում բացահայտվել են նրանց կարծիքները սննդի, կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանների, աշխատակազմի կողմից նրանց նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ: Նույն հարցերի վերաբերյալ հարցազրույց է անցկացվել նաև տնօրենների, հոգեմյարդաբանական դիսպանսերի 5 բժշկի, 4 բուժակի, 3 սանիտարի, խոհանոցի 2 աշխատողի, բուժետի 1 աշխատողի, քույր տնտեսուհու հետ, Վանաձորի ծերատան 10 աշխատակիցների հետ: Հարցազրույցներն իրականացվել են տվյալ անձանց համաձայնությամբ:
- **Դիտարկումներ:** Դիտարկումն իրականացվել է հատուկ մշակված դիտարկման քարտերի միջոցով: Դիտարկվել են հիվանդասենյակները, մեջասենյակները, բուժետը, պրոցեդուր սենյակները, սանհանգույցները, խոհանոցները, պահեստները, լողասենյակները, աշխատակիցներին հատկացված սենյակները, ինչպես նաև յուրաքանչյուր հաստատության բակը:
- **Փաստաթղթերի վերլուծություն:** Փաստաթղթերի վերլուծության ընթացքում ուսումնասիրվել է յուրաքանչյուր հաստատության կանոնադրությունը, աշխատակիցների համար մշակված առկա ներքին կանոնակարգերը, օրվա ռեժիմը, դրանց համապատասխանելիությունը ՀՀ օրենսդրությանը:
- **Օրենսդրական վերլուծություն:** Օրենսդրական վերլուծության ժամանակ ուսումնասիրվել են յուրաքանչյուր կառույցի գործունեությանն առնչվող ՀՀ օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը:
- **Տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում:** Պաշտոնական գրություների միջոցով տեղեկատվություն է ստացվել ՀՀ կառավարության կողմից Լուռու մարզային հոգեմյարդաբանական դիսպանսերին, Վանաձորի ծերատանը, Վանա-

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերուս,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

ծորի մանկատանը տրամադրված ֆինանսների վերաբերյալ:

Վանաձորի մանկատան մոնիթորինգի ընթացքում բացի վերը նշված մեթոդներից կիրառվել են նաև.

- **Ֆոկուսխմբային հարցումներ:** Հարցումներն իրականացվել են Վանաձորի մանկատանն ապրող 7-10 տարեկան երեխաների շրջանում: Յուրաքանչյուր խումբ կազմված է եղել 5-6 երեխայից: Հատուկ նշակված հարցերի միջոցով ուսումնասիրվել է երեխաների կարծիքը սննդի, մանկատանը նրանց կենսապայմանների, նրանց նկատմամբ աշխատակազմի վերաբերմունքի վերաբերյալ:

- **Հարցումներ:** Վանաձորի մանկատան կենսապայմանների, երեխաների նկատմամբ մանկատանը կիրառվող պատասխանատվության միջոցների, կրթության և ազատ ժամանցի հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքումն իրականացվել է հատուկ նշակված հարցաթերթիկների միջոցով: Հարցումն իրականացվել է 11-16 տարեկան 37 սաների շրջանում:

Մանկատանը երեխաների բուժապասարկմանն անհրաժեշտ հնարավորությունների, այդ ոլորտում առկա խնդիրները պարզելու նպատակով հատուկ նշակված հարցաթերթիկների միջոցով հարցում է իրականացվել բուժքույրերի շրջանում:

Երեխաների առաջադիմության և կրթության ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է հանրակրթական դպրոցի ուսուցիչների շրջանում իրականացված հարցումների միջոցով:

# ՄԱՍ 1

## Մարդու իրավունքները Լոռու մարզային հոգեևյարդաբանական դիսպանսերում

Ընդհանուր տեղեկություններ Լոռու մարզային հոգեևյարդաբանական դիսպանսերի մասին

**Լ**ոռու մարզային հոգեևյարդաբանական դիսպանսերը գործում է 1955 թվականից: Այն գտնվում է քաղաքի կենտրոնի հարավային հատվածում, բնակելի տների և ծննդատան հարևանությամբ, ոչ աղմկոտ թաղամասում: Դիսպանսերի զբաղեցրած տարածքն ամբողջությամբ պարսպապատված է:

Դիսպանսերի բակը խնամված է, կան պտղատու ծառեր, ծաղիկներ, նստարաններ: Մեծ ուշադրություն է հատկացվում բակի մաքրությանը: Շենքը գործում է 1960թ-ից, վերջին անգամ վերանորոգվել է 1995թ-ին Համաշխարհային բանկի տրամադրած ֆինանսական միջոցներով:

Լոռու մարզային հոգեևյարդաբանական դիսպանսերի շենքը երկհարկանի է, ունի նաև ներքնահարկ:

Շենքի նկուղային հարկում տեղակայված է խոհանոցը, պահեստը, լողասենյակը, վճարատունը, տնտեսուհու սենյակը, որտեղ կատարվում են արդուկման աշխատանքները, նաև կարի թերապիայի սենյակը: Շենքի նկուղային հարկ կարող ենք մտնել դրսից, նաև հաստատության ներսից՝ առաջին հարկից: Շենքի առաջին հարկ կարելի է մտնել երկու կողմից:

Առաջին հարկում տեղակայված են աշխատակիցների աշխատասենյակները: Հոգեկան խանգարումով տառապող անձանց ընդունում, հետազոտում և փխտորոշում են այստեղ:

Առաջին հարկը շատ մաքուր է, լուսավոր: Այստեղ գտնվում է սպասասրահը, որտեղ տեղադրված են նոր, գեղեցիկ բազմոցներ, սեղաններ՝ շրջապատված բազմաթիվ բնական և արհեստական ծաղիկներով:

Երկրորդ հարկում՝ բաժանմունքում, բուժում են ստանում հոգեկան խանգարումով տառապող անձինք: Բաժանմունք բարձրալու համար պետք է ստանալ նախ տնօրենի թույլտվությունը:

Բաժանմունք բարձրանում են առաջին հարկից՝ աստիճաններով, որոնց սկզբնա-

Լոռու մարզային  
հոգեկայրաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

մասուն տեղադրված է զանգի կոճակը: Կոճակը սեղմելուց հետո հերթապահ սանի-  
տարը բացում է փայտե դուռը, որով առանձնացված բաժանմունքը, և ներս թող-  
նում:

Լոռու մարզային հոգեկայրաբանական դիսպանսերոււմ հիվանդանոցային բուժում  
են ստանում հոգեկան խանգարումով տառապող անձինք, ինչպես նաև թմրանյու-  
թից, ալկոհոլային միջոցներից կախվածություն ունեցող անձինք:

Յոգեկան խանգարումով տառապող անձի  
հոգեբուժական ստացիոնար հոսպիտալացումը եւ  
հոգեբուժական ստացիոնարից հիվանդի  
դուրսագրումը

**«Հոգեկան խանգարումով տառապող անձանց պաշտպանության և հոգեբուժական  
օգնության բարելավման մասին» ՄԱԿ-ի 1991թ.-ի 46/119 բանաձևի 4-րդ սկզբունքի  
1-ին կետի համաձայն՝ հոգեկան հիվանդության վերաբերյալ անձին փխտորոշումը  
տրվում է սահմանված միջազգային բժշկական չափանիշներին համապատաս-  
խան:**

Նույն փաստաթղթի 4-րդ կետի համաձայն՝ նախկինում հիվանդի բուժվելու կամ  
հոսպիտալացման մասին տեղեկությունները չեն կարող ինքնըստինքյան ներկա-  
յում կամ ապագայում հոգեկան հիվանդության առկայության մասին փխտորոշում  
կայացնելու հիմք ծառայել:

**ՀՀ «Հոգեբուժական օգնության մասին» օրենքի** համաձայն՝ հոգեկան խանգարու-  
մով տառապող անձ է համարվում հոգեկան հիվանդության հետևանքով հուզեբու-  
ժական օգնություն ստացող կամ այդ օգնության կարիք ունեցող անձը:

Նույն օրենքի համաձայն՝ հոգեբուժական օգնությունն իրականացվում է հիվանդա-  
նոցային և արտահիվանդանոցային կարգով:

Հոսպիտալացումը հոգեկան խանգարումով տառապող անձի՝ հոժարական եւ ոչ  
հոժարական (հարկադիր) ձեւերով ընդունումն է հոգեբուժական հաստատություն:

**«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համա-  
ձայն՝ հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կատարվում է նրա կամ  
նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա, բացառությամբ  
սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:**

**Նույն հոդվածի 3-րդ կետով՝** հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը  
կարող է իրականացվել առանց նրա կամ նրա օրինական ներկայացուցչի համա-  
ձայնությամբ՝ միայն օրենքով նախատեսված բժշկական բնույթի հարկադրական  
միջոցների կիրառման և ոչ հոժարական (հարկադիր) հոսպիտալացման դեպքե-  
րում:

**Նույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝** հոգեկան խանգարումով տա-  
ռապող անձը կամ նրա օրինական ներկայացուցչին իրավունք ունի հրաժարվելու  
առաջարկված բուժօգնությունից կամ դադարացնելու այն, բացառությամբ սույն օ-  
րենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի:

3-րդ կետով բուժօգնություն ստանալուց հրաժարվելու և բուժման դադարեցման  
հետ կապված հնարավոր հետևանքների մասին տեղյակ պահելու փաստը արձա-  
նագրվում է բժշկական փաստաթղթերում՝ բուժօգնությունից հրաժարվող անձի  
կամ նրա օրինական ներկայացուցչի և հոգեբույժի ստորագրությամբ:

18-րդ հոդվածի համաձայն՝ հոգեբուժական ստացիոնար հոսպիտալացման հիմք է  
անձի հոգեկան խանգարման առկայությունը և բժիշկ-հոգեբույժի ստացիոնար հե-  
տազոտության կամ բուժման մասին եզրակացությունը, ինչպես նաև Հայաստանի  
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հոգեբուժական փոր-

ծաքննությունը իրականացնելու անհրաժեշտությունը:

21-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հոգեբուժական ստացիոնարից հիվանդի դուրսգրումը կատարվում է նրա առողջացման և հոգեկան վիճակի բավարար լինելու դեպքում, եթե վերացել է հետագա ստացիոնար բուժման կարիքը կամ եթե ավարտվել են հետազոտման կամ փորձաքննության ժամկետները:

2-րդ կետով՝ հոգեբուժական ստացիոնարում հոժարակամ կարգով գտնվող հիվանդի դուրսգրումը կատարվում է հոգեբույժի եզրակացության հիման վրա կամ հիվանդի պահանջով, բացառությամբ այն դեպքերի, երբ հիվանդը վտանգ է ներկայացնում շրջապատի համար:

Հիվանդանոցային օգնության իրականացումը և սոցիալական պաշտպանությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծում է հիվանդանոցային եւ արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն իրականացնող կազմակերպություններ՝ ծերունիների, մեծահասակների, դեռահասների եւ մանուկների համար:

**Ըստ ՀՀ կառավարության «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների մասին» 1999թ. ապրիլի 3-ի թիվ 199 որոշման**՝ բնակչության անվճար հիվանդանոցային օգնությունն ընդգրկում է հոգեկան խանգարումով տառապող անձանց բուժումն ու խնամքը: Լոռու մարզային հոգեկենդանաբանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձինք հիվանդանոցային բուժում են ստանում 24 օր: ՀՀ կառավարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ մեկ անձի համար հոգեկենդանաբանական դիսպանսերին տրամադրվում է օրական 4600 դրամ:

## Մնուևնդ

### Օրենսդրության վերլուծություն

**Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածով**՝ նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդանության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ ապահովելու իրավունք:

Հոգեկան խանգարումով տառապող անձանց բուժման համար հատկացված հաստատություններում սնունդ տրամադրելու համար հատուկ կարգ ՀՀ իրավական դաշտով մշակված չէ:

Ըստ հոգեկենդանաբանական դիսպանսերի տնօրենի՝ յուրաքանչյուր հիվանդին օրական հատկացվող 4600 դրամից օրվա սննդի համար ծախսվում է 400-500 դրամ:

Լոռու մարզային հոգեկենդանաբանական դիսպանսերում սնունդ տրամադրվում է օրական 3 անգամ՝ նախաճաշ, ճաշ և ընթրիք: Ճաշացանկը կազմվում է հաշվապահի, ավագ բուժքրոջ և տնօրենի կողմից՝ ամեն օրվա համար՝ հաշվի առնելով հիվանդների քանակը:

**Նախաճաշի, ճաշի և ընթրիքի համար** սահմանված ռեժիմ բաժանմունքում փակցված չկա: Թեև, ըստ բուժակների, եղել է, սակայն հոգեկան խանգարումով տառապող անձինք պոկել են, հայտնի էլ չէ, թե երբ: Նորը չի փակցվել:

Նախաճաշի, ճաշի և ընթրիքի ժամերի մասին հոգեկան խանգարումով տառապող

Լոռու մարզային  
հոգեկայանի  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

անձանց պաշտոնապես դիսպանսերում չեն տեղեկացնում: Շատերը դրա մասին գիտեն, քանի որ առաջին անգամը չէ, որ բուժում են ստանում Լոռու մարզային հոգեկայանի դիսպանսերում, նորերն էլ դրա մասին իմանում են իրենց նախածեղծությամբ. «Ես նայել եմ ժամացույցին ու հասկացել, որ դա ճաշի ժամն է», - նշել է հիվանդներից մեկը:

Ըստ աշխատակիցների՝ նրանք, ովքեր չեն կարողանում ինքնուրույն սնվել, օգնում են սանիտարները կամ բուժակները:

Սննդի պատրաստման և տրամադրման համար պատասխանատու են խոհանոցն ու բուժետը: Խոհանոցը գտնվում է ներքնահարկում, որտեղ պատրաստվում է միայն նախաճաշին և ճաշին տրվող սնունդը: Պատրաստի կերակուրը բարձրացնում են 2-րդ հարկ՝ բաժանմունք: Ըստ բուժետի աշխատողի՝ սնունդը բաժանմունք բարձրացնում են հիմնականում սանիտարները, երբեմն էլ հոգեկան խանգարումով տառապող անձինք:

Մեր դիտարկումների ընթացքում, սակայն, սնունդը հիմնականում տեղափոխել են խոհանոցի աշխատողը և հոգեկան խանգարումով տառապող անձինք: Վերջիններս էլ երբեմն դժգոհել են այդ աշխատանքից:

Բուժետը գտնվում է բաժանմունքում, որտեղից էլ սնունդը տրամադրվում է հոգեկան խանգարումով տառապող անձանց:

Նախաճաշը տրամադրվում է 9:00-ին, ճաշը՝ 14:00-ին, իսկ ընթրիքը՝ 19:30-ին: Նրանք, ովքեր ուշանում են նախաճաշից, նախաճաշում են սահմանված ժամից հետո, առանձին, բուժետի աշխատողը հետո է տաքացնում նրանց բաժինը: Սակայն ըստ հոգեկան խանգարումով տառապող անձանց՝ լինում են դեպքեր, երբ ստիպված սառն են ուտում:

Նախաճաշը հիմնականում կազմում է եփած ձուն կամ ձվածեղը, 2 կտոր հացը, ջեմը, թեյը: «Թեյը շատ անգույն է ու անհամ, շաքարավազ գրեթե չեն լցնում», - նշել է հոգեկան խանգարումով տառապող անձանցից մեկը: Ըստ հոգեկան խանգարումով տառապող անձանց՝ նախաճաշին երբեմն ձվի փոխարեն տրամադրվում է փլավ, հազվադեպ կաթնամթերք՝ կաթնաշոռ, կարագ, թթվասեր, պանիր:

Ճաշին հիմնականում տրվում է ապուր /հարիսա, ոսպով, ձավարով, բրնձով, ոլոռով/, 2 կտոր հաց, հյութ, որը պատրաստվում է Լոռու մարզային հոգեկայանի դիսպանսերի բակի պտղատու ծառերից հավաքված խնձորով, տանձով, ձմռանը երբեմն տրվում է կիսել:

Ընթրիքը հիմնականում կազմում է թեյը, բուլկին: Ըստ հիվանդների՝ հազվադեպ փլավ է տրվում կամ կաթնամթերք՝ կարագ, թթվասեր և այլն:

Մրգեր, բացի տանձից ու խնձորից, ինչպես նաև բանջարեղեն, ըստ հոգեկան խանգարումով տառապող անձանց, դիսպանսերում տրվում է խիստ հազվադեպ: Ամռանը տալիս են բակի ծառերից հավաքած տանձ և խնձոր, հոգեկան խանգարումով տառապող անձանցից մեկը հիշում է, որ մեկ անգամ էլ ձմերուկ են տվել, մյուսն էլ հիշում է, որ սալոր են տվել:

Բանջարեղեն, ըստ աշխատողի, մանավանդ ամռանը դիսպանսերում շատ է լինում, բայց հոգեկան խանգարումով տառապող անձինք նման բան չեն հիշում: «Լուլիկի ու վարունգի աղցան տվել են մայիսին», - նշում է հիվանդներից մեկը:

Հոգեկայանի դիսպանսերում տրամադրվող սննդի չափաբաժինը բոլորի համար նույնն է և չափաբաժինից դուրս հավելյալ սնունդ տրամադրելու հնարավորություն չկա: «Միայն երբ հազվադեպ սնունդ է ավելանում կամ որևէ մեկը հրաժարվում է իր չափաբաժնից, տալիս են նրանց, ովքեր սոված են մնացել, կամ էլ աշխատողներից մեկին», - նշում են աշխատողները: Հոգեկան խանգարումով տառապող անձանց մի մասը բողոքում է, որ սննդի տրամադրվող չափաբաժինը չի բավականացնում և շատ դեպքերում քաղցած են մնում: «Տրամադրվող սնունդը

բավարար է գոյությունը պահպանելու տեսակետից, սակայն ամորթակի ու կշտանալու պահանջի տեսանկյունից՝ ոչ», -կարծում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանցից մեկը:

Լոռու մարզային հոգեհարգաբանական դիսպանսերում հիվանդանոցային բուժում ստացող 13 անձանցից, որոնց հետ մենք հարցազրույց ենք անցկացրել, 10-ի համար հարազատները սնունդ են բերում դրսից, որը պահվում է ինչպես իրենց մոտ, այնպես էլ բուֆետում. հատուկ պահարանի վրա սնունդը դասավորվում է ըստ անուն ազգանունների: Լոռու մարզային հոգեհարգաբանական դիսպանսերի տնօրենը ևս նշում է, որ հոգեկան խանգարումով տառապող անձնաց համար հարազատները սնունդ են բերում: «Հոգեհարգաբանական դիսպանսերում սննդի կալորիականությունը հաշվի չի առնվում, ինչքան գումարը բավականացնում է, այնքան էլ տալիս ենք», - նշում է տնօրենը:

Լոռու մարզային հոգեհարգաբանական դիսպանսերը, ըստ հոգեկան խանգարումով տառապող անձանց, չի ապահովում նաև սննդի բազմազանություն և հավելյալ սննդի հնարավորություն: «Եթե տվյալ կերակուրը չենք սիրում, կամ նույնիսկ որևէ հիվանդության դեպքում տվյալ կարգի սնունդը հակացուցված է, ստիպված ենք ուտել», - նշում է նրանցից մեկը:

Դիսպանսերում դիետիկ սնունդ տրամադրելու հարցում նույնիսկ աշխատողներն են տարակարծիք. մի մասը համարում է, որ դիետիկ սնունդ անհրաժեշտության դեպքում տրամադրվում է, մի մասի կարծիքով էլ չի տրամադրվում:

Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը նշում է. «Ես դիսպանսերի աշխատակիցներին «քաղցր- մաղցր» բաներ են տալիս, նրանց «լավ» են նայում, որ իրենք էլ ինձ «լավ նայեն»: Նրանք էլ անհրաժեշտության դեպքում տաքացնում են դրսից բերած ճաշերը, նաև պատրաստում սուրճ և թեյ: Այնուամենայնիվ, բուֆետի աշխատողները սուրճ պատրաստում են յուրաքանչյուրի խնդրանքի դեպքում:

Նրանք, ովքեր սննդից չեն դժգոհում, նշում են, որ դիսպանսերում, այնուամենայնիվ, երբեք չեն կերել իրենց սիրելի ուտելիքները՝ բանան, խաղող, խոզի միս և այլն:

Աշխատողներին դիսպանսերը սնունդ չի տալիս, միայն հազվադեպ թույլ է տալիս տաքացնել:

Հոգեկան խանգարումով տառապող անձինք դիսպանսերում խմելու ջրից օգտվելու մշտական հնարավորություն ունեն: Նրանք խմելու ջուրը շշերով հավաքում են զուգարանի ծորակից և պահում իրենց հիվանդասենյակում: Ջրի բաք է տեղադրված և եթե ջուրը չի գալիս, բաքի ջրից են օգտվում:

Բուժակներից մեկը նշել է սակայն, որ ջուրը շատ պղտոր է ու ջրիմուռներ կան, և աշխատողները այդ ջուրը ոչ թե խմելու, այլ միայն տեխնիկական նպատակով են օգտագործում:

Այսպիսով, ՀՀ իրավական ակտով սահմանված չէ հոգեհարգաբանական դիսպանսերում (հոգեբուժարաններում) մեկ հիվանդի համար սննդի և այլ կենսական անհրաժեշտ ապրանքների չափանիշները:

Պետության կողմից սննդի համար հատկացված ֆինանսավորումը չի բավարարում դիսպանսերում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց տրամադրվող սննդի անհրաժեշտ քանակին:

Մենյուն կազմելիս չի ապահովվում տրամադրվող սննդի համապատասխան կալորիականությունը, բազմազանություն և հավելյալ սննդի հնարավորություն:

Սննդի տեսականին աղքատիկ է և միանման:

Խմելու ջրի որակը անբավարար է:

Լոռու մարզային  
հոգեկենտրոնաբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

Օրենսդրության վերլուծություն

**Մարդու իրավունքների հանդնդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածը** սահմանում է՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ ապահովելու իրավունք:

**ՀՀ «Հոգեբուժության մասին» օրենքի 6-րդ հոդվածն** անդրադառնում է հոգեկան խանգարումով տառապող անձանց կենսապայմաններին, մասնավորապես 4-րդ կետում նշվում է, որ հոգեկան խանգարումով տառապող անձինք իրավունք ունեն ունենալու եւ ձեռք բերելու առաջին անհրաժեշտության իրեր ու պարագաներ, օգտվելու անձնական հագուստից:

Յիմնական շարադրանք

Աշխատակիցների խոսքերով՝ **Լոռու մարզային հոգեկենտրոնաբանական դիսպանսերը** հոգեկան խանգարումով տառապող անձանց **անվճար տրամադրում է ընդհանուր օգտագործման համար նախատեսված հիգիենայի պարագաներ՝ օճառ, զուգարանի թուղթ, սրբիչ**: Նույնը հավաստում են նաև հոգեկան խանգարումով տառապող անձանցից մի քանիսը, նրանցից մեկը, սակայն, նշում է. «Ես 200 դրամ եմ վճարում 1 ամբողջ օճառի համար, այլապես օճառի շատ փոքր կտորը կստանամ»: Լոռու մարզային հոգեկենտրոնաբանական դիսպանսերի տնօրենը բացատրում է, որ օճառը կտորներով են տալիս՝ ելնելով անվտանգության նկատառումից:

Աշխատողներից մի մասի կարծիքով՝ տղամարդկանց համար նախատեսված հիգիենայի պարագաները հոգեկան խանգարումով տառապող անձինք վերցնում են սանիտարներից, ամեն անգամ, երբ անհրաժեշտ է և դա բացատրում են նրանով, որ տղամարդիկ կարող են փչացնել այդ պարագաները, եթե դրանք մշտապես դրված լինեն սանհանգույցում: Իսկ աշխատողներից ոմանք էլ պնդում են, որ հիգիենիկ պարագաները միշտ դրված են սանհանգույցներում:

Կանանց սանհանգույցներում նախատեսվում է ընդհանուր հիգիենայի համար անհրաժեշտ պարագաների մշտական առկայությունը: Այնուամենայնիվ, մեր դիտարկումների ընթացքում կանանց սանհանգույցում հիգիենայի պարագաներից առկա է եղել միայն սրբիչը:

Լոռու մարզային հոգեկենտրոնաբանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց բուժման համար նախատեսված բաժանմունքում գործում է երկու առանձին սանհանգույց՝ տղամարդկանց և կանանց համար: Սանհանգույցները վերանորոգված են, մաքուր: Տղամարդկանց սանհանգույցում մի փոքր հատված՝ առանձնացված է ծխող տղամարդկանց համար, որտեղ կա նաև էլեկտրական օդափոխիչ: Բաժանմունքի մաքրությամբ զբաղվում են հոգեկենտրոնաբանական դիսպանսերի հատուկ աշխատակիցները՝ սանիտարները: Երբեմն, ըստ հոգեկան խանգարումով տառապող անձանց, այդ աշխատանքն իրենց ցանկությամբ իրենք են կատարում:

**Բաժանմունքում տաք ջուր ընդհանրապես չի լինում, իսկ սառը ջուրը, գրաֆիկի համաձայն, լինում է ժամը 19:00-ից հետո**: Սահմանված գրաֆիկից դուրս՝ հոգեկան խանգարումով տառապող անձինք օգտագործում են բաքում հավաքվող ջուրը:

Բացի այդ, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք իրենց սենյակներում շշերով ջուր են հավաքում:

Հոգեկենտրոնաբանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող ան-

ծանց համար նախատեսված է **1 ընդհանուր լողասենյակ /բաղնիք/**: Լողասենյակը ոչ բարվոք վիճակում է և վերանորոգման խիստ կարիք ունի: Այն գտնվում է առաջին հարկում և ընդհանուր է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար: Տղամարդիկ և կանայք լողանում են տարբեր ժամերի:

Լողասենյակում առանձնացված է հանդերձասենյակ՝ 1 նստարանով և կախիչով: Հիմնական հատվածում տեղադրված է 4 ցնցուղ, որոնք դեմ-դիմաց են, բայց միայն զուգահեռ ցնցուղներն են առանձնանում միջնապատերով: Ըստ աշխատողի մշտապես աշխատում է միայն մեկ ցնցուղը, երկրորդ ցնցուղն օգտագործվում է, եթե ջրի հոսքն ուժեղ է:

Լոռու մարզային հոգեկենսաբանական դիսպանսերում սահմանված կարգով հոգեկան խանգարումով տառապող անձինք **պետք է լողանան շաբաթը 1 անգամ**: Սակայն հոգեկան խանգարումով տառապող անձանցից մշում են, որ լողանում են 10-15 օրը մեկ անգամ, 2 հոգով՝ 5-10 բոպեով: Հատուկ աշխատակիցը հսկում է նրանց լողանալու ընթացքում, օգնում ինքնուրույն լողանալ չկարողացող անձանց:

Սահմանված գրաֆիկից դուրս՝ հոգեկան խանգարումով տառապող անձինք կարող են լողանալ անհրաժեշտության և ցանկության դեպքում: «Եթե ուզում ես լողանալ, պետք է աշխատողներին «լավ նայես»՝ «քաղցր-մաղցր բաներ տաս», -ասում են հոգեկան խանգարումով տառապող անձանցից ոմանք:

Լողանալու համար հոգեկենսաբանական դիսպանսերը տրամադրում է ընդհանուր 1 օճառ, անհատական սրբիչ, սանր, սափրվելու համար կես ածելի, հազվադեպ նաև լողանալու սպունգ:

Հոգեկան խանգարումով տառապող անձանց Լոռու մարզային հոգեկենսաբանական դիսպանսերը տրամադրում է սպիտակեղեն և ըստ անհրաժեշտության հագուստ, քանի որ հոգեկան խանգարումով տառապող անձինք իրենց հետ հագուստ են բերում: Տրամադրվող հագուստը, սպիտակեղենը ըստ աշխատակիցների, իրենք բերում են իրենց տներին: «Պետության կողմից տրամադրվող գումարը բավարար չէ՝ հոգեկան խանգարումով տառապող անձանց համար հագուստներ գնելու», - ասում է նրանցից մեկը: Գնում են միայն ներքնաշորեր, երբեմն նաև հողաթափեր:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն հոգեկենսաբանական դիսպանսերի սանիտարահիգիենիկ նվազագույն պայմանների չափորոշիչները:

Լողանալու հաճախականությունը ավելին է, քան շաբաթը մեկ անգամ (10-15 օրը մեկ), միաժամանակ լողանալու տևողությունը խիստ կարճ է և լողանում են մեկ ցնցուղով երկու հոգի:

Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ լողանալու թույլտվությունը երբեմն կախված է անձնակազմին նյութական պարգևատրում տալով:

Բավարար չէ հոգեկան խանգարումով տառապող անձանց հիվանդանոցային հագուստը:



Լոռու մարզային  
հոգեւոյարդաբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

**«Հոգեկան խանգարումով տառապող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման մասին» ՄԱԿ-ի 1991թ. 46/119 բանաձևի 13-րդ սկզբունքի 2-րդ մասով՝ հոգեբուժական հաստատությունում կյանքի պայմանները և իրադրությունը պետք է հնարավորինս մոտեցված լինեն համանման տարիքի անձանց կյանքի նորմալ պայմաններին:**

Հոգեկան խանգարումով տառապող անձանց հիվանդանոցային բուժման դեպքում հիվանդների կենսապայմանների վերաբերյալ ՀՀ ազգային օրենսդրությամբ չափորոշիչներ չկան սահմանված:

**Հոգեկան խանգարումով տառապող անձանց հիվանդանոցային բուժումն իրականացվում է հոգեոյարդաբանական դիսպանսերի երկրորդ հարկում, որը անվանում են բաժանմունք:**

Բաժանմունքում առանձնացված են կանանց և տղամարդկանց մասնաշենքերը, որտեղ կան համապատասխանաբար 4 և 5 հիվանդասենյակներ: Տղամարդկանց արգելվում է զնալ կանանց մասնաշենք, կանանց՝ տղամարդկանց: Տղամարդկանց և կանանց համար նախատեսված հիվանդասենյակներից մեկը վճարովի է, որը տարբերվում է մյուս հիվանդասենյակներից: Այստեղ կա մեկ մահճակալ, պահարան, հատակին գորգ է փռված, պատուհաններից վարագույրներ են կախված:

Մյուս հիվանդասենյակներն ունեն նույն կահավորանքը՝ ելնելով սենյակի մեծությամբ՝ 4-6 մահճակալ, 3 փոքր պահարաններ, որոնք չեն կողպվում, մի հիվանդասենյակում էլ պահարան ընդհանրապես չկա: Կանանց և տղամարդկանց մեկական հիվանդասենյակներում էլ գորգ է փռված: Բուժակների խոսքերով՝ եղել են դեպքեր, երբ բուժվող հիվանդների թիվը գերազանցել է մահճակալների թվին, այդ ժամանակ մահճակալներ են ավելացրել հիվանդասենյակներում, նույնիսկ միջանցքում: Սեղան, աթոռներ, օդափոխիչներ հիվանդասենյակներում չկան:

**Կան հիվանդասենյակներ, որոնք դռներ չունեն: Հոգեկան խանգարումով տառապող անձինք բողոքում են, որ դռների բացակայության պատճառով միջանցիկ քամի է փչում:**

Հոգեոյարդաբանական դիսպանսերի տնօրենը բացատրում է, որ դռները հանվել են անվտանգության համար, որպեսզի աշխատողները կարողանան ավելի արդյունավետ հսկել:

Հիվանդասենյակները ջեռուցվում են ընդհանուր համակարգով յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 15-ից, սակայն եղանակից կախված՝ հնարավոր է ավելի շուտ: Հոգեկան խանգարումով տառապող անձանց սենյակներում օդափոխիչներ չկան, պատուհանները չի թույլատրվում բացել, քանի որ վանդակաճաղեր չկան: Հոգեկան խանգարումով տառապող անձինք բողոքում են, որ օդը ծանր է լինում: Հոգեկան խանգարումով տառապող անձանցից մեկը դիմել է տնօրենին, որ լուսամուտներին վանդակաճաղեր տեղադրեն, և թույլատրեն բացել՝ սենյակներն օդափոխելու նպատակով: Խնդրանքը մերժվել է:

Հոգեկան խանգարումով տառապող անձինք սենյակի լույսերը միացնում են սենյակի դրսի մասից, ներսում համապատասխան հնարավորություն չկա:

Բաժանմունքում կա 2 մեկուսարան՝ մեկը նախատեսված է կանանց, մյուսը տղամարդկանց համար: Այս սենյակները միշտ փակ են լինում, և մենք այդպես էլ հնարավորություն չունեցանք դիտարկել այդ սենյակները:

Բաժանմունքում է գտնվում հոգեկան խանգարումով տառապող անձանց ժամանցի սրահը, որը ծառայում է նաև որպես ճաշարան և այցելությունների սենյակ:

Այս սենյակը կահավորված է սեղան-աթոռներով, բազմոցով, բազկաթոռներով, գորգով, հեռուստացույցով:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությունը հստակորեն չի սահմանում դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց կենցաղային նվազագույն պայմանները:

Դիսպանսերը կարող է միաժամանակ հիվանդանոցային բուժում իրականացնել առավելագույնը 35 հոգեկան խանգարումով տառապող անձանց: Եթե հոգեկան խանգարումով տառապող խնդիր ունեցող անձանց թիվը ավելանում է առաջանում են դժվարություններ, տեղավորում են միջանցքներում: Հիվանդասենյակները կահավորված չեն անհրաժեշտ գույքով (սեղան, աթոռ, պահարան, նաև օդափոխիչ):

Առանձնացված չեն ժամանցի սրահը, ճաշարանը և այցելությունների սենյակը: Հոգեկան խանգարումով տառապող անձինք հնարավորություն չունեն իրենց հարգատի հետ առանձին հանդիպելու:

### Ազատ ժամանցը, զբոսանքը, այցելությունները

#### Օրենսդրության վերլուծություն

Հոգեկան խանգարումով տառապող անձինք, ինչպես յուրաքանչյուր ոք ունեն հանգստի և ժամանցի իրավունք, ինչը սահմանվում է **Մարդու իրավունքերի հանդիսանուր հռչակագրի 24-րդ հոդվածով:**

Ըստ «Հոգեկան խանգարումով տառապող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման մասին» ՄԱԿ-ի 1991թ.-ի 46/119 բանաձևի 13-րդ սկզբունքի 1-ին կետի՝ հոգեբուժական հաստատությունում գտնվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի ճանաչվել որպես իրավունքի սուբյեկտ և ունենալ հետևյալ իրավունքները.

- մեկուսանալու իրավունք,
- հաղորդակցվելու իրավունք, որն իր մեջ ներառում է տվյալ հաստատության շրջանակներում այլ անձանց հետ շփվելու ազատություն մասնավորապես՝ հաղորդագրություն ուղարկելու և ստանալու ազատություն, որը ենթակա չէ գրաքննության,
- փաստաբանին կամ անձնական ներկայացուցչին առանձին ընդունելու իրավունք,
- ցանկացած խելամիտ ժամանակ այլ այցելուներ ընդունելու ազատություն,
- ունենալ փոստից, հեռախոսից, թերթերից, ռադիոյից և հեռուստատեսությունից օգտվելու հնարավորություն:

2-րդ կետով հոգեբուժական հաստատությունում կյանքի պայմանները և իրադրությունը պետք է ընդգրկեն.

- հանգստի և ժամանցի անցկացման հնարավորություն
- առօրյա կյանքի, շփման և ժամանցի համար անհրաժեշտ իրերի ձեռք բերման կամ գնման հնարավորություն:

Նմանատիպ սկզբունքներ ներառում է նաև ՀՀ ազգային օրենսդրությունը: ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք:

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ և 4-րդ մասերը հոգեկան խանգարումով տառապող անձանց համար նախատեսում են համապատասխանաբար այցելուների հետ հանդիպելու, թերթերի եւ լրագրերի միջոցով հաղորդակցվելու իրավունք:

Մարդու իրավունքները Լոռու մարզային հոգեկենդանաբանական դիսպանսերում

Լոռու մարզային հոգեկենդանաբանական դիսպանսերում հիվանդանոցային բուժում ստացող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք



Լոռու մարզային  
հոգեհարգաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

## Ազատ Ժամանցը

### Հիմնական շարադրանք

Լոռու մարզային հոգեհարգաբանական դիսպանսերոււմ հոգեկան խանգարումով տառապող անձանց համար օրվա ռեժիմով նախատեսվում են ազատ ժամեր՝ հեռուստացույց դիտելու, սեղանի խաղեր խաղալու համար: Օրվա ռեժիմը սահմանող փաստաթուղթը բաժանմունքում, որտեղ ամբողջ օրն անց են կացնում հոգեկան խանգարումով տառապող անձինք, փակցված չկա:

Ըստ հոգեկան խանգարումով տառապող անձանց՝ դրա մասին դիսպանսերոււմ իրենց պաշտոնապես չեն տեղեկացնում: Մի մասը լսում է հեռուստացույցի ձայնը ու այդպես հասկանում, որ հեռուստացույց դիտելու ժամն է: Հիվանդների խոսքերով՝ պայմանականորեն սահմանված ժամերից դուրս թույլատրվում է նարդի, շաշկի խաղալ, հեռուստացույց դիտել:

Հոգեկան խանգարումով տառապող անձինք ժամանցի սրահում հնարավորություն ունեն խաղալ նարդի, շախմատ, շաշկի, թղթախաղ, ինչպես նաև դիտել հեռուստացույց:

Ըստ հոգեկան խանգարումով տառապող անձանց մի մասի՝ հեռուստացույց կարելի է դիտել ժամը 16:00-ից, մյուսների կարծիքով՝ 17:00-ից մինչև ժամը 22:00-ը: Բուժակի հավաստմամբ, եթե հոգեկան խանգարումով տառապող անձինք հեռուստացույց դիտելու ցանկություն են հայտնում սահմանված ռեժիմից դուրս, նրանց թույլատրվում է: Հաճախ հեռուստացույց դիտել թույլատրվում է նաև ժամը 22:00-ից հետո:

Ժամանցի սրահում կա մեկ հեռուստացույց, ուստի տարբեր հեռուստաալիքներ դիտելու պատճառով հոգեկան խանգարումով տառապող անձանց միջև հաճախակի վեճեր են ծագում:

Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց ցանկության դեպքում գրքեր և թերթեր տնից հարազատներն են բերում: Դիսպանսերի աշխատակցի խոսքերով դիսպանսերի առաջին հարկում թերթեր են ստանում, որոնք անհրաժեշտության դեպքում բարձրացնում են բաժանմունք:

Դիսպանսերում նախկինում ռադիո է եղել, բայց հիմա չկա: «Ես ուզում էի ռադիո բերել, բայց աշխատակիցներն ասեցին, որ հիվանդները կջարդեն», -նշում է հոգեկան խանգարումով տառապող անձանցից մեկը:

## Այցելու թյուրևերը

### Հիմնական շարադրանք

Լոռու մարզային հոգեհարգաբանական դիսպանսերոււմ հոգեկան խանգարումով տառապող անձանց տեսակցություն սահմանված է ամեն օր 12:00-17:00-ը, շաբաթ օրը՝ 12:00-15:00-ն, կիրակի օրը այցելություններ չի թույլատրվում: Ըստ հոգեհարգաբանական դիսպանսերի տնօրենի կիրակի օրերին այցելություններ չի թույլատրվում, քանի որ բժիշկները չեն աշխատում, իսկ այցելությունների թույլտվությունը նրանք են տալիս: Տեսակցության համար նախատեսված է բաժանմունքի ժամանցի սենյակը:

Համապատասխան թույլտվություն ունեցող այցելության եկած անձանց բուժակը կամ սանիտարը ներս են թողնում՝ հանդիպելու իրենց հարազատին՝ տեսակցության ամբողջ ընթացքում հեռվից հսկելով նրանց: Բաժանմունք բարձրանալ չի թույլատրվում անչափահաս երեխաներին: Եթե այցելուները ցանկություն են հայտնում, հանդիպում կազմակերպել դրսում՝ հաշվի առնելով հիվանդի հիվանդության

սրության աստիճանը թույլատրվում է մոտ 10-15 րոպեով:

## Չբոսանքը

### Յիմնական շարադրանք

Լոռու մարզային հոգեյարդարանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց համար սահմանված **ռեժիմի համաձայն`** դիսպանսերի բակում **նախատեսված է զբոսանք օրական 3 անգամ:** Չբոսանքի ժամանակ նրանց ուղեկցում են բուժակները և սանիտարները: Ըստ աշխատողների` զբոսանքը տևում է 0,5-ից 2 ժամ, զբոսանքի տևողությունը կախված է նաև հոգեկան խանգարումով տառապող անձանց ցանկությունից: Չմռանը հոգեկան խանգարումով տառապող անձանց տաք խալաթներ են տրամադրում:

**Իրականում հոգեկան խանգարումով տառապող անձինք մեր ուսումնասիրությունների ընթացքում նշել են, որ զբոսնում են հազվադեպ` լավ եղանակներին օրը մեկ անգամ, այն էլ 20-30 րոպեով:** Հոգեկան խանգարումով տառապող անձանցից մեկը հիշում է, որ իրենց վերջին անգամ զբոսնելու են տարել մեկ ամիս առաջ:

Կախված հիվանդության սրության աստիճանից` զբոսանքի ժամանակ հոգեկան խանգարումով տառապող անձանց ուղեկցում են կամ ոչ: Յիմնական ուղեկցողներ հանդիսանում են սանիտարները կամ բուժակը: Թույլ սրության հիվանդության առկայության դեպքում թույլատրվում է հոգեկան խանգարումով տառապող անձանց զբոսնել միայնակ, նրանց նկատմամբ հսկողությունն իրականացվում է վերևից, այդ հիվանդների ցուցակը որոշում է բուժող բժիշկը գլխավոր բժշկուհու հետ: Եթե լինում են հոգեկան խանգարումով տառապող անձինք, ովքեր զբոսնելու ցանկություն չեն ունենում, նրանց հետ բաժանմունքում մնում է սանիտարկան: Եղել են դեպքեր, երբ հոգեկան խանգարումով տառապող անձանցից որևէ մեկը ցանկություն է հայտնել զբոսանքի գնալ, սակայն չեն թույլատրել: Հետո թույլատրել են բակ իջնել` բակն ավելելու համար»,-նշել է նրանցից մեկը:

Այսպիսով, դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձինք հնարավորություն չունեն` օգտվելու լրատվական միջոցներից կամ սահմանափակ է դրանց մատչելիությունը:

Օրվա ռեժիմը հաստատող փաստաթուղթը փակցված չէ և հասանելի չէ հոգեկան խանգարումով տառապող անձանց:

Հեռուստահաղորդումներ դիտելու համար դիսպանսերն ունի մեկ հեռուստացույց, որի հետևանքով առաջանում են վեճեր հոգեկան խանգարումով տառապող անձանց միջև:

Դիսպանսերը չի ապահովում հոգեկան խանգարումով տառապող անձանց ամենօրյա զբոսանքը:

## Անձնակազմի վերաբերմունքը

### Օրենսդրության վերլուծություն

**«Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման մասին» ՍՍԿ-ի 1991թ. 46/119 բանաձևի** 1-ին սկզբունքի 2-րդ կետով նախատեսվում է` հոգեկան հիվանդությամբ տառապող կամ այդպիսին համարվող բոլոր անձանց պետք է վերաբերվել մարդասիրաբար` հարգելով` մարդկային արժանապատվությունը:

**«Հոգեկան խանգարումով տառապող անձանց պաշտպանության և հոգեբուժական**

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

**«Օգնության բարելավման մասին»** ՄԱԿ-ի 1991թ.-ի 46/119 բանաձևի 9-րդ սկզբունքի 3-րդ կետի համաձայն՝ հոգեբուժական օգնությունը տրամադրվում է այդ ոլորտում աշխատող մասնագետների համար սահմանված էթիկայի նորմերի համաձայն, ներառյալ միջազգայնորեն ճանաչված նորմերը:

Ըստ 12-րդ սկզբունքի 1-ին կետի՝ հոգեբուժական հաստատությունում գտնվող հոգեկան խանգարումով տառապող անձին հոսպիտալացումից հետո ամենակարճ ժամանակահատվածում իր համար հասկանալի ձևով և լեզվով տեղեկացնում են միջազգային և ազգային օրենսդրությամբ սահմանված իր բոլոր իրավունքներին՝ բացատրելով այդ իրավունքները և դրանց իրականացման կարգը: Եթե հոգեկան խանգարումով տառապող անձն ի վիճակի չէ հասկանալ, նրա իրավունքների մասին տեղեկացնում են նրա օրինական ներկայացուցչին:

**«Հոգեկան խանգարումով տառապող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման մասին»** ՄԱԿ-ի 1991թ.-ի 46/119 բանաձևի 11-րդ սկզբունքի 11-րդ կետի համաձայն՝ հոգեկան խանգարումով տառապող անձի ֆիզիկական զսպումը կամ հարկադիր մեկուսացումը իրականացվում են միայն հոգեբուժական հաստատության պաշտոնապես հաստատված ընթացակարգերին համապատասխան և միայն այն դեպքում, երբ դա հանդիսանում է հոգեկան խանգարումով տառապող կամ այլ անձանց անմիջականորեն կամ անխուսափելիորեն հասցվելիք վնասը կանխարգելելու միակ հնարավոր միջոցը: Դրա տևողությունը չի կարող գերազանցել այդ նպատակի համար խիստ անհրաժեշտ ժամանակահատվածը: Ֆիզիկական զսպման կամ հարկադիր մեկուսացման բոլոր դեպքերը, դրանց կիրառման հիմնավորումները, դրանց բնույթն ու տևողությունը պետք է գրանցվեն հոգեկան խանգարումով տառապող անձի հիվանդության պատմությունում: Հոգեկան խանգարումով տառապող անձը, որի նկատմամբ կիրառվում է զսպում կամ մեկուսացում, պետք է պահվի մարդկային պայմաններում, ապահովվում է նրա նկատմամբ խնամքը, ինչպես նաև հանգստանալից և մշտական հսկողություն որակավորված բուժաշխատողների կողմից: Հոգեկան խանգարումով տառապող անձանց անձնական ներկայացուցիչը, եթե նա կա, և դա տեղին է, անհապաղ տեղեկացվում է հոգեկան խանգարումով տառապող անձի ֆիզիկական զսպման կամ հարկադիր մեկուսացման ցանկացած դեպքի մասին:

**«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի»** 7-րդ հոդվածով՝ նախատեսվում է՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

**«Մարդու իրավունքների հանրնդիանուր հռչակագրի»** 5-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային, իր արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի:

**Եվրոպական կոնվենցիայի 32-րդ հոդվածը** նույնպես նախատեսում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Հայաստանը 2002թ-ին վավերացրել է նաև **«խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիան, ինչպես նաև այդ կոնվենցիայի Թիվ 1 և Թիվ 2 արձանագրությունները:**

**ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածով՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:**

**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի գ)** ենթակետով սահմանվում է, որ բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի արժանանալու հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից: Իսկ նույն օրենքի 19-րդ հոդվածի է) ենթակետը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին պարտավորեցնում է հոգատար և հարգալից վերաբերմունք ցուցաբերել հիվանդների նկատմամբ:

**«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով** հոգեբուժական հիվանդություններով տառապող անձանց հոգեբուժական օգնությունը երաշխավորվում է օրենքի, մարդասիրության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների հիման վրա, 3-րդ կետով՝ հիվանդանոցային բժշկական հաստատությունում բուժվող հոգեկան խանգարում ունեցող անձինք իրազեկվում են իրենց իրավունքների, հոգեբուժական հաստատությունում գտնվելու նպատակի և պատճառների մասին՝ դրանց վերաբերյալ նշում կատարելով բժշկական փաստաթղթերում:

**Նույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետով՝** բժիշկը պարտավորվում է հոգեկան խանգարումով տառապող անձին կամ նրա օրինական ներկայացուցչին տեղեկություններ տրամադրել հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տևողության, ինչպես նաև կողմնակի ազդեցության և ակնկալվող արդյունքների մասին: Դրանց վերաբերյալ բժշկական փաստաթղթերում (ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում) կատարվում է գրանցում:

**Յիմնական շարադրանք**

Լոռու մարզային հոգեկենդանաբանական դիսպանսերում բուժակներն ու սանիտարներն աշխատում են 24 ժամ՝ առավոտյան 9:00-ից մինչև հաջորդ առավոտյան 9:00-ն:

Սահմանված աշխատանքային պարտականությունների համաձայն՝ բուժակներն իրենց հերթապահության ամբողջ ընթացքում պետք է ներկա գտնվեն բաժանմունքում, հետևեն հոգեկան խանգարումով տառապող անձանց օրվա ռեժիմի կատարմանը, անհրաժեշտ ցուցումներ տան սանիտարներին:

Սանիտարները անմիջականորեն խնամում են հոգեկան խանգարումով տառապող անձանց, հետևում են նրանց անձնական հիգիենային:

Հոգեկան խանգարումով տառապող անձանց հետ բուժող բժիշկն առնչվում է ըստ անհրաժեշտության: Հոգեկան խանգարումով տառապող անձանց մասին տեղեկատվությունը նա հիմնականում ստանում է հերթապահ բուժակից, բացի այդ, հոգեկենդանաբանական դիսպանսերում սահմանված կարգի համաձայն՝ ամեն օր բժիշկները տնօրենի աշխատասենյակում իրականացնում են հոգեկան խանգարումով տառապող անձանց բուժզննում:

**Բռնուղյալ ու նը**

Ըստ հոգեկան խանգարումով տառապող անձանց հաղորդման՝ իրենց նկատմամբ **Լոռու մարզային հոգեկենդանաբանական դիսպանսերում բուժակների և սանիտարների կողմից բռնություններ են կիրառվում:**

Հոգեկան խանգարումով տառապող անձանց ծեծում են, թողնում առանց սննդի և ջրի: Թեև մեր ուսումնասիրության ընթացքում նրանց վրա բռնության հետքեր չեն նկատվել: Աշխատակիցների մեծ մասը նույնիսկ մեր ներկայությամբ հոգեկան խանգարումով տառապող անձանց դիմել են խիստ անհարգալից, կոպիտ, բարձր տոնով՝ «Լա գնացեք ձեր տեղը, արա՛»: Մեր դիտարկումների ընթացքում պարզվել է, որ աշխատակիցները հիվանդասենյակ մտնելիս դուռը չեն թակում, հաշվի չեն առնում հիվանդասենյակում կանայք են, թե տղամարդիկ:

Հոգեկան խանգարումով տառապող անձինք հարցազրույցների ժամանակ սանիտարներին և բուժակներին բնութագրելիս նշել են. **«էստեղ բոլոր աշխատողներն էլ սամբո գիտեն»:**

Ըստ հիվանդների՝ դեպքեր են եղել, երբ **մի քանի աշխատող միաժամանակ հարձակվել են հոգեկան խանգարումով տառապող անձի վրա, նրան գետին տապալել և հարվածել ոտքերով:** Մեկ այլ դեպքում բուժակն ապտակել է հոգեկան խանգարումով տառապող անձին:

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերուս,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

րունով տառապող անձին: «Եթե իրար հետ կռվում եմք, մեզ վախեցնում են, ցույց տալիս և սպառնում, թե զսպաշապիկ կհագցնեն», -ասում են հոգեկան խանգարումով տառապող անձինք:

Աշխատակիցները հոգեկան խանգարումով տառապող անձանց նկատմամբ իրենց վերաբերմունքի մասին խոսելիս նշում են, որ դա ինքնապաշտպանություն է:

«Յուրաքանչյուր ոք պատասխանատու է միայն սեփական արարքների համար», - նշեց բուժակներից մեկը:

Հոգեբանական դիսպանսերի տնօրենը տեղյակ է հոգեկան խանգարումով տառապող անձանց նկատմամբ կիրառվող բռնությունների մասին: «Հարազատները երբեմն դժգոհում են հոգեկան խանգարումով տառապող անձին խփելու համար», - նշում է նա:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ երբ հոգեկան խանգարումով տառապող անձանց նկատմամբ հանգստացնող-զսպող միջոցներ են կիրառվում, աշխատակիցների կողմից չարաշահվում է դրա եղանակը և տևողությունը:

**Հանգստացնող-զսպող միջոցներ կիրառելու թույլտվությունը**, դրա տեսակը և ժամանակահատվածը որոշում և տալիս է բժիշկը, իսկ հիմնական գործողություններն **իրականացնում են հերթապահ բուժակն ու սանիտարը**: Լոռու մարզային հոգեբանական դիսպանսերում, բժիշկների խոսքերով, պատժասենյակներ և զսպաշապիկներ չունեն: Հոգեկան խանգարումով տառապող անձանց կողմից ագրեսիա դրսևորելու դեպքում նրանց հանգստացնող միջոցներ են ներարկում, ծայրահեղ դեպքերում 10-15 րոպե սավաններով կապում են իրենց մահճակալին: Բուժակը կամ սանիտարն այդ ընթացքում հետևում են նրանց վարքագծին: Այս ամենն իրականացվում է հիվանդասենյակում, իսկ հիվանդասենյակում ներկա մյուս անձանց ժամանակավոր դուրս են բերում:

Բուժակները, սանիտարներն իրենց կողմից կիրառվող տարբեր զսպող-հանգստացնող պատժամիջոցներ են նկարագրում: Նրանք նշում են, որ այդ պատժամիջոցները կարող են տևել 5-30 րոպե և, որ հոգեկան խանգարումով տառապող մյուս անձինք ականատես են լինում զսպող միջոցների կիրառմանը:

Հոգեկան խանգարումով տառապող անձինք նշում են, որ իրենց սավաններով կապում են մահճակալին հիվանդասենյակում, մյուսների ներկայությամբ: «Կարող է նույնիսկ եղպես թողնեն 24 ժամ», - նշել է հոգեկան խանգարումով տառապող անձանցից մեկը:

Հոգեբանական դիսպանսերի տնօրենի խոսքերով՝ դիսպանսերում որպես հանգստացնող-զսպող միջոց կիրառվում է ներարկումը, ծայրահեղ դեպքերում կիրառվում է «Ֆիքսում», որը տարվա մեջ մոտավոր 1 անգամ է լինում: «Ֆիքսման» վերաբերյալ որոշումը կայացնում է բժիշկը, երբեմն՝ բուժակը, երբ երեկոյան կամ գիշերը բժիշկը տեղում չի լինում: «Ֆիքսումն» իրականացվում է առանձին սենյակում, ընդամենը 10 րոպեով:

Հոգեկան խանգարումով տառապող անձինք իրենց ցանկությամբ բակում կարող են որոշակի աշխատանքներ կատարել: Աշխատակիցները սա անվանում են աշխատանքային թերապիա:

Ձրույցի ժամանակ հոգեկան խանգարումով տառապող անձանցից մեկը նշեց, որ ամեն օր ինքն իր ցանկությամբ մաքրում է բակը, բացառությամբ ցուրտ և խոնավ եղանակների: Դրա դիմաց նա չի վարձատրվում: «Ես հիվանդ եմ, ու էստեղ բուժվում եմ, հո չեն ասի՝ աշխատանքի համար ինձ փող տվեք: Ինձ միայն հյուրասիրում են», - ասում է նա:

Լոռու մարզային հոգեբանական դիսպանսերում բուժվող մի թոշակառու նշել է, որ ինքը 8000 դրամ թոշակ է ստանում, որից իր համար օրական 1 կամ լավագույն դեպքում 2 «Պրիմա» տեսակի ծխախոտ են տալիս:

Տնօրենի հավաստմամբ՝ հոգեկան խանգարումով տառապող անձանց իրենց հիվանդության մասին չեն ասում, այսպես ասած՝ խնայում են:

Այսպիսով, Լոռու մարզային հոգեկենդանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց նկատմամբ կիրառվում են բռնություններ, որը չի արժանանում քննության որևէ մարմնի կողմից:

Հստակեցված չեն հոգեկան խանգարումով տառապող անձանց աշխատանքներին ներգրավման կարգը և պայմանները:

Հանգստացնող-զսպող միջոցներն իրենց բնույթով անմարդկային են և տառապանք են հասցնում, քանի որ դրանց տևողությունը կարող է տևել մինչև 24 ժամ:

«Ֆիքսման» վերաբերյալ որոշումը, բացի բժշկից, կայացնում է նաև բուժակը, որը պարունակում է անձնակազմի կողմից հոգեկան խանգարումով տառապող անձանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքի և խոշտանգման մեծ ռիսկ:

Հոգեկան խանգարումով տառապող անձինք տեղեկացված չեն իրենց իրավունքներին և պարտականություններին, ինչպես նաև չեն տիրապետում իրենց իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվությանը:

## Բուժսպասարկման որակը եվ համապատասխան մասնագետները

### Օրենսդրության վերլուծություն

**«Հոգեկան խանգարումով տառապող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման մասին» ՄԱԿ-ի 1991թ.-ի 46/119 բանաձևի 9-րդ սկզբունքի** համաձայն՝ հոգեկան խանգարումով տառապող յուրաքանչյուր անձ իրավունք ունի ստանալ քիչ սահմանափակվող պայամներում և քիչ սահմանափակող մեթոդներով այնպիսի բուժում, որն անհրաժեշտ է իր առողջության ու այլոց ֆիզիկական անվտանգության պահպանման համար:

Հոգեկան խանգարումով տառապող յուրաքանչյուր անձի բուժումը հիմնվում է մշակված անհատական պլանի վրա, որը նախապես քննարկվում է հոգեկան խանգարումով տառապող անձի հետ, պարբերաբար վերանայվում է և իրականացվում համապատասխան մասնագիտացմամբ բուժանձնակազմի կողմից:

Հոգեկան խանգարումով տառապող անձանց բուժումը ներառում է նաև դեղորայքային բուժումը:

**Նույն փաստաթղթի 10-րդ սկզբունքի համաձայն** համապատասխան դեղորայքը հոգեկան խանգարումով տառապող անձանց նշանակվում է ախտորոշիչ կամ թերապևտիկ նպատակներով: Չի թույլատրվում դեղորայք օգտագործել պատասխանատվության ենթարկելու կամ այլոց հարմարության համար:

Դեղորայքը պետք է նշանակվի համապատասխան իրավասու մասնագետի կողմից՝ հոգեկան առողջության պահպանման համար նախատեսված օրենքին և անձի հիվանդությանը համապատասխան:

Ըստ **«Հոգեկան խանգարումով տառապող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման մասին» ՄԱԿ-ի 1991թ.-ի 46/119 բանաձևի** 14-րդ սկզբունքի 1-ի կետի՝ հոգեբուժական հաստատությունը պետք է ունենա նույն ռեսուրսները, ինչ որ ցանկացած այլ բուժհաստատություն՝ ներառելով.

ա) անհրաժեշտ թվով մասնագիտացված բուժանձնակազմ և այլ համապատասխան մասնագետներ, համապատասխան տարածք՝ յուրաքանչյուր հոգեկան

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

- բ) խանգարումով տառապող անձի համար առանձնանալու ու բուժում ստանալու,
- գ) մասնագետների կողմից պատշաճ սպասարկում,
- դ) համապատասխան ամենօրյա և ամբողջական բուժման հնարավորություն:

Յուրաքանչյուր հոգեբուժական հաստատություն բավարար հաճախականությամբ պետք է վերահսկվի իրավասու մարմինների կողմից, որպեսզի ապահովվի հոգեկան խանգարումով տառապող անձանց կենսապայմանները, նրանց բուժումը և խնամքը համապատասխան են սահմանված չափանիշներին:

**«Հոգեբուժական օգնության մասին»** ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հոգեկան առողջության պահպանումը ներառում է հոգեկան խանգարումներով տառապող անձանց անհրաժեշտ բազմակողմանի եւ մատչելի բժշկական օգնության, խնամքի ու օգնության այլ ձևերի ապահովումը: Հոգեբուժական օգնություն իրականացնելու ձևերը ներառում են քաղաքացիների հոգեկան առողջության հետազոտումը, հոգեկան հիվանդությունների փոխադրումը, բուժումը, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց խնամքը, նրանց բժշկական եւ սոցիալական վերականգնումը:

Օրենքի 10-րդ հոդվածում նշվում է, որ հոգեբուժական օգնությունն իրականացնում են համապատասխան որակավորում, բարձրագույն բժշկական կրթություն ունեցող բժիշկ-հոգեբույժները:

**Հոգեկան խանգարումներով տառապող անձանց հոգեբուժական օգնությունն իրականացվում է պետության միջոցների հաշվին** պետության երաշխավորած նպատակային ծրագրերի շրջանակներում, մարդասիրության ու մարդու իրավունքների պաշտպանության հիմունքներով:

**14-րդ հոդվածի համաձայն՝** հոգեկան խանգարման փոխադրումը եւ բուժումն իրականացվում են ընդունված բժշկական միջազգային չափանիշներին համապատասխան եւ չեն կարող հիմնվել հասարակության ընդունված բարոյական, մշակութային, քաղաքական կամ կրոնական արժեքների հետ քաղաքացու անհամաձայնության կամ հոգեկան առողջության հետ անմիջական կապ չունեցող այլ պատճառների վրա:

**Նույն օրենքի 18-րդ հոդվածով՝** հոգեբուժական ստացիոնար հոսպիտալացման հիմք է անձի հոգեկան խանգարման առկայությունը եւ բժիշկ-հոգեբույժի ստացիոնար հետազոտության կամ բուժման մասին եզրակացությունը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հոգեբուժական փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտությունը:

**19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝** հոգեբուժական հետազոտումն իրականացվում է անձի հոգեկան խանգարման առկայությունը ճշտելու, ինչպես նաեւ հոգեբուժական օգնության անհրաժեշտությունը գնահատելու նպատակով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հոգեբուժական հետազոտում իրականացնող բժիշկը պարտավոր է հետազոտվողին կամ նրա օրինական ներկայացուցչին ներկայանալ որպես հոգեբույժ եւ հայտնել կատարվող հետազոտության բնույթի ու հետեւանքների մասին:

3-րդ կետի համաձայն՝ հոգեբուժական հետազոտումն իրականացվում է հետազոտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ՝ հիվանդի վիճակի եւ հետազոտման բնույթի վերաբերյալ վերջիններիս լիարժեք տեղեկություն տալուց հետո:

**Նույն օրենքի 20-րդ հոդվածը** սահմանում է՝ անձի հոգեկան առողջության վերաբերյալ այլ բժիշկ-մասնագետի (ոչ հոգեբույժի) եզրակացությունը հիմք չէ անձին հոգեկան հիվանդ ճանաչելու համար:

**Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝** հոգեբուժական ստացիոնարում օրենքով սահմանված կարգով հոսպիտալացված անձին 72 ժամվա ընթացքում պարտադիր հետազոտում է հոգեբուժական հանձնաժողովը, որը որոշում է հոսպիտալացման մասնագիտական հիմնավորվածությունը:

**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»** ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն իրավունք ունեն ցուցաբերել համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում ընտրված տեսակների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզիա ստանալու դեպքում:

Բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում համապատասխան կրթություն, մասնագիտացում ստացած, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու լիցենզիա ստացած անձինք:

**Ըստ ՀՀ կառավարության «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների մասին»** 1999թ. ապրիլի 3-ի թիվ 199 որոշման անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական մասնագիտացված դիսպանսերային օգնության շրջանակներում ընդգրկված է նաև հոգեոյարդաբանական դիսպանսերային բուժումը:

Նույն որոշմամբ՝ բնակչության անվճար հիվանդանոցային օգնությունն ընդգրկում է հոգեկան հիվանդների բուժումն ու խնամքը:

**«Դեղերի մասին»** ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կառավարությունը որոշում է այն հիվանդությունների և սոցիալական խմբերի ցանկը, որով իրավունք է տրվում դեղեր ձեռք բերել անվճար կամ արտոնյալ պայմաններով:

**ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի N 396 որոշմամբ՝** այդ հիվանդությունների ցանկը ներառում է հոգեկան հիվանդությունները (հոգեմետ դեղերը):

**Հիմնական շարադրանք**

Լոռու մարզային հոգեոյարդաբանական դիսպանսերն իրականացնում է հոգեկան խանգարումով տառապող անձանց հոգեկան առողջության հետազոտումը, հոգեկան հիվանդությունների ախտորոշումը, բուժումը, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց խնամքը, նրանց բժշկական եւ սոցիալական վերականգնումը:

Հոգեոյարդաբանական դիսպանսերում բուժումն իրականացվում է հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում:

Հիվանդանոցային և արտահիվանդանոցային հիվանդների բուժումն իրականացնում են համապատասխան լիցենզիա ունեցող 7 բժիշկ, ներառյալ դիսպանսերի տնօրենը, նարկոլոգը, 2 տեղամասային բժիշկները, մանկական հոգեբույժը, բժիշկ-նեվրապաթալոգը:

Բժիշկները աշխատում են ամեն օր ժամը 9:00-17:00-ն, բացի շաբաթ-կիրակի օրերից:

Աշխատանքային ժամերից հետո, ըստ աշխատակիցների, դիսպանսերում բժիշկներ չեն լինում: «Բժիշկներին զանգում ենք անհրաժեշտության դեպքում, երբ հոգեկան խանգարումով տառապող անձինք ազդեսիա են դրսևորում, և եթե շատ ուշ չի լինում», -նշում է բուժակը:

Լոռու մարզային հոգեոյարդաբանական դիսպանսերում բժիշկների աշխատանքային ստաժը տատանվում է 1 ամսից մինչև 50 տարի, բուժակներինը 2-ից մինչև 27

Մարդու իրավունքները Լոռու մարզային հոգեոյարդաբանական դիսպանսերում

Լոռու մարզային  
հոգեոյակառարական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

տարի և սանիտարներինը 2-ից մինչև 27 տարի:  
Հոգեոյակառարական դիսպանսերի տնօրենը նշում է. «Մասնագետների ընտրու-  
թյան հնարավորութունը սահմանափակ է, քանի որ բոլորն էլ ընտրում են ավելի  
շահավետ մասնագիտութուն»:

Անհրաժեշտ մասնագիտական ձեռնարկները դիսպանսերը ստանում է ՀՀ Առողջա-  
պահության նախարարութունից: «Դրանք չեն բավարարում, ավելին՝ մեթոդական  
ձեռնարկներ գրեթե չեն ստանում, ստացած եզակի նմուշները միջազգային  
ստանդարտներ չեն ներառում», - նշում է տնօրենը:

Հոգեոյակառարական դիսպանսերի մասնագետները համապատասխան պարտա-  
դիր վերապատրաստում են անցնում 5 տարին մեկ անգամ՝ 2 շաբաթով: Վերապա-  
տաստման դասընթացներն իրականացնում է Կրթության Ազգային Ինստիտուտը,  
սակայն վերապատրաստումը վճարովի է:

Լոռու մարզային հոգեոյակառարական դիսպանսերում հոգեկան խանգարումով  
տառապող անձանց խնամքն իրականացնում են 4 բուժակ և 7 սանիտար:

Բաժանմունքում աշխատանքային մեկ հերթապահության ընթացքում՝ առավոտյան  
ժամը 9:00-ից մինչև հաջորդ առավոտյան 9:00-ն, աշխատում են 1 բուժակ, 2 սանի-  
տար:

Նրանց հերթապահության ընթացքում հանգստի և ընդմիջման համար հատկացված  
ժամեր չկան:

Ըստ բժիշկների՝ դիսպանսերում կա անհրաժեշտ քանակի և որակի դեղորայք: Բու-  
ժակներից մեկը նշում է, որ օգտագործվող դեղորայքի մեծ մասը հայկական ար-  
տադրության է, որը որակյալ չէ:

Լոռու մարզային հոգեոյակառարական դիսպանսերի բուժող բժիշկներից մեկը  
նշել է, որ հոգեկան խանգարումով տառապող անձանց անհրաժեշտ դեղորայքը  
գնում են դեղատներից, մինչև որ սահմանվում է հաշմանդամության խումբ: «Դրա-  
նից հետո առաջին և երկրորդ խմբի հաշմանդամները դեղերը ստանում են անվ-  
ճար», - ասում է բժիշկը:

Լոռու մարզային հոգեոյակառարական դիսպանսերի հոգեկան խանգարումով  
տառապող 12 անձանցից 3-ը նշում են, որ թանկ դեղերի համար վճարում են տան  
անդամները: Լոռու մարզային հոգեոյակառարական դիսպանսերի տնօրենը հա-  
վաստում է, որ այն դեպքերում, երբ դիսպանսերում առկա է միայն տվյալ դեղատե-  
սակի փոխարինողը, հոգեկան խանգարումով տառապող անձանց ընտանիքի ան-  
դամները երբեմն գերադասում են դրսից գնել նշանակված դեղորայքը, ոչ թե դիս-  
պանսերից անվճար ստանալ փոխարինողը:

Հոգեկան խանգարումով տառապող անձանց դեղերը նշանակում է բժիշկը, այնու-  
հետև դեղերն ավագ բուժակը տալիս է բուժակներին՝ բուժում ստացող անձանց  
բժշկի նշանակմանը համապատասխան դեղերը տալու համար: «Բժիշկը վեց ամ-  
սից ավելի աշխատանքային փորձ պետք ունենա, որ ես վստահեմ նրան համապա-  
տասխան ախտորոշման հիման վրա նշանակումներ անել», - ասում է հոգեոյակառար-  
ական դիսպանսերի տնօրենը:

Բուժակը դեղերը ստանում է ամեն առավոտ ամբողջ օրվա հերթապահության հա-  
մար, իսկ ուրբաթ օրը՝ 3 օրվա համար: **Դեղերը պահվում են պրոցեդուր սենյակում  
և հոգեկան խանգարումով տառապող անձանց տրվում են նույն սենյակում**, ջուրը  
տալիս է սանիտարը, միաժամանակ հսկում է, որ հոգեկան խանգարումով տառա-  
պող անձինք չթաքցնեն դրանք: Եթե չեն ուզում խմել, նրանց համոզում են:

Առանց բժշկի թույլտվության բուժակը կամ սանիտարը չեն կարող դեղեր տալ հո-  
գեկան խանգարումով տառապող անձանց:

Եթե Լոռու մարզային հոգեոյակառարական դիսպանսերում հիվանդանոցային

բուժում ստացող հոգեկան խանգարումով տառապող անձանց անհրաժեշտ է այնպիսի օգնություն, որը դիսպանսերը չի կարող տրամադրել, օրինակ՝ վիրահատություն, նրան ուղարկում են Վանաձորի Լ. Արեշյանի անվան թիվ 1 հիվանդանոց: Այնտեղ բուժման ծախսերը հոգում է դիսպանսերը:

Այսպիսով, պետությունը չի կարողանում ապահովել անվճար և արդյունավետ դեղամիջոցներով:

Լոռու մարզի հոգեոյարդաբանական դիսպանսերում անհրաժեշտ քանակի կադրերի բացակայություն կա:

Հոգեոյարդաբանական դիսպանսերը հատկապես բուժակների և սանիտարների մասնագիտական կարողությունների բարձրացման կարիք ունի:

Ի տարբերություն մյուս բժշկական հաստատությունների հոգեոյարդաբանական դիսպանսերում բժշկական անձնակազմի աշխատավարձերը չեն համապատասխանում իրենց աշխատանքների բնույթին:

Անբավարար է նոր մեթոդական ձեռնարկների մատակարարումը և կադրերի վերապատրաստման հնարավորությունները:



Մարդու իրավունքները Լոռու մարզային հոգեոյարդաբանական դիսպանսերում

Լոռու մարզային  
հոգեւոյնաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

## ՄԱՍ 2

# Մարդու իրավունքները Վանաձորի ծերատանը

Ընդհանուր տեղեկություններ Վանաձորի ծերատան  
մասին

**Վ**անաձորի ծերատունը կազմավորվել է 1993թ-ին, 2001թ-ից անցել է Ամերիկա-  
յի Հայ Օգնության Ֆոնդին: Վանաձորի ծերատունը համարվում է Հայ Օգնու-  
թյան Ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի ծրագրերից մեկը: Ծերատունը ֆի-  
նանսավորվում է ՀՕՖ-ի Նյու-Յորքի գրասենյակի կողմից, խնամառուների նվիրա-  
բերած միջոցներով, ինչպես նաև այլ անձանց նվիրատվություններով:

Վանաձորի ծերատունը հանդիսանում է միայնակ ու սոցիալապես անապահով տա-  
րեցներին տեղում սոցիալական աջակցության /ծառայությունների մատուցման/  
կենտրոն և նախատեսված է բավարարելու ծերերի հիմնական պահանջները՝  
նրանց կեցության համար անհրաժեշտ պայմանները:

Վանաձորի ծերատունը գտնվում է «Վանաձոր» ձորում՝ Վանաձոր քաղաքից 4 կմ  
180մ հեռավորության վրա: Այն երեք կողմից շրջապատված է անտառներով: Շենքը  
ցանկապատված է, փողոցից առանձնացված է դարպասով:

Բակում տեղադրված է մեկ նստարան, ծաղկանոց, ցայտաղբյուրներ, խորովածա-  
նոց՝ դիմացը՝ երկար սեղանով ու նստարաններով տաղավար (բեսեդկա):

Բակում կան նաև 3 վազոն-տնակներ, որոնցից մեկը հատկացված է վարորդին,  
մյուսը, ծերերից մեկի հավաստմամբ, ամռանը վարձով տրվում է Երևանից եկող  
հանգստացողներին:

Շենքի հետևի մասում տեղակայված են պահեստն ու ավտոտնակը: Շենքը վերանո-  
րոգման կարիք ունի:

Ծերատան բակից շենք մտնելու համար պետք է բարձրանալ մոտ 30 աստիճանից  
կազմված սանդուղքով:

Վանաձորի ծերատան շենքը եռահարկ է, բոլոր հարկերի աստիճաններն ունեն  
բազրիքներ: Բռնակներ կան միայն 1-ին և 2-րդ հարկի միջանցքների պատերին:

Վանաձորի ծերատունը չունի հաշմանդամների տեղաշարժման համար անհրա-  
ժեշտ հնարավորություններ: Աստիճաններին զուգահեռ չկան թեքահարթակներ:

Շենքն ապահովված է անվտանգության համակարգով: Միջանցքներում առկա են  
հրշեջ-ծառայության վահանակներ և կրակմարիչներ:

Վանաձորի ծերատանն ապրում են 49 տարեցներ: Նրանց թվում կան նաև այլազգիներ. 2 ռուս, 1 ուկրաինացի, 1 վրացի:

Տարեցներից երկուսը խնդիրներ ունեն հենաշարժողական համակարգի հետև և ինքնուրույն տեղաշարժվել չեն կարողանում:

## Ծերատուն ընդունման եւ դուրս գրման կարգ

**ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 7-ի «Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու մասին հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 1874-Ն որոշմամբ** սահմանված է ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգը:

Նշված կարգի համաձայն՝ խնամքի կարիք ունեցող հաճախորդը կամ նրա խնամակալը (եթե անձը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ) կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակված պատրոնը դիմում է հաճախորդի փաստացի բնակության վայրի գործակալություն՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

- դիմում, որում նշվում է խնամքի տեսակը
- սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը
- անձը հաստատող փաստաթուղթ և դրա պատճենը
- տեղեկանք կենսաթոշակ նշանակող իրավասու մարմնից՝ կենսաթոշակի չափի և տեսակի մասին
- տեղեկանք հաճախորդի բնակության վայրի պոլիկլինիկայից՝ նրա առողջական վիճակի մասին

Եթե դիմումը ներկայացնում է հաճախորդի խնամակալը, անհրաժեշտ է ներկայացնել նաև

- խնամակալի անձը հաստատող փաստաթուղթը և դրա պատճենը
- քաղաքացուն անգործունակ ճանաչելու մասին դատարանի որոշման պատճենը
- նրա նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման պատճենը:

Դիմումը պատրոնի կողմից ներկայացվելու դեպքում՝

- պատրոնի անձնագիրը
- պատրոնաժ սահմանելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման պատճենը:

Գործակալության աշխատողը հաճախորդի դիմումն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում կատարում է տնային այցելություն՝ նրա ընտանիքի կենսապայմանների ուսումնասիրության նպատակով:

Գործակալության աշխատողը տնային այցելության արձանագրությունը եզրակացության և խնամք տրամադրելու կամ չտրամադրելու վերաբերյալ առաջարկության հետ միասին ներկայացնում է գործակալության պետին:

Գործակալության պետն առկա փաստաթղթերի և այդ առաջարկության հիման վրա ընդունում է որոշում խնամք տրամադրելու կամ մերժելու մասին: Որոշման մեջ նշվում է տրամադրվող խնամքի տեսակը:

Գործակալության պետը հաճախորդին բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր կամ հատուկ հաստատություններում խնամք տրամադրելու մասին որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ հաճախորդի ընդունելությունը համապատասխան հաստատությունում կազմակերպելու համար:

Նախարարությունը գործակալությունից ստացված որոշումների հիման վրա հա-

Լոռու մարզային  
հոգեւոյն արդարաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

մակարգում է հաճախորդների տեղավորման գործընթացը:

Խնամքի տրամադրումն առանց հաճախորդի /կամ նրա խնամակալի/ համաձայնության, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, կարող է իրականացվել այն դեպքում, երբ նա իր խնամակալից չի ստանում անհրաժեշտ խնամք և ուշադրություն:

- իր հիմնական պահանջները (ինքնասպասարկման և (կամ) ակտիվ տեղաշարժվելու ունակության կորուստ) ինքնուրույն բավարարելու անկարողության դեպքում
- օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչվելու դեպքում:

Հաճախորդին, առանց նրա կամ նրա խնամակալի համաձայնության, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու որոշումը գործակալության առաջարկությամբ ընդունում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

**Համաձայն Վանաձորի ծերատան կանոնադրության** ծերատուն ընդունվում են կենսաթոշակային տարիքի հասած և զավակներ չունեցող, մեմակյաց կամ աշխատունակ զավակներ չունեցող ՀՀ քաղաքացիները:

Բացառության կարգով կարող են ընդունվել նաև այն անձինք, ովքեր ունեն աշխատունակ զավակներ, սակայն որոշ պատճառներով չեն կարող բնակվել իրենց զավակների հետ: Այդ դեպքում պահանջվող փաստաթղթերից բացի պարտադիր է նաև զավակների գրավոր համաձայնությունը:

Վանաձորի ծերատուն ընդունելիս հատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, թե արդյոք կարողանում է տվյալ տարեցը ինքնուրույն հոգ տանել իր մասին:

2007թ-ի հունվարի 1-ից Վանաձորի ծերատան կանոնադրության 4.4-ի կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ ծերատուն ընդունելիս տարեցի և ծերատան միջև կնքվում է պայմանագիր, որով նա համարվում է ընդունված ծերատուն: Պայմանագիրը կնքվում է նախ՝ 2 ամիս ժամանակով, հետո պայմանագրի ժամկետը կարող է երկարացվել:

Ըստ պայմանագրի՝ խնամառուն պարատավոր է յուրաքանչյուր ամիս ծերանոցի բանկային հաշվին փոխանցել կամ կանխիկ տրամադրել իր կենսաթոշակի 40%-ը:

ՀՀ կառավարության «**Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու մասին հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին**» 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշմամբ սահմանվում է նաև խնամքի տրամադրման մերժման պայմանները:

Տարեցներին մերժվում է խնամքի տրամադրումն այն դեպքերում, եթե նրանք տառապում են հետևյալ հիվանդություններով.

- քրոնիկ ալկոհոլամոլություն կամ թմրամոլություն
- մաշկային հիվանդություն, սեռավարակներ՝ հիվանդության վարակի շրջանում
- օնկոլոգիական հիվանդություն՝ դեկոմպենսացիայի շրջանում
- ինֆեկցիոն հիվանդություններ՝ հիվանդության սուր շրջանում
- տուբերկուլյոզ հիվանդության վարակի շրջանում:

Ծերատան կանոնադրության 4.5-րդ կետի համաձայն՝ ծերատուն ընդունելու մերժման հիմք են հանդիսանում նաև այն դեպքերը, երբ

- զբաղեցված են բոլոր տեղերը
- ներկայացված փաստաթղթերում կան թերի կամ ոչ իրական տվյալներ
- դիմողն ունի խնամակալ կամ հոգաբարձու, որը չի հրաժարվել իր պարտականություններից
- դիմողն ունի հոգեկան խանգարում

- դիմողը 1-ին խմբի հաշմանդամ է և չի կարողանում ինքնուրույն շարժվել:

**Ծերատնից դուրս գրման կարգը:** ՀՀ կառավարության «Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու մասին հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշման 38 կետի համաձայն՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից հաճախորդի դուրս գրումը կատարվում է հաստատության ղեկավարի հրամանով:

Մարդու իրավունքները  
Վանաձորի ծերասանը

Համաձայն Վանաձորի ծերատան կանոնադրության 4.13 կետի՝ ծերատնից դուրս գրումը կատարվում է.

- խնամառուի անձնական դիմումի հիման վրա
- եթե դադարել է պայմանագրի ժամկետը
- եթե խնամառուն խախտում է պայմանագրով սահմանված պարտականությունները
- եթե խնամառուն սիստեմատիկաբար խախտում է ծերատան ներքին կարգապահության և համակեցության կանոնները

*Իր և աշխատակիցների հավաստմամբ՝ էպիլեպսիա հիվանդությամբ տառապող տարեցներից մեկն առանձնագրույցների ժամանակ ասեց, որ չի ցանկանում այլևս ապրել այդտեղ, որ ծերատնից դուրս գալու համար մի քանի անգամ գրավոր դիմել է տնօրենին, բայց տնօրենը չի ստորագրել դիմումը:*

## Վանաձորի ծերատան կենցաղային պայմանները

### Օրենսդրության վերլուծություն

ՀՀ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ **խնամքի կազմակերպումն իրականացվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն ապահովում է երկարաժամկետ կացարան, շուրջօրյա լրիվ խնամք:** Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ են հանդիսանում նաև տուն-ինտերնատները:

ՀՀ կառավարության «**Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին**» 2007թ. մայիսի 31-ի N 730-Ն որոշման համաձայն՝ տուն-ինտերնատը պետք է

- ապահովված լինի առանձին խոհանոցով և ճաշասրահով՝ այն հաշվարկով, որ խնամվողները կարողանան ճաշել ոչ ավելի, քան 2 հերթով:
- ունենա յուրաքանչյուր 50 խնամվողի հաշվարկով մեկ հանգստի սենյակ, որը պետք է ապահովված լինի բազմոցներով, բազկաթոռներով, սեղաններով, սեղանի խաղերով, աթոռներով՝ առնվազն 20 խնամվողի միաժամանակյա հանգստի և զբաղմունքի համար և առնվազն մեկ հեռուստացույցով:
- ունենա մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար դահլիճ՝ տուն-ինտերնատում բնակվողների թվի առնվազն 80 տոկոսի չափով:

Նույն որոշման 1-ին կետով՝ **«տուն-ինտերնատներում խնամվողների սենյակների բնակելի մակերեսը չպետք է մեկ խնամվողի հաշվարկով պակաս լինի 5 քառ.մետրից: Յուրաքանչյուր սենյակում պետք է բնակվի ոչ ավելի քան 4 խնամվող:**

2-րդ կետի համաձայն՝ **«յուրաքանչյուր խնամվող պետք է ապահովված լինի առանձին մահճակալով, մեկ փոքրիկ պահարանով, մեկ աթոռով, յուրաքանչյուր 4-ը՝ մեկ սեղանով և մեկ հանդերձապահարանով:**

ՀՀ կառավարության «**Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու մասին հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին**»

Լոռու մարզային  
հոգեւոյնաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

2006թ. դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշման 30 կետի համաձայն՝ «Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը հաճախորդին տրամադրում է անհրաժեշտ կահույք:

**Հիմնական շարադրանք**

Վանաձորի ծերատան ամառային հարկում գտնվում են **բուժկետը**, առանձին **խոհանոց** ու **ճաշասրահը**, որը հնարավորություն է տալիս խնամառուներին ճաշել մեկ հերթով:

Սենյակներից մեկը, որն անվանվում է **գրադարան**, ապահովված է գրապահարանով, մեկ հեռուստացույցով, 6-7 աթոռներով:

**Դահլիճը** գտնվում է ծերատան երկրորդ հարկում և ապահովված է բազմոցներով ու բազկաթոռներով, մեկ հեռուստացույցով ու սեղանով:

Վանաձորի ծերատանը կան տարեցների համար նախատեսված **24 սենյակներ**, որոնցից 4-ը գտնվում են ամառային հարկում և նախատեսված են անկողնային հիվանդների համար: 2-րդ և 3-րդ հարկերում գտնվում են 10-ական սենյակներ, որոնց մի մասը երկտեղանի են, մի մասը՝ երեքտեղանի:

Երկտեղանի սենյակների մակերեսը 22-24քմ է, երեքտեղանի սենյակների մակերեսը՝ 28քմ է:

Բոլոր սենյակներն ունեն նույն կահավորանքը՝ մահճակալներ, հանդերձապահարաններ, փոքր պահարաններ, սեղան, աթոռներ: Տարեցների մի մասն իրենց միջոցներով իրենց հանդերձապահարանների վրա կողպեքներ են տեղադրել:

Մի քանի սենյակներում կան սեղանի սփռոցներ, վարագույրներ, որոնք տարեցները ձեռք են բերել իրենց միջոցներով: Որոշ տարեցներ սենյակներում նաև արդուկ, սրճեփ, էլեկտրական ջրատաքացուցիչ և սալիկներ ունեն, որոնք գնել են սեփական միջոցներով:

Սենյակների լուսավորությունը բավարար է:



Սենյակների օդափոխման համար հատուկ օդափոխիչներ չկան, սենյակն օդափոխելու համար տարեցները բացում են պատուհանը: Ձմռանը ծերատունը ջեռուցվում է ընդհանուր ջեռուցման համակարգով:

Տարեցների սենյակների դռները չեն կողպվում, բացառությամբ այն սենյակների, որտեղ տարեցներն իրենց միջոցներով փականներ են տեղադրել:

Տարեցների սենյակներից զգալիորեն տարբերվում են աշխատողների սենյակները: Նրանց սենյակներում կան սառնարաններ, բացի այդ՝ աշխատողների սենյակները տաքացվում են էլեկտրական սալիկներով:

Այսպիսով, Վանաձորի ծերատանը խնամառուների սենյակների բնակելի մակերեսը համապատասխանում է օրենսդրությամբ սահմանված չափանիշերին. յուրաքանչյուր խնամվողին 5 քմ-ի փոխարեն հատկացված է 9-12 քմ տարածք: Տարեցներն ապահովված են անհրաժեշտ կահույքով:

Անկողնային հիվանդների /հաշմանդամների/ սենյակները հարմարեցված չեն նրանց պահանջմունքներին, սենյակներում չկան բռնակներ և այլ անհրաժեշտ հարմարանքներ:

Ծերատունն ունի առանձին խոհանոց և ճաշասրահ, ուր խնամառուները ճաշում են մեկ հերթով:

Դահլիճը, որն ապահովված է անհրաժեշտ գույքով, միաժամանակ ծառայում է որպես հանգստի սենյակ:

Գրադարանի համար նախատեսված սենյակն ընթերցանության համար համապատասխան պայմաններ չունի, լուսավորվում է միայն էլեկտրական լույսով, տարածքը բավական փոքր է: Այնտեղ կարող են միաժամանակ նստել 5-6 մարդ, որոնք հիմնականում հեռուստացույց են դիտում:

Ծերատան լողասենյակները հարմարեցված չեն տարեցների պահանջմունքներին:

## Ծերատան սանիտարահիգիենիկ պայմաններ

### Օրենսդրության վերլուծություն

Ծերատան և խնամառուի միջև կնքվող պայմանագրի 2.1.4 կետի համաձայն՝ ծերատունը պարտավոր է խնամառուի կողմից ծերատան բանկային հաշվին փոխանցված գումարները տնօրինել նաև խնամառուների հիգիենիկ և կենցաղային բնույթի ծախսերը հոգավոր ուղղությամբ:

ՀՀ կառավարության **«Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին»** 2007թ. մայիսի 31-ի N 730-Ն որոշման համաձայն՝ տուն-ինտերնատը պետք է ունենա լվացքատուն, լվացքը չորացնելու համար առանձին տարածք, յուրաքանչյուր մեկ խնամվողի հաշվարկով մեկ կգ. հզորությամբ լվացքի մեքենա:

Ծերատունն ունի լվացքատուն, որն ապահովված է 3 ավտոմատ լվացքի մեքենաներով՝ յուրաքանչյուրը 5 կգ. հզորությամբ:

«Ի՞նչ հաճախականությամբ եք փոխում Ձեր անկողնային սպիտակեղենը, հագուստները, ներքնաշորերը» հարցին տարեցների կողմից տրվել են տարբեր պատասխաններ.

- շաբաթը մեկ անգամ
- երբ կողտոտվում է
- ըստ ցանկության:

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերուս,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

Տարեցներից մեկը մեկ է, որ անկողնային սպիտակեղենը փոխում է 15 օրը մեկ, հագուստը՝ ամիսը 1, ներքնաշորերը՝ 7-10 օրը մեկ անգամ:

Ծերատան լվացքատան աշխատողի հավաստմամբ՝ որևէ գրաֆիկ չկա սահմանված, երբ ծերը բերում է հագուստը, այն լվացվում է:

Վանաձորի ծերատան 1-ին հարկում գործում են 2 ընդհանուր զուգարաններ և 1 զուգարան՝ նախատեսված աշխատողների համար: Երկրորդ հարկում տարեցների յուրաքանչյուր 2 սենյակին հատկացված է մեկ զուգարան:

Տարեցների համար նախատեսված զուգարաններում չկան սանիտարահիգիենիկ պարագաներ՝ օճառ, զուգարանի թուղթ, ատամի մածուկ, սրբիչ: Տարեցները դրանք ձեռք են բերում սեփական միջոցներով /կենսաթոշակներով/ և պահում իրենց պահարաններում:

1 տարի առաջ ամիսը մեկ անգամ տարեցների տանն ապրող յուրաքանչյուր անձի 1 զուգարանի թուղթ ու 1 օճառ է տրվել, հիմա նրանց հիգիենայի պարագաներ չեն տրվում:

*Աշխատողները բացատրում են, որ տարեցներին տրվող հիգիենայի պարագաները վերջիններս հավաքում են, պահում և տալիս իրենց այցելող հարազատներին կամ վաճառում միմյանց:*

Ձուգարաններում կան մեկական լվացարաններ, և ապահովված են մշտական սառը ջրով: Բոլոր զուգարանների հատակն ու պատերը սալիկապատված են:

Ի տարբերություն ընդհանուր զուգարանների՝ աշխատողների համար նախատեսված զուգարանները շատ մաքուր են և ապահովված հիգիենայի պարագաներով:

1-ին հարկում կան 4 լողասենյակներ, որոնցից 2-ը՝ ծանր անկողնային հիվանդների սենյակներում: 2-րդ հարկում՝ լվացքատան հարևանությամբ, կան ևս 5 լողասենյակներ:

Տարեցները մեկ են, որ ձմռանը լողանում են ամիսը 2 անգամ, տաք եղանակին՝ շաբաթը մեկ կամ 10 օրը մեկ անգամ: Լողանալու համար սահմանված է հատուկ օր՝ յուրաքանչյուր չորեքշաբթի: Ինքնուրույն լողանալ չկարողացող տարեցների ոգնում են ընկեր-տարեցները, երբեմն էլ՝ աշխատողները:

Տարեցների լողասենյակներում չկան սրբիչներ, հիգիենայի պարագաներ: Լողասենյակները հարմարեցված չեն տարեցների պահանջներին, միայն կան աթոռներ, որոնք նախատեսված են անկողնային հիվանդներին լողացնելու համար: Բոլոր լողասենյակները սալիկապատված են:

Ծերատան առաջին հարկն ապահովված է մշտական տաք ջրով, այնտեղ տեղադրված է «Արիստոն» մակնիշի 1 ջրատաքացուցիչ:

Տարեցների սենյակները մաքրվում են ամեն օր՝ համապատասխան աշխատողի կողմից:

Անկողնային հիվանդների սենյակներն առանձնանում են խիստ սուր տհաճ հոտով, հակասանիտարական վիճակով /տարեցի օգտագործած տակդիրը գցած էր փոքր պահարանի վրա/: Բոլոր անկողնային հիվանդների և՛ ձեռքերի, և՛ ոտքերի եղունգները երակարած ու կեղտոտ են: Մեկուսացված սենյակում պառկած տատիկների հագին ընդամենը 1 բարակ շապիկ է, պառկած են պոլիէթիլենային ներքնակի վրա, սենյակում լիքը ճանճեր կան:

Այսպիսով, ծերատան սանիտարահիգիենիկ բոլոր պայմանները չէ, որ համապատասխանում են նվազագույն չափորոշիչներին: Խնամվողներին չեն տրվում անձնական հիգիենայի պարագաներ /օճառ, թուղթ, սրբիչներ, այլ/: Հաստատության ընդհանուր մաքրությունը անբավարար է: Անկողնային հիվանդների սենյակներում

տիրում է հակասանհիտարական վիճակ:

Հագոււստ

Օրենսդրության վերլուծություն

ՀՀ կառավարության «**Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին**» 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշման 30 կետի համաձայն՝ **բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը հաճախորդին տրամադրում է .**

- անձնական հիգիենայի պարագաներ
- անկողնային պարագաներ
- հագուստ, սպիտակեղեն, կոշիկեղեն:

Համաձայն ծերատան կանոնադրության 2.2 կետի՝ ծերատունը իրականացնում է խնամառուների կենցաղային սպասարկումը, ապրելու համար բարեկեցիկ պայմանների ստեղծումը (անհրաժեշտ կահույք, անկողնային սպիտակեղեն, հագուստ, կոշիկ և այլն):

ՀՀ կառավարության «**Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին**» 2007թ. մայիսի 31-ի N 730-Ն որոշմամբ սահմանված են ծերերին հագուստով և անկողնային պարագաներով ապահովելու նվազագույն չափորոշիչները: Որոշմամբ սահմանված են տարեցներին հատկացվող հագուստի տեսակը, քանակը և օգտագործման ժամկետները:

Հիմնական շարադրանք

Վանաձորի ծերատունը պետության կողմից օժանդակություն չի ստանում: Տարեկան 2 անգամ հագուստներ են ստանում բարեգործներից:

Տարեցների հավաստմամբ՝ նրանք ապահովված են անհրաժեշտ հագուստներով: Հիմնականում տարեցները հագուստներն իրենց հետ տնից են բերում:

**«Իմ հագուստը ես եմ բերել, ինձ այստեղ հագուստ չեն տվել»**, -նշեց նրանցից մեկը:

Որոշ հագուստներ հատկացնում է ծերատունը /զուգագուլպաներ, հողաթափեր, զուգագուլպա, վերնաշապիկ, տաբատ և այլն/:

**«1.5 տարի է ծերատանն եմ, ինձ 2 վերնաշապիկ են տվել, 1 տաբատ»:**

**«Մինչև լավություն չանես, քեզ շոր չեն տա, օրինակ, տարեցներից մեկը մեկ ու կես պարկ ուրց է բերել, որ իրեն ճտքավոր կոշիկ են տվել»:**

Որոշ հագուստներ տարեցները գնում են իրենց միջոցներով:

**«Գլխարկ չունեմ, որ գիշերները գլխիս դնեմ, դիմեցի պահեստապետին, ասեց. «Շուկայում լիքն է, գնա առ»: Այս ամսվա թոշակով գնալու եմ ինձ համար ծնեռային գլխարկ առնեմ»:**

Ծերատան տնօրենի հավաստմամբ՝ տարեցին ընդունելու ժամանակ, եթե նա որևէ հագուստ չի ունենում, ապա հատկացնում են: Սակայն ծերատունը կարող է հատկացնել միայն այնպիսի հագուստներ, որոնք ստանում է բարեգործներից: Իսկ ուղարկվող հագուստների մեջ չեն լինում տղամարդու կոշիկներ, տաբատներ: Ծերատունը անկողիներ չունի, տարեցներին հատկացվում են ներքնակ, բրդյա ծածկոցներ: Ըստ աշխատակիցների՝ նախընտրելի է, որ տարեցն իր հետ տնից ան-

Լոռու մարզային հոգեևյարդաբանական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը եվ Վանաձորի մանկատանը իրականացված մոնիթորինգի արդյունքները

կողին տանի:

Ծերատունը ընդունվելու ժամանակ յուրաքանչյուր խնամառուին հատկացվում է մեկ զույգ անկողնային սպիտակեղեն, որոնք տարեցներն օգտագործում են տարիներ շարունակ: Սպիտակեղենի պատռվելու կամ մաշվելու դեպքում նրանց նորը չի հատկացվում, այլ գնում են իրենց կենսաթոշակներով:

Կան տարեցներ, ովքեր չունեն անկողնային սպիտակեղեն: «Աշխատողն ունի ուզում, նրան է տալիս», -ասեց նրանցից մեկը՝ նշելով, որ փողով է տալիս:

Տնօրենի հավաստմամբ՝ հիմնական սկզբունքն այն է, որ տարեցները սեփական ներդրում ունենան իրենց կենցաղում ու խնամքով վերաբերվեն ամեն ինչին: «Զ» է որ այն ամենն, ինչ ստեղծված է, ձեռք է բերվել ինչ-որ մեկի ջանքերով»:

**«Թեկուզ իրենց անկողնային սպիտակեղենը գնելով՝ տարեցներն սկսում են առավել խնամքով վերաբերվել ամեն ինչին»**, - իր խոսքում նշեց տնօրենը:

Այսպիսով, Վանաձորի ծերատունը խնամառուներին չի ապահովում անհրաժեշտ բոլոր տեսակի հագուստներով: Անկողնային սպիտակեղենը տրվում է մեկ անգամ, իսկ դրանց մաշվելու դեպքում խնամառուն պարտավոր է իր միջոցներով գնել նորը:

Մտուևնդ

Օրենսդրության վերլուծություն

Ըստ ՀՀ կառավարության «**Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին**» 2006թ. դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշման 23-րդ կետի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կազմակերպում է հաճախորդների սնունդը (օրական երեք անգամ):

ՀՀ կառավարության «**Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին**» 2007թ. մայիսի 31-ի N 730-Ն որոշման համաձայն խնամվողների սննդի օրական սպառման նվազագույն էներգետիկ արժեքը չպետք է պակաս լինի 2100 կկալ-ից:

NN ը/կ	Անհամբերքի անվանումը	Չափման միավորը	Օրական օգտագործման չափը (գրամներով)	էներգետիկ արժեքը (կկալ)
1.	Չաց՝ ցորենի	գրամ	300	699
2.	Չաց՝ 2-րդ տեսակի	գրամ	200	466
3.	Մակարոնեղեն	գրամ	30	99.6
4.	Չավարեղեն	գրամ	50	142.0
5.	Կարտոֆիլ	գրամ	200	166
6.	Բանջարեղեն և այլ կանաչեղեն	գրամ	300	91.5
7.	Սոխ	գրամ	50	17.5
8.	Տոմատի մածուկ	գրամ	5	0.7
9.	Պանիր	գրամ	30	78
10.	Շաքարավազ	գրամ	60	225
11.	Կարագ	գրամ	20	37.4
12.	Յուղ կամ ձեթ	գրամ	40	347.5
13.	Սուրճ	գրամ	2	
14.	Լի	գրամ	15	
15.	Մսամբերք	գրամ	140	261.8
16.	Չկնդն	գրամ	60	86.4
17.	Կաթ կամ կաթի փոշի	միլիգրամ	200	122
18.	Մածուն	գրամ	150	90
19.	Թթվասեր	գրամ	30	78
20.	Կաթնաշոռ	գրամ	50	78
21.	Չու	հատ	0.5	78.5
22.	Թեյ	գրամ	2	
23.	Մեղր	գրամ	5	15.75
24.	Մուրաբա, քեմ	գրամ	20	
25.	Սիրոգ	գրամ	200	92
26.	Հյութ	գրամ	100	
27.	Ալյուր	գրամ	25	81.7
28.	Հրուշակեղեն	գրամ	50	

ՆՎԱԶԱՈՒՅՑ  
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԾԵՐԵՐԻ ԵՒ  
ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԻՊԻ  
ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏՆԵՐՈՒԲ  
ԽՆԱՄԱՐՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՏՎԱՑՎՈՂ  
ՍՆՆԱԳՄԱՅԵՐԻ  
ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ԵՒ  
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԺԵՔԻ

Վանաձորի ծերատան կանոնադրության 2.2 կետի համաձայն՝ ծերատունն իրականացնում է արդյունավետ, այդ թվում դիետիկ սննդի կազմակերպումը՝ հաշվի առնելով խնամառուների տարիքն ու առողջական վիճակը:

Յիմնական շարադրանք

Վանաձորի ծերատանը խնամառուներին օրական երեք անգամ սնունդ է տրվում: Ճաշացանկի և կառավարության որոշմամբ սահմանված նվազագույն չափորոշիչների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծերատունը տարեցներից ապահովում է անհրաժեշտ սննդամթերքով: Բացառություն են կազմում միայն հետևյալ սննդամթերքները՝ ձկնեղեն, մեղր, մածուն, սուրճ /սուրճ տրվում է միայն աշխատողներին/:

Ճաշացանկը կազմվում է ավագ խոհարարի և բժշկուհու կողմից: Ծերատան բժշկի հավաստմամբ՝ ճաշացանկը կազմվում է՝ հաշվի առնելով տարեցների ընդհանուր առողջական վիճակը: Շաբաթային դիաբետով հիվանդներին 2-րդ տեսակի հաց է տրվում:

Տարեցները նշեցին, որ որպես առաջին ճաշատեսակ իրենց տրվում են սուպեր /հիմնականում բրնձով, վերմիշելով, մակարոնով, բորչչ/, որպես երկրորդ՝ փլավներ /մակարոնով, ոսպով, բրնձով, հնդկաձավարով/, տապակած կարտոֆիլ:

2 օրը մեկ անգամ տրվում է կոմպոտ՝ /խնձորի, մոշի կամ հոնի/, շաբաթական մեկ կամ երկու անգամ՝ քաղցրավենիք, միրգ /խաղող, դեղձ, խնձոր, ամռանը՝ ձմերուկ/: Ամեն օր տրվում է նաև կաթնամթերք /կարագ, պանիր, կաթնաշոռ կամ թթվասեր/:

«Ի՞նչ հաճախականությամբ է միս տրվում» հարցին տարեցների կողմից եղան տարբեր պատասխաններ.

- ամիսը մեկ անգամ
- ամիսը 3-4 անգամ
- բացի շաբաթ-կիրակի օրերից, մնացած օրերին մսով ճաշ է տրվում
- շաբաթը մեկ անգամ մսով կոտլետ է տրվում:

Այնուամենայնիվ, տարեցները սննդից հիմնականում դժգոհ են. «Ճաշերը երբեմն յուղով են պատրաստում, երբեմն՝ ոչ», - դժգոհեցին նրանք:

«Փլավների վրա մի կտոր սալաթ են դնում, հավանաբար՝ յուղի փոխարեն: Ամռանը կաղամբն առանց որևիցե բանի կտրատում են, դնում մեր առջև, գոնե եփեն, մոր դեն», - նշեց նրանցից մեկը:

Տարեցների հավաստմամբ՝ նրանք կերակուր ընտրելու հնարավորություն չունեն, իսկ սահմանված չափաբաժնից դուրս հավելյալ սնունդ տրվում է երբեմն:

Նշենք, որ գրեթե բոլոր տարեցներն իրենց սենյակներում մթերք ունեն /կարտոֆիլ, ձեթ, միրգ, սուրճ, կոնֆետներ/: Դրանք գնում են իրենց միջոցներով և, երբ չեն հավանում տրված սնունդը, իրենց սենյակներում կերակուր են պատրաստում:

Ցանկության դեպքում տարեցները կարող են իրենց մթերքով խոհանոցում ևս ճաշ պատրաստել, եթե գազօջախը ազատ լինի:

Ծերատան տնօրենը նշեց, որ արտասահմանից պարբերաբար մեծ քանակությամբ կիսապատրաստի սուպեր են ստանում, որոնց համը տարեցներին դուր չի գալիս: Սակայն, քանի որ ստանում են, չեն կարող չօգտագործել:

Այսպիսով, Վանաձորի ծերատանը խնամառուներին տրվող սննդի չափաքանակը և էներգետիկ արժեքը համապատասխանում է օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին: Այնուամենայնիվ, տրամադրվող սննդի որակը չի գոհացնում խնամառուներին:

## Առաջնային բուժօգնություն

### Օրենսդրության վերլուծություն

Լոռու մարզային հոգեև յարդաբանական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը եվ Վանաձորի մանկատանը իրականացված մոնիթորինգի արդյունքները

**ՄԱԿ-ի «Տարեցների նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները»** 1991թ. 46/91 բանաձևի 11-րդ կետը սահմանում է. տարեց մարդկանց համար պետք է մատչելի լինի բուժսպասարկումը, որը հնարավորություն է տալիս նրանց պահպանել կամ վերականգնել ֆիզիկական, հոգեկան և էմոցիոնալ բարեկեցության օպտիմալ մակարդակը և կանխարգելել հիվանդությունների սկիզբը:

**ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝** յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք:

**ՀՀ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»** օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Համաձայն **ՀՀ կառավարության 2006թ-ի դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշման 31-րդ կետի** բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կազմակերպում է հաճախորդների առաջնային բուժօգնությունը, ստացիոնար բուժական հաստատություն ուղեգրումը, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումը, բժշկասոցիալական փորձաքննությունը:

Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության բժիշկը յուրաքանչյուր օր կազմակերպում է բոլոր հաճախորդների համայն և նրանց ցույց տալիս անհրաժեշտ բուժօգնություն, իսկ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ իրականացնում է բոլոր հաճախորդների բուժզննում և կատարում գրառում հաճախորդի բժշկական քարտում:

Հաճախորդին ստացիոնար բժշկական հաստատություն տեղափոխելու դեպքում բնակչության սոցիալական հաստատությունը կազմակերպում է նրա սննդի ապահովումը:

**ՀՀ կառավարության «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին»** 2004թ-ի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ սահմանված է անվճար բուժօգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցանկը, որտեղ ընդգրկված են նաև ծերատան խնամառուները:

Վանաձորի ծերատան կանոնադրության 2.2 կետի համաձայն՝ ծերատունն իրականացնում է խնամառուների բուժ-

ՎԱՆԱՁՈՐԻ ԾԵՐԱՏԱՆԵՆ  
ԱՊՐՈՂ ԱՆԿՈՂԱՅԻՆ  
ՀԻՎԱՆԴ



պասարկումն ու դիսպանսերիզացումը, մասնագետների խորհրդատվության կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում՝ բուժփիննարկ հոսպիտալացումը: Գնարավորության սահմաններում ծերատունը խնամառուներին ապահովում է լսողական ապարատներով, ակնոցներով, պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով:

Յիմնական շարադրանք

Վանաձորի ծերատան խնամառուների բուժսպասարկումն իրականացվում է 1 բժշկուհու ու 4 բուժքույրերի միջոցով, որոնք աշխատում են 4 հերթափոխով:

Բժշկուհու հավաստմամբ՝ բուժկետն արդեն 6 տարի է ապահովված է առաջնային բուժօգնության համար անհրաժեշտ ամեն ինչով:

Ծերատուն ընդունվելիս գրեթե բոլորը տարեցները առողջական խնդիրներ են ունեցել: Բժշկուհու հավաստմամբ՝ նրանք բոլորն ստացել են համապատասխան բուժում:

**Այժմ տարեցների մոտ առկա են հետևյալ հիվանդությունները՝** ինսուլտ (6 ծեր), շաքարային դիաբետ (3 ծեր), էպիլեպսիա (3 ծեր), հիշողության կորուստ (2 ծեր), որովայնի ճողվածք (1 ծեր), նաև հիպերտոնիա, աղեստամոքսային հիվանդություններ, տղամարդկանց մոտ՝ շագանակագեղձի բորբոքումներ: Կան 6 անկողնային հիվանդներ, 5 տարեցներ ունեն հոգեկան առողջության խնդիրներ: Վանաձորի ծերատան բոլոր տարեցներն ունեն անհատական բժշկական քարտեր:

Գաշմանդամության խումբ ունեն 7 տարեցներ, որոնցից երկուսն առաջին խմբի հաշմանդամ են, չորսը՝ երկրորդ խմբի, իսկ մեկն ունի հաշմանդամության երրորդ խումբ:

Տարեցների հավաստմամբ՝ յուրաքանչյուր առավոտ բուժքույրն ստուգում է իրենց առողջական վիճակը, չափում ճնշումները:

Ծերատունը համագործակցում է ամերիկյան «IRD» հումանիտար կազմակերպության հետ, որը հիմնականում տրամադրում է ճնշում իջեցնող, ցավազրկող, հակաբորբոքային դեղեր, աչքի կաթիլներ, դեղեր փորլուծի դեմ, հոդացավերի, խոցերի դեմ, նաև՝ քսուքներ, տակդիրներ:

«Տարեցների մոտ առկա հիվանդությունների բուժման համար անհրաժեշտ դեղորայքը, որը ծերատունը չի ստանում, ստիպված գնում են տարեցները»,-նշում է բժշկուհին: Տարեցները ևս հավաստում են, որ ծերատանը որոշ դեղամիջոցներ անվճար տրվում են /գլխացավի, սրտի, ճնշման/, որոշ դեղեր իրենք են գնում:

**«Եթե դեղը լինում է, ժամանակին ստանում ենք, իսկ եթե չի լինում, ասում են՝ գնա առ»,- նշեց տարեցներից մեկը: Անկողնային հիվանդներից մեկը, ով աղեստամոքսային հիվանդություն ունի նշեց, որ 8 տարի է՝ դեղեր է խմում և դեղերը գնում է իր կենսաթոշակով:**

Բժշկի կարծիքով՝ **«Սխալ է, որ տարեցի թոշակը մնա իր մոտ: Եթե թոշակը մնում է տարեցների ձեռքին, կորչում է կամ նրանց հարազատներն են վերցնում: Տարեցները ո՛չ սննդի են փող տալիս, ո՛չ խմիչքի, ինչու՞ իրենց գումարն իրենց վրա չձախսեն»:**

Վանաձորի ծերատանը հոգեկան խանգարումով տառապող 5 տարեցներ կան, որոնք հաշվառված են Լոռու մարզային հոգեմյարդաբանական դիսպանսերում: Ծերատան բժշկի հավաստմամբ՝ նախկինում դիսպանսերն անվճար տրամադրում էր անհրաժեշտ դեղամիջոցները: Այժմ հիվանդներն իրենք են գնում անհրաժեշտ դեղորայքը:

Լոռու մարզային հոգեմյարդաբանական դիսպանսերի տնօրենի հիմնավորմամբ՝ քանի որ ծերատունն է իրականացնում տարեցների խնամքը, անհրաժեշտ բոլոր

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերուս,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

դեղամիջոցները ևս պարտավոր է տրամադրել ծերատունը:

Ծերատան խնամառուները հաշվառված են պոլիկլինիկայում: Անհրաժեշտության դեպքում նրանց տեղափոխում են պոլիկլինիկա կամ հիվանդանոց, որտեղ նրանք սպասարկվում են անվճար հիմունքներով: Բժշկուհու հավաստմամբ՝ վերջին մեկ տարվա ընթացքում այդպիսի 15 դեպք է եղել:

**«Այստեղ ապրելու ընթացքում մի անգամ ընկել են, թև կտորել և 4500 դրամ են վճարել՝ թև գիպս դնելու համար»**, -նշել է տարեցներից մեկը:

Այն դեպքերում, երբ հիվանդանոցում չի լինում անհրաժեշտ դեղորայքը, դրանք գնվում են տարեցների միջոցներով: Եթե նրանց թոշակը չի բավականացնում, դեղորայքի ձեռքբերման համար գումար է հատկացնում նաև ծերատունը:

Հիվանդանոցում բուժվելու ընթացքում հիվանդի սննդի հարցը հոգում է ծերատունը:

Որպես գոյություն ունեցող խնդիր՝ բժշկուհին նշեց, որ հիվանդանոցում բուժվելու ընթացքում տարեցները խնամող չեն ունենում, հազվադեպ տարեցներին խնամում են հարազատները:

Բուժանձնակազմի հավաստմամբ՝ Վանաձորի թիվ 2 հիվանդանոցի բուժաշխատողները տարեկան մեկ անգամ Ծերատան բուժկետում խորհրդատվություն են կազմակերպում տարեցների համար և համապատասխան գրանցումներ կատարում նրանց բժշկական քարտերում:

Համալիր բուժզննություն անցնելու հաճախականության մասին տարեցները տարբեր պատասխաններ են տալիս: «Նախանցյալ տարի պոլիկլինիկայից եկել էին համալիր ստուգման», -նշում է տարեցը: «Ես ինչ եկել եմ այստեղ, միայն ընդունելիս են համալիր բժշկական ստուգում անցկացրել», - նկատում է տարեցներից մեկը, ով արդեն 2 տարի ապրում է ծերատանը:

Տարեկան 2-3 անգամ ծերերից քուրքներ են վերցնում:

Պրոթեզաօրթոպեդիկ եւ վերականգնողական պարագաներով ապահովումը

Ծերատունը պայմանագիր է կնքել Վանաձոր քաղաքի ստոմատոլոգիական կենտրոններից մեկի՝ «Դենս» կլինիկայի հետ, որը պարտավորվել է անվճար սպասարկել ծերատան խնամառուներին, մասնավորապես՝ իրականացնել տարեցների ատամների բուժումը, հեռացումը և ամսական 1 պրոթեզի պատրաստումը: Ծերատունը երեք տարեցների ապահովել է լսողական սարքերով:

Տարեցներից մի քանիսը նշեցին, որ դիմել են ակնոցների ու պրոթեզի համար, սակայն նրանց պատասխանել են, որ ծերատունը ֆոնդ չունի:

Այսպիսով, ծերատունն իրականացնում է խնամառուների առաջնային բուժօգնությունը: Հնարավորության սահմաններում տրամադրում է պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, սակայն հիվանդությունների բուժման համար անհրաժեշտ դեղորայքը տարեցները գնում են իրենց միջոցներով:

Տարեցների նկատմամբ վերաբերմունքը

Օրենսդրության վերլուծություն

**Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով**՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի:

քի կամ պատժի:

**Նույն դրույթը սահմանում է նաև Մարդու իրավունքների հանդնդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածը:**

**Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածով`** ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային, իր արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի կամ պատժի:

**ՄԱԿ-ի «Տարեցների նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները» 1991թ. 46/91 բանաձևի 17-րդ կետի համաձայն`** տարեց մարդիկ պետք է հնարավորություն ունենան վարելու արժանավայել ու անվտանգ կենսակերպ և չենթարկվել շահագործման ու ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման:

**Նույն բանաձևի 18-րդ կետի համաձայն`** տարեց մարդիկ արդարացի վերաբերմունքի իրավունք ունեն` անկախ տարիքից, սեռից, ռասսայական կամ էթնիկական պատկանելիությունից, հաշմանդամությունից կամ այլ կարգավիճակից:

**ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածը** սահմանում է` ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Վանաձորի ծերատան հետ կնքած պայամանագրում ամրագրված են խնամառուների /տարեցների/ իրավունքներն ու պարտականությունները: Պայմանագրի 2.3 կետը նշում է, որ խնամառուն պարտավոր է.

- ենթարկվել ծերատանը հաստատված ներքին կարգապահության և համակեցության կանոններին
- չօգտագործել ալկոհոլային խմիչքներ
- չկազմակերպել և չընդգրկվել անկարգությունների կազմակերպմանը
- չլքել ծերատան տարածքն առանց գրավոր թույլտվության կամ իրազեկման
- հետևել անձնական հիգիենայի կանոններին:

Ծերատանից դուրս գալու թույլտվություն ստանալու համար տարեցները պետք է դիմեն ծերատան տնօրենին, հիմնավորեն, թե ուր և ինչու են ցանկանում գնալ, որպեսզի թույլտվություն ստանան: Այդ դեպքում բժիշկը չափում է նրանց ճնշումը, և եթե առողջական վիճակը բավարար է լինում, նրանց անցաթուղթ է տրվում:

Խնամառուն իրավունք ունի

- դուրս գրվել ծերատանից հարազատների մոտ վերադառնալու կապակցությամբ
- դուրս գրվելու ժամանակ ստանալ իրեն պատկանող անձնական իրերն ու փաստաթղթերը:

Հիմնական շարադրանք

Վանաձորի ծերատան խնամառուների նկատմամբ անձնակազմի վերաբերմունքի վերաբերյալ տարեցները տարբեր տեսակետներ ունեն:

**Տարեցներից մի քանիսը չցանկացան մեզ հետ զրուցել ընդհանրապես` բացատրելով, որ իրենց համար հետո վատ կլինի:**

Տարեցների այն խումբը, որն օգնում է ծերատան աշխատակիցներին նրանց անեցորյա աշխատանքում, նշում են, որ աշխատակիցներն իրենց լավ են վերաբերվում:

Տարեցների մի մասի կարծիքով էլ` իրենց նկատմամբ աշխատակազմի լավ վերա-

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

բերմունքը պայմանավորված է նրանով, որ իրենք էլ աշխատողներին են լավ վերաբերվում: «Ես աշխատողներին լավ եմ վերաբերվում, նրանք էլ ինձ են լավ վերաբերվում», - նշեց նրանցից մեկը:

**«Ինձ լավ են վերաբերում, ես անտառից միրգ եմ բերում աշխատողների համար»**, - նշեց տարեցներից մեկը:

Տարեցների մյուս մասի կարծիքով՝ աշխատողներն իրենց վատ են վերաբերվում. արհամարհական տոնով, կոպիտ են խոսում իրենց հետ: **«Մեզ արհամարհում, կոպիտ են պատասխանում, եթե մի բան էլ ասես, կծեծեն, դուրս կգցեն մյուսների մնան»**, - նշեցին նրանք:

**«Ասել եմ, որ ճաշերն ուտելու բան չեն, աշխատողները հարծակվել են վրաս: Դրանից հետո սկսեցին ինձ վատ վերաբերվել»**, - մասնավորեցրեց տարեցներից մեկը:

Տարեցների մյուս մասն էլ աշխատակիցների վերաբերմունքը գնահատել է **«ոչ թե խնամակալական, այլ վերահսկողական»**: Նրանց հավաստմամբ՝ տարեցների նկատմամբ Վանաձորի ծերատանը նաև ֆիզիկական բռնություններ են կիրառվում: **«Աշխատողները «գազան» են, ի՞նչ վերաբերմունքի մասին է խոսքը, - դժգոհեց տարեցներից մեկը, - բոլորը կոպիտ են վերաբերվում, նույնիսկ խփում են ծերերին»**:

Մեր հարցին, թե «Իսկ դիմե՞լ եք տնօրենին», պատասխանեց. **«Ի՞նչ դիմենք, հավանաբար տնօրենը տեղյակ է, եթե նա թույլ չտա, մեզ հետ այդպես չեն վերաբերվի»**:

«Այստեղ չի կարելի ակոհուլային խմիչքներ օգտագործել: Երբ ես նոր էի եկել, մի քիչ խմել էի, Վաղոն ինձ ծեծեց ու «գուբախտ» նստեցրեց, - նշում է տարեցներից մեկը /գուբախտ կոչվածը առանձին ավտոտնակ է, իսկ Վաղոն ծերատան վարորդն է/»:

Ըստ տարեցների՝ իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի համար իրենք ներողություն են խնդրում:

Տարեցները նշեցին, որ աշխատողներն անկողնային հիվանդների նկատմամբ անտարբեր են: Անգամ նրանց հագուստը փոխելիս կամ սափրելիս չեն թաքցնում զգվանքը, ձեռնոցներ են հագնում, որ չզգվեն:

«Սանիտարները ժամը 13:00-ին գալիս են, ժամը 14:00-ին գնում: Իսկ անկողնային հիվանդներին շուրջօրյա խնամք է անհրաժեշտ», - նշեց տարեցներից մեկը: «Մեկուսարանից անկողնային հիվանդ մի կին է անընդհատ գոռում, որ նրա մոտ գնան, սակայն ոչ ոք ուշադրություն չի դարձնում: Եթե ինչ-որ մեկին մի բան պատահի, ոչ ոք չի իմանա: Կես տարի առաջ մի կին է ծխելուց այրվել ու մահացել: Ոչ ոք չի իմացել, որ փրկեն նրան»:

Վանաձորի ծերատանն ապրող տարեցները հիմնականում չգիտեն իրենց իրավունքների մասին:

Նրանք գրեթե տեղյակ չեն նաև, թե ինչի համար են պահվում իրենց թոշակների 40%-ները: Այն հարցին, թե ինչու չեք հարցնում ինչ նպատակով են պահում, տարեցներից մեկը պատասխանեց. «Եթե հարցնես, կքշեն այստեղից»: «Մի մարդ կար, խմում էր, հայիոյում, ծեծեցին ու դուրս արեցին»: «Մեկին էլ դուրս արեցին, քանի որ լրագրողի մոտ դժգոհել էր, թե թոշակների 40%-ը պահում են»:

Տարեցներից մեկը համոզված էր, որ իր 8.000 դրամ թոշակից 4.000-ը պահում են, որպեսզի մահանալու դեպքում թաղման ծախսերը հոգան: Միայն նրանցից մեկը նշեց, որ մոտ օրերին՝ հոկտեմբերի 1-ին, **«Տարեցների միջազգային օրվա»** առթիվ ծերատանը կազմակերպված միջոցառումը հավանաբար իրենց թոշակներից հավաքված գումարով է եղել:

Ծերատանը որպես տարեցների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցներ՝ տարեցները թվարկեցին նկատողություն անելը, վախեցնելը, ծերատանից

հեռացնելը: Նրանք նշեցին, որ մի քանի տարեցների վնդդեղ են ծերատանից, քանի որ նրանք եղել են ագրեսիվ ու չեն ենթարկվել:

Ծերատան տնօրենի հավաստմամբ՝ տարեցների թոշակներից հավաքված գումարով ծերատան համար աթոռներ են գնել, սառնարան: Գնել են նաև միկրոավտոբուս, որի արժեքի մի մասը ևս հատկացվել է այդ գումարներից:

Ծերատան խնամառուները, որպես կանոն, գոհ են տնօրենից. «Տնօրենը լավ մարդ է, բայց որ մի քիչ լավ հսկեր, շատ լավ կլիներ»:

Տարեցների կողմից Վանաձորի ծերատանն առաջարկություներ, բողոքներ ներկայացնելը

Վանաձորի ծերատունը հատուկ մշակված համակեցության և կարգապահական կանոններ չունի:

Տնօրենի հավաստմամբ՝ տարեցներին իրեն հիմնականում դիմում են ծերատանից դուրս գալու թույլտվություն ստանալու համար, նաև սենյակը փոխել ցանկանալու կամ աշխատողի հետ որևէ խնդիր ունենալու դեպքում:

Տարեցների կողմից բարձրացված հարցերը հիմնականում լուծվում են, մասնավորապես մի քանի ծերերի թույլ է տրվել փոխել սենյակը, քանի որ չեն կարողացել համակերպվել իրենց սենյակակցի հետ:

Դուրս գալու համար տնօրենից թույլտվություն վերցնելը տարեցների մոտ դժգոհություն է առաջացնում: Նրանք գտնում են, որ պետք է ընդամենը տեղյակ պահել, ոչ թե թույլտվություն խնդրել:

Տարեցների հետ հարցազրույցների արդյունքում պարզվեց, որ որոշ դեպքերում նրանք խուսափում են տնօրենին դիմել՝ համոզված լինելով, որ ոչինչ չի փոխվելու: Նրանցից մեկը նշեց, որ առաջարկել են իրենց թոշակներից պահած գումարով իրենց տանել էքսկուրսիա Արարատյան դաշտավայր, սակայն առաջարկությունն ինչ-ինչ պատճառներով չի ընդունվել:

Դահլիճի հեռուստացույցը լավ չէր ցույց տալիս, տարեցներն ասացին, որ մալուխը վնասված է: Մեր այն հարցին, թե ինչու չեն դիմում աշխատողներին, պատասխանեցին. «Դե ինչ դիմենք, միևնույնն է, ոչինչ չի փոխվելու»:

Տարեցների բոլոր սենյակների դռների վրա ազդանշանային զանգի կոճակներ կային, որոնք միացված էին բուժկետին: Դրանով տարեցները կարող էին անհրաժեշտության դեպքում կանչել բուժաշխատողներին: Ազդանշանային կոճակները, սակայն, չէին աշխատում: Ըստ տնօրենի նախատեսվում էր վերանայել կոճակների տեղադրման վայրը, դրանք տեղափոխել նրանց անկողինների մոտ:

Ծերատանը հաճախ վեճեր են լինում ինչպես ծերերի, այնպես էլ ծերերի ու աշխատողների միջև: Սակայն ծերատունը չունի մշակված միջանձնային խնդիրների կարգավորման մեխանիզմ: Խնդիրների կարգավորումը հիմնականում դրված է տնօրենի վրա:

Ժամանակ առ ժամանակ բոլորի սենյակների պահարանները ստուգվում են բժշկի, բուժքրոջ կամ խնամող քրոջ կողմից՝ օղի, դանակ, կամ փչացած սնունդ գտնելու նպատակով:

Վանաձորի ծերատան տնօրենի հավաստմամբ՝ փորձել են տարեցների խորհուրդ ստեղծել, որը պետք է զբաղվեր ծերերին հուզող հարցերով: Նույնիսկ ընտրել էին լիդերների /և՛ կին, և՛ տղամարդ/, սակայն խորհուրդը չի գործել, քանի որ տարեցները հրաժարվել են ենթարկվել մյուս՝ լիդեր տարեցներին:

Խտրականության դրսևորումները Վանաձորի ծերատանը

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

Տարեցների կարծիքով՝ ինչպես բոլոր տեղերում, այնպես էլ Վանաձորի ծերատանը առկա է խտրականությունը:

Այն տարեցները, ովքեր վայելում են աշխատողների հարգանքը կամ նրանց համար որոշակի աշխատանքներ են կատարում, արժանանում են ավելի բարեհաճ վերաբերմունքի:

Թեև արգելված է սենյակում էլեկտրական սալիկ /պլիտա/ ունենալ, որոշ ծերերի տնօրենը թույլ էր տվել: Տարեցներից ոմանք նշեցին, որ, ի տարբերություն մյուսների, իրենց այցելուներին թույլ է տրվում սենյակ բարձրանալ:

«Ես երբեմն շաբաթվա մեջ նույնիսկ երկու անգամ են լողանում, ամենքին չէ, որ թույլ են տալիս», - հպարտանալով նշեց տարեցներից մեկը:

«Բժշկուհին լավն է, ինձ բարձր ներքնակ է տվել, ամենքին չեն տալիս», - ասաց տարեցներից մեկը:

Սակայն կային նաև տարեցներ, ովքեր սրտնեղեցին անհավասար վերաբերմունքից. «Ոմանց 5 կտոր հագուստ են տալիս, ոմանց՝ ոչ մի բան»:

«Ատամ չունենմ, ինձ նման աշխատող մարդու ատամները չեն գցում.....»

«Աշխատողներն ուրիշ բաներ են ուտում (օրինակ՝ խորոված), մեզ ուրիշ բաներ են տալիս: Բողոքել եմ, թե ինչու մեզ էլ չեք տալիս, պատասխանել են. «Ի՛նչ է, իսկ օղի չե՞ս ուզում»:

Տարեցների կողմից կատարվող աշխատանքները

Օրենսդրության վերլուծություն

**ՄԱԿ-ի՝ 1991թ. «Տարեցների նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները» 46/91 բանաձևի համաձայն՝** տարեց մարդիկ պետք է իրավունք ունենան կամավոր հիմունքներով այնպիսի աշխատանք կատարելու, որը համապատասխանում է նրանց հետաքրքրություններին ու հնարավորություններին:

ՀՀ ազգային օրենսդրությամբ խնամակալական հաստատությունների, դրանցում խնամառուների պահման հարաբերություններին վերաբերող իրավական ակտերում տարեցների աշխատանքին վերաբերող դրույթներ չկան:

Հիմնական շարադրանք

Վանաձորի ծերատան խնամառուները որոշ աշխատանքներ են կատարում ծերատանը:

Տատիկներից ոմանք մաքրում են ծերատան սրահը, փոշեկուլով մաքրում գորգերը, ոմանք էլ օգնում են խոհանոցի աշխատողներին՝ ափսեներ են լվանում, կարտոֆիլ մաքրում:

«Ծերատուն գալու առաջին տարին ես էի մաքրում առաջին հարկի միջանցքը, սենյակները, - նշել է տարեցներից մեկը: Աշխատողները խնդրեցին օգնել իրենց, ես էլ չներժեցի»:

Որոշ տարեցներ, բացի իրենց սենյակները մաքրելը, նաև իրենց հագուստներն են լվանում:

Կան տարեցներ, ովքեր ծանր /անկողնային/ հիվանդների համար խոհանոցից ճաշ են տանում, ուտեցնում, փոխում են նրանց պամպերները: Հիվանդներից մի քանիսն ակնարկեցին, որ վճարում են տարեցներին որոշ ծառայությունների դիմաց:

Պապիկներից ոմանք երբեմն ծերատան բակն են մաքրում, երբ աշխատողի հան-

գաստյան օրն է լինում, փայտ են կոտրում, ձմռանը բակի ծյունն են մաքրում:

«Երբ նոր էի եկել, ինձ 10 ամիս փայտ ջարդել են տվել, բակի ծյունը մաքրել: 10 ամսվա ընթացքում ինձ ոչինչ չեն վճարել, երբեմն ծխախոտ են տվել»:

Կան տարեցներ, ովքեր ամռանն անտառ են գնում, մասուր, ազնվամորի են բերում ու բաժանում ապրողներին ու աշխատողներին:

Որոշ տարեցներ մշակում են ծերատան կից հողամասը, ցանում են բազուկ, գագար, լոբի, դդում, պոմիդոր, արևածաղիկ, ծաղկանոցն են խնամում: 2 տարեցներ ծերատան բակում կառուցած ինքնաշեն հավանոցներում հավ են պահում:

**Տարեցների հավաստմամբ՝ այդ աշխատանքները կատարում են իրենց ցանկությամբ, դրա դիմաց չեն վարձատրվում:**

Տարեցների սոցիալ-հոգեբանական օգնությունը

Օրենսդրության վերլուծություն

**ՄԱԿ-ի՝ 1991թ. «Տարեցների նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները» 46/91 բանաձևի 12-րդ կետով՝** տարեցները պետք է հնարավորություն ունենան օգտվել սոցիալական և իրավական ծառայություններից՝ նրանց անկախությունը մեծացնելու, պաշտպանվածությունն ուժեղացնելու և խնամքը բարելավելու նպատակով»:

«Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» **ՀՀ կառավարության 2006թ-ի դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշման 31-ին կետի համաձայն՝** բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը կազմակերպում է հաճախորդների սոցիալ-հոգեբանական օգնությունը, իրավաբանական խորհրդատվությունը:

Յիմևական շարադրանք

Վանաձորի ծերատան խնամառուները նման ծառայություններից օգտվելու հնարավորություն չունեն, քանի որ ծերատունը չունի ո՛չ հոգեբան, ո՛չ սոցիալական աշխատող և ո՛չ՝ էլ իրավաբան:

Տնօրենի հավաստմամբ՝ իրենք իրավաբանի կարիք այդքան էլ չունեն, սակայն մտադիր են հունվար ամսից աշխատանքի ընդունել հոգեբան ու խնամող: Ներկայումս նոր հաստիքների վերաբերյալ առաջարկություն են ներկայացրել հովանավորին և սպասում են պատասխանի:

Տարեցների հուղարկավորությունը

Օրենսդրության վերլուծություն

Համաձայն **ՀՀ կառավարության 2006թ-ի դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշման 40-րդ կետի՝** հաճախորդի մահվան դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության ղեկավարն անհապաղ տեղյակ է պահում հանգուցյալի հարազատին (եթե այդպիսիք կան)՝ հուղարկավորությունը կազմակերպելու համար:

Հարազատների բացակայության կամ հանգուցյալի հուղարկավորությունը կազմակերպելուց նրանց հրաժարվելու դեպքում հուղարկավորությունը կազմակերպում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը»:

Յիմևական շարադրանք

Վանաձորի ծերատան տնօրենը նշեց, որ նախկինում տարեցի մահանալու դեպ-

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

քում նրան թաղելու համար ծերատան խնդրանքով որևէ տեղ տարածք էր հատկացվում: Տարածքները կարող էին լինել գերեզմանատան տարբեր հատվածներում, որտեղ որ ազատ տեղ էր գտնվում: Հետագայում այդ գերեզմաններն անուշադրության էին մատնվում, և դա մտահոգում էր իրեն:

Ներկայումս տնօրենը դիմել է Վանաձորի քաղաքապետարան, որը 350 քմ է հատկացրել ծերատանը՝ որպես գերեզմանատուն: Ծերատան միջոցներով այդ տարածքը ցանկապատվել է, բարեկարգվել: Այժմ ծերատան բոլոր խնամառուներին այնտեղ են թաղում, եթե նրանք չեն ունենում ընտանեկան գերեզմանոցներ:

Այսպիսով, Վանաձորի ծերատանը խնամառուների հետ կնքվող պայմանագրով սահմանված են նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Պարտականությունները չկատարելու դեպքում կիրառվում են պատժամիջոցներ, այդ թվում նաև ֆիզիկական ու հոգեբանական բռնություններ:

Խնդիրների առկայության դեպքում ոչ միշտ է, որ տարեցները դիմում են տնօրենին, տարեցների շրջանում մտահոգություն կա, որ միևնույն է ոչինչ չի փոխվելու:

Տարեցները տեղյակ չեն, թե ինչ նպատակով են իրենց թոշակներից պահումներ արվում և ինչպես են դրանք տնօրինվում:

Աշխատակիցների կողմից տարեցների նկատմամբ վերաբերմունքն ավելի շատ վերահսկողական է, քան խնամակալական: Առկա են նաև խտրականության դրսևորումներ: Ծերատունը չունի միջանձնային հարաբերությունների կարգավորման մեխանիզմ:

Տարեցներին չի տրամադրվում սոցիալ-հոգեբանական, հարկ եղած դեպքում նաև իրավաբանական օգնություն:

Պատշաճ ուշադրության են արժանանում ծերատան խնամառուների հուղարկավորման և գերեզմանների խնամքին վերաբերող հարցերը:

## Տարեցների ազատ ժամանցի կազմակերպումը

Օրենսդրության վերլուծություն

**ՄԱԿ-ի՝ «Տարեցների նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները» 1991թ. 46/91 քանակի 16-րդ կետի համաձայն՝** «տարեցների համար պետք է մատչելի լինեն կրթությունից, մշակութային, հոգևոր կյանքից, ինչպես նաև հանգստից օգտվելը»:

Ծերատան կանոնադրության 2.2 կետի համաձայն՝ ծերատունը կազմակերպում է կուլտուր-մասսայական աշխատանքներ՝ հաշվի առնելով խնամառուների տարիքն ու առողջական վիճակը հաշվի առնելով»:

Հիմնական շարադրանք

Վանաձորի ծերատունն ունի 3 հեռուստացույց, որոնք համապատասխանաբար տեղադրված են 1-ին հարկի գրադարանում, ճաշարանում և 2-րդ հարկի դահլիճում: Թեև ծերատունը 2 ավեհավաք ունի, սակայն ծերերը յուրաքանչյուր հեռուստացույցով հնարավորություն ունեն դիտել մեկ հեռուստաալիք /Յ1, REN TV ալիք/:

Աշխատողների հավաստմամբ՝ իրենք այնպես են արել, որ յուրաքանչյուր հեռուստացույցը միայն 1 հեռուստաալիք է ցույց տալիս, քանի որ տարեցները տարբեր ալիքներ դիտելու համար վիճում են միմյանց հետ:

«Երբ եղանակը վատանում է, այդ մի հեռուստաալիքը նայելու հնարավորությունից

էլ ենք զրկվում, քանի որ անձրևների ժամանակ աշխատողները հեռուստացույցն անջատում են, որ չփչանա», - նշեցին տարեցները:

Տնօրենի հավաստմամբ, քանի որ ծերատունը շրջապատված է սարերով, ապա սովորական ալեհավաքը ոչ մի հեռուստաալիք ցույց չի տալիս: Միայն արբանյակային ալեհավաքներով է հնարավոր հեռուստացույց նայել, սակայն այս դեպքում հնարավորություն ունեն նայելու ընդամենը 2 հեռուստաալիք:

Ոչ բոլոր տարեցներն են կարողանում հեռուստացույցը միացնել կամ հեռուստաալիքները փոխել, քանի որ հեռուստացույցների վահանակները տնօրենի սենյակում են գտնվում:

Բացի այդ, տարեցները խնամքով չեն վերաբերվում գույքին, փչացրել են հեռուստացույցների կոճակները: Ուստի, տնօրենը ստիպված է եղել հեռուստացույցների վահանակներն իր աշխատասենյակում դնել: Առաջիկայում մտադիր են մեծ էկրանով հեռուստացույց գնել, որը տեղադրելու են դահլիճի պատին՝ բարձր տեղում, որպեսզի տարեցները չվնասեն այն:

Բացի հեռուստացույց դիտելը, Վանաձորի ծերատան խնամառուներն ազատ ժամերին կարող են գիրք կարդալ, նարդի, խաղաթուղթ, շաշկի կամ շախմատ խաղալ, զբոսնել ծերատան շրջակայքում, կանայք կարում են, զբաղվում ասեղնագործությամբ:

Ըստ տարեցների՝ երբ որևէ գիրք են ցանկանում կարդալ, որը գրադարանում չկա, ոչ մի աշխատողի չեն դիմում, քանի որ չեն ցանկանում անհանգստություն պատճառել նրանց:

Տարեցներից ոմանք ասացին, որ թերթեր, ամսագրեր չեն ստանում, ոմանք նշեցին. «Թերթեր ստանում ենք՝ ընդամենը 10 հատ, այն էլ ով հասցնում, նա է վերցնում»:

Որոշ տարեցներ իրենց սենյակներում ռադիոընդունիչներ ունեն, որոնք իրենց հետ տնից են բերել կամ գնել են իրենց միջոցներով: «Նախկինում բոլոր սենյակներում ռադիո կար, - նշեց տարեցներից մեկը, - բայց տնօրենը հանել է տվել դրանք»:

Տնօրենը նշեց, որ թեև պահեստում ունեն ռադիոընդունիչներ, սակայն իրականում ծերատունը երբեք ռադիոյի գիծ չի ունեցել, ներկայումս նույնպես չունի: Ծերատունը հիմնականում ստանում է ժամանցային թերթեր, մասնավորապես՝ շաբաթական մեկ անգամ ստանում են 5-6 օրինակ «Վանաձորյան խճանկար», 2-3 օրինակ «TV Մոլ»:

Տարեցների հավաստմամբ՝ իրենց տարեկան 1-2 անգամ որևէ տեղ էքսկուրսիա են տանում. «Ամառները Սևան են տանում, այս ամռանը էքսկուրսիա են տարել Ստեփանավանի բուսաբանական այգի», - նշեց նրանցից մեկը:

Ծերատանը տոնում են Նոր Տարին, Մարտի 8-ը, Տարեցների միջազգային օրը:

Հոկտեմբերի 1-ին նշել են «Տարեցների միջազգային օրը»: Հոկտեմբերի 3-ին Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ ծերատուն է այցելել «Հանուն Գուգարաց աշխարհի» բարեգործական ՀԿ-ի նախագահ Վ. Բաղդասարյանը, տարեցների համար փոքրիկ նվերներ է տարել, իսկ ծերատանը հեռուստացույց է նվիրել:

Տոն օրերին տարեցներին տոնական ճաշ, 50-ական գրամ սպիրտային խմիչք է տրվում, տարեցները երգում են, պարում, արտասանում:

Այսպիսով, Վանաձորի ծերատանը խնամառուների ազատ ժամանցի կազմակերպման համար ընդհանուր առմամբ կան համապատասխան պայմաններ: Տարեցները կարող են անարգել օգտվել հեռուստացույցից, ունեն նաև գրադարանից օգտվելու հնարավորություն:

Ծերատունը ստանում է որոշ ժամանցային թերթեր, սակայն ոչ բոլոր խնամառուներն են կարողանում օգտվել դրանցից:

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

Ծերատանը տոնակատարություններ են լինում, նաև կազմակերպվում են էքսկուրսիաներ:

### Տեսակցությունները

#### Օրենսդրության վերլուծություն

ՀՀ կառավարության «Ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» 2006թ-ի դեկտեմբերի 7-ի N 1874-Ն որոշման 36-րդ կետի համաձայն՝ հաճախորդներին կարող են այցելել իրենց հարազատներն ու ծանոթները:

#### Հիմնական շարադրանք

Վանաձորի ծերատանը խնամառուներին այցելության հատուկ օրերն են սահմանված շաբաթն ու կիրակին՝ ժամը 9:00-ից 18:00-ն:

Բացառությամբ ծանր անկողնային հիվանդների, խնամառուների հարազատներին չի թույլատրվում բարձրանալ տարեցների սենյակներ, քանի որ, տնօրենի հավաստմամբ, եղել են դեպքեր, երբ խնամառուի հարազատի այցելությունից հետո նրա հետ նույն սենյակում ապրող տարեցը դժգոհել է, որ ինչ-որ բան է կորել սենյակից:

Այսպիսով, ծերատան խնամառուներն ունեն իրենց հարազատների ու ծանոթների հետ տեսակցության հնարավորություն:

#### Հաղորդակցումը

Ծերատունն ապահովված է 3 հեռախոսով: Դրանք գտնվում են ծերատան 1-ին հարկում՝ պահակի սենյակում, 2-րդ հարկում՝ հաշվապահությունում և տնօրենի սենյակում: Հաստատության հեռախոսները միացված են զուգահեռ կապով:

Տարեցները նշել են, որ ոչ միշտ են հնարավորություն ունենում առանց որևէ մեկի ներկայության խոսել հեռախոսով: Երբեմն աշխատողների հրահանգով տարեցներից ոմանք, նաև որոշ պահակներ ուշադիր են լինում, թե տարեցները հեռախոսով ում հետ ինչ են խոսում:

«Ես նախընտրում եմ հեռախոսից օգտվել ժամը 17:00-ից հետո, երբ հաշվապահությունն արդեն փակ է լինում: Մեկ էլ տեսար՝ հեռախոսը վերցրեցին ու լսեցին իմ խոսակցությունը, ամհարմար եմ զգում», - նշել է տարեցներից մեկը:

Տարեցներին չի թույլատրվում զանգել բջջային հեռախոսահամարներին:

Այսպիսով, թեև ծերատունն ապահովված է հեռախոսով, սակայն ոչ միշտ է պահպանվում տարեցների՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը:

#### Տարեցների սեփականությունը իրավունքը

ՀՀ Սահմանադրություն 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կուտակելու իր սեփականությունը:

Վանաձորի ծերատան կանոնադրության 4.8 կետի համաձայն՝ ծերատունը ընդունվելիս խնամառուն ամբողջությամբ կամ մասնակիորեն ծերատանն է նվիրաբերում սեփականության իրավունքով իրեն պատկանող շարժական կամ անշարժ գույքն ու միջոցները: Մնացած սեփականությունն իր ցանկությամբ կարող է ի պահ հանձնել ծերատանը՝ իր մահից հետո ժառանգության իրավունք ունեցող անձին հանձ-

Նելու համար:

Իսկ ծերատան և խնամառուների հետ կնքվող պայմանագրի 2.3.6. կետի համաձայն՝ խնամառուն պարտավոր է յուրաքանչյուր ամիս ծերատան բանկային հաշվին փոխանցել իր կենսաթոշակի 40%-ը: Նույն պայմանագրի 3-րդ կետի համաձայն՝ խնամառուների կողմից ծերատան բանկային հաշվին փոխանցված գումարները ծախսվում են ծերատան պահպանման, ինչպես նաև հենց իր՝ խնամառուի կամ այլ խնամառուների համար:

Յիմնական շարադրանք

Աշխատակիցների հավաստմամբ՝ ծերատուն եկած խնամառուները, որպես կանոն, սեփականության իրավունքով իրենց պատկանող շարժական կամ անշարժ գույք չեն ունենում: Այն եզակի դեպքերում, երբ տարեցները սեփականության իրավունքով իրենց պատկանող շարժական և անշարժ գույք են ունենում, դրանք տնօրինում են իրենց ցանկությամբ:

Վանաձորի ծերատունը խնամառուների թոշակներից պահումներ է անում՝ 40%-ի չափով: Խնամառուների խոսքերով՝ իրենք տեղյակ չեն, թե ինչ նպատակով և ինչպես է տնօրինվում այդ գումարները: Տարեցներից մի քանիսը նշեցին, որ նրանք ծերատանը որևէ բարելավում չեն զգացել: «Մի բան էլ ավելի է վատացել», - նշեց նրանցից մեկը:

«Պետք է ստանայի 4.000 դրամ, սակայն 40% պահելուց հետո մնում է 2.000 դրամ: Վիճել են հաշվապահի հետ և հրաժարվում են այդ խղճուկ գումարը վերցնել»:

«Կան տարեցներ, ովքեր ընդհանրապես թոշակ չեն ստանում, միայն ստորագրում են ցուցակում», - հայտնեցին ծերատան խնամառուները:

Մեր այցելությունների ընթացքում պարզվեց, որ անկողնային հիվանդներից մեկը չի ստանում իրեն հասանելիք թոշակը: «Աշխատողները նրա համար երբեմն 1 տուփի ծխախոտ են բերում», - նշեց հիվանդի սենյակակիցը:

Ծերատան հաշվապահի հավաստմամբ՝ որոշ խնամառուների /հիմնականում նրանց, ովքեր չեն կարողանում տնօրինել իրենց գումարը, կորցնում են կամ մոռանում, թե ուն են պարտքով տվել/ թոշակները նրանց չեն տրվում: Դրանք հավաքվում են իր՝ հաշվապահի մոտ և ուղղվում տվյալ տարեցի կարիքների բավարարմանը: Յիմնականում այդ գումարներով նրանց համար անհրաժեշտ հագուստ, միրգ է գնվում:

Լոռու մարզային  
հոգեկայանի քննադատական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

## ՄԱՍ 3

# Մարդու իրավունքները Վանաձորի մանկատանը

Ընդհանուր տեղեկություններ Վանաձորի  
մանկատան մասին

**Յ**Յ կառավարության 2002թ. նոյեմբերի 28-ի թիվ 1906-Ն որոշմամբ՝ «Վանաձորի մանկատուն» պետական հիմնարկը վերակազմակերպվել է որպես «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Նույն որոշմամբ՝ «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնական նպատակն է սահմանվել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի ապահովումը:

«Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան մինչև 18 տարեկան երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացումն է, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը, սննդով, հագուստով և անհրաժեշտ այլ կենցաղային իրերով ապահովելը, խնամքի ու դաստիարակության ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը:

ՅՅ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պետական բյուջեի միջոցներից 2007թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ տրամադրվել է 79մլն 761հազար դրամ:

«Վանաձորի մանկատուն» ոչ առևտրային կազմակերպությունը ՅՅ կառավարության 2005թ. մարտի 24-ի «Երեխաների խնամքը և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները» որոշման համաձայն՝ համարվում է մինչև 18 տարեկանների ընդհանուր տիպի մանկատուն:

**«Երեխաների խնամքը և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատելու մասին»** 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման 17-րդ հոդվածով՝ մանկատունը երեխային ապահովում է կյանքի համար անվտանգ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան բնակելի տարածությամբ՝ հաշվի առնելով նրա սեռը, տարիքը եւ առողջական վիճակը:

Մանկատունը պետք է ունենա տարիանման պլան, մանկատան անձնակազմը պետք է անցնի քաղաքացիական պաշտպանության ուսուցում՝ արտակարգ իրավիճակներում համապատասխան կերպով գործելու նպատակով՝ առանձնակի ուշադրություն դարձնելով հաշմանդամ երեխաների տարիանման նախապատրաստմանը:

Մանկատան տարածքը պետք է ապահովված լինի հրդեհից փրկվելու համար նախատեսված հատուկ ելքերով, ազդանշանային համակարգով և հակահրդեհային համապատասխան սարքավորումներով:

Մանկատունը պետք է կառուցված լինի առողջության համար անվտանգ շրջակա միջավայրում:

Վանաձորի մանկատունը գտնվում է Տարոն 2 թաղամասում: Մանկատան շենքը տեղակայված է բնակելի շենքերի հարևանությամբ, պարսպապատ է, երկաթ դարպասներով: Ամբողջ տարածքը զբաղեցնում է 1800քմ, բնակելի շենքը երկհարկանի, վերանորոգված կառույց է: Տնօրենի խոսքերով՝ քանի որ մանկատանը կա շուրջօրյա խնամք, անվտանգության խնդիր չի ծագում: Սակայն մանկատունն ունի հակահրդեհային անվտանգության համակարգ. «Եթե նախկինում լուսամուտների, պատուհանների դռները դեպի ներս էին բացվում, հիմա փոխել ենք և դեպի դուրս են բացվում», -նշում է տնօրենը:

Բակում կան պտղատու ծառեր, եղևնիներ /6 հատ, որոնք խորհրդանշում են մանկատան սաների՝ ամուսնացած աղջիկների թիվը/, ուռենիներ, մատարաններ, մնացած տարածքը մաքուր է և ասֆալտապատ:

Շենքի առջևում կա մեծ մանկական խաղահրապարակ, որտեղ կան մանկական ճոճանակներ և մանկական խաղերի համար նախատեսված այլ սարքավորումներ: Խաղահրապարակին կից մանկատան ավտոտնակն է, կողքին պահակակետը:

Մասնաշենքի ծախս մասում գտնվում է չորանոցը, կողքին կաթսայատունը: Շենքի ետնամասում է գտնվում ֆուտբոլի, բասկետբոլի մեծ, ասֆալտապատ խաղադաշտը, որը պատված է բարձր պարսպով և դարպասով /դարպասը միշտ փակ է/:

Մանկատան մուտքի դարպասը մինչև ժամը 18:00-ն բաց է ամբողջությամբ /մեքենաների մուտքի համար/, իսկ ժամը 18:00-ից հետո այն փակվում է, բաց է մնում միայն դարպասի փոքրիկ դուռը:

Մանկատան առաջին հարկում տեղակայված է խոհանոցը, նորածինների և մինչև 8 տարեկան երեխաների սենյակները, ընդհանուր խաղասենյակը, բուժկետն իր մեկուսացման սենյակով, վարչական աշխատողների աշխատասենյակները /տնօրեն, քարտուղարուհի, հոգեբան/, դաստիարակների և տնտեսուհու սենյակները, նրանց համար նախատեսված են առանձնացված սանհանգույցներ, մանկատան սաների հագուստի պահեստը, կարի և արդուկի սենյակները: Սենյակները վերանորոգված են, համապատասխան կահավորանքով:

Առաջին հարկի պատերին փակցված են մանկատան տարիանման պլանը, մանկատան ստեղծման և հովանավորների անունները, նաև «Չափորոշիչներ մանկատանը բնակվող երեխաների խնամքի ու դաստիարակության վերաբերյալ» մեծ պատառը, որի տառատեսակը, սակայն, բավականին փոքր է և դժվար ընթերցանելի:

Առաջին հարկում են գտնվում նաև մինչև 1 տարեկան, 1,5-6 տարեկան երեխաների մեծասենյակներն իրենց լոգասենյակներով, խաղասենյակներով: Առաջին հարկում է նաև համակարգչային սենյակը, որտեղ կա 6 համակարգիչ: Համակարգիչները բավականին հին են՝ Pentium 3 տեսակի:

Մանկատան սաների մեծասենյակներն ամբողջությամբ տեղավորված են երկրորդ հարկում: Տղաների և աղջիկների մեծասենյակները տեղավորված են համապատասխանաբար աջ և ձախ մասնաշենքերում: Յուրաքանչյուր սենյակում կան սենյակին կից գործում է առանձին սանհանգույց և լոգասենյակ: Ննջասենյակներին կից գործում են դասապատրաստման սենյակները:

Վանաձորի մանկատունը ներկայումս ունի 103 երեխա, որի 60%-ը Լոռու մարզից են, մյուսները՝ տարբեր մարզերից:

Լոռու մարզային  
հոգեւոյնաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

## Երեխաներին մանկատուն տեղավորելու եւ մանկատնից դուրս գալու կարգը

ՀՀ «Ընտանեկան օրենսգրքի» 109-րդ հոդվածի համաձայն՝

- ծնողների մահվան,
- նրանց ծնողական իրավունքից զրկելու,
- ծնողական իրավունքները սահմանափակելու,
- ծնողներին անգործունակ ճանաչելու,
- երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու,
- ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության տակ գտնվող խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա:

Խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, վարում նման երեխաների հաշվառումը և, ելնելով ծնողական խնամքից, զրկվելու որոշակի հանգամանքներից՝ ընտրում են այդ երեխաներին տեղավորելու ձևերը:

Այն հիմնարկները, որոնք տեղեկություններ ունեն խնամքի կարիք ունեցող երեխաների վերաբերյալ, պարտավոր են տրամադրել այդ տեղեկատվությունը հոգաբարձության և խնամակալության մարմիններին:

Հոգաբարձության և խնամակալության մարմինները նման տեղեկությունները ստանալուց հետո 3 օրվա ընթացքում պարտավոր են անց կացնել երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն և նրա ծնողների կամ ազգականների կողմից խնամքի փաստի բացակայություն բացահայտելիս ապահովել երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը:

Մանկատներում երեխաները տեղավորվում են ՀՀ կառավարության **2005 թվականի մարտի 24-ի, Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին N 381-Ն որոշմամբ** սահմանված ընդունելության չափանիշներին համապատասխան:

Խնամակալության և հոգաբարձության մարմինը երեխայի վերաբերյալ նախատեսված տեղեկությունները համապատասխան կազմակերպություններից ստանալուց հետո 3 օրվա ընթացքում անցկացնում է երեխայի կյանքի պայմանների հետազոտություն, երեխայի ծնողների կամ ազգականների կողմից երեխայի խնամքի բացակայության փաստի բացահայտման դեպքում ապահովում է երեխաների ժամանակավոր տեղավորումը՝ դրա մասին տեղեկացնելով մարզպետարանին (Երևանի քաղաքապետարանին):

Խնամակալության և հոգաբարձության մարմինը երեխայի կյանքի պայմանների հետազոտության ընթացքում նախապատրաստում և մարզպետարան (Երևանի քաղաքապետարան) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- ա) ծննդյան վկայականը (բնօրինակը) կամ երեխայի հայտնաբերման մասին արձանագրությունը,
- բ) բժշկական տեղեկանք երեխայի առողջական վիճակի մասին (առկայության դեպքում),
- գ) բնակության վայրից տեղեկանք ընտանիքի անդամների մասին (առկայության դեպքում),
- դ) ծնողների մահվան վկայականը կամ ծնողներին ծնողական իրավունքից զրկելու կամ անգործունակ, կամ սահմանափակ գործունակ, կամ անհայտ բացակայող,

կամ մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը, կամ ծնողների՝ կալանավայրում կամ նախնական քննության ընթացքում կալանքի տակ կամ ստացիոնար բուժման մեջ գտնվելու մասին տեղեկանքը (տրված համապատասխան մարմինների կողմից), կամ ծնողական իրավունքներից ինքնական հրաժարվելու և որդեգրության հանձնելու մասին ծնողների (կամ միակ ծնողի) գրավոր հայտարարագիրը՝ վավերացված նոտարի կողմից՝ պահպանելով դրա գաղտնիությունը (առկայության դեպքում),

ե) ծնողի կամ երեխայի օրինական ներկայացուցչի անձը և ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը (առկայության դեպքում),  
զ) տեղեկանք դպրոց հաճախելու մասին՝ դպրոցահասակ երեխաների համար,  
է) տեղեկանք երեխայի բնակության վայրի շրջապատի համաճարակային վիճակի մասին (բնակության վայրը հայտնի լինելու դեպքում):

3 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Ոստիկանության տարածքային մարմնի ղեկավարը հայտնաբերված երեխայի ծնողներին (կամ ծնողին) հայտնաբերելու կամ չհայտնաբերելու մասին գրավոր տեղեկացնում է այն հաստատությունը, որտեղ գտնվում է երեխան:

Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) սահմանված տեղեկությունները և փաստաթղթերը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում իրականացնում է երեխայի բժշկական և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն և տալիս եզրակացություն երեխային մանկատանը տեղավորելու մասին:

Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) երեխային մանկատանը տեղավորելու մասին եզրակացության մեկ օրինակը ներկայացնում է խնամակալության և հոգաբարձության մարմին (բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է պահպանել գաղտնիությունը), **իսկ մյուս օրինակը և նախատեսված փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն):**

Նախարարությունը մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) կողմից տրված եզրակացության և նախատեսված փաստաթղթերի հիման վրա՝ եռօրյա ժամկետում երեխային ուղեգրում է համապատասխան մանկատուն:

Նշված եզրակացությունն օրենսդրորեն հիմնավորված չլինելու դեպքում նախարարությունը երեխայի փաստաթղթերը հետ է ուղարկում մարզպետարան (Երևանի քաղաքապետարան):

Մանկատանը տեղավորման ենթակա նույն ընտանիքի երեխաները (քույրեր և եղբայրներ) տեղավորվում են միևնույն մանկատանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական ժամանակավոր հակացուցումներով այդ երեխաների խնամքն ու դաստիարակությունն անհնար է իրականացնել միասին:

Բժշկական հաստատություններից և երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատություններից երեխաներն անմիջապես տեղավորվում են մանկատան համապատասխան խմբում, իսկ ընտանիքներից և Հայաստանի Հանրապետության Ոստիկանության մարմիններից՝ մանկատան մեկուսարանում: Հայաստանի Հանրապետության Ոստիկանության մարմինների կողմից հայտնաբերված երեխան մանկատանը տեղավորվում է հայտնաբերման օրը, որի մասին տեղեկացվում է երեխայի հայտնաբերման վայրի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին:

**Երեխայի ընդունելությունը մանկատուն ձևակերպվում է տնօրենի հրամանով:**

Մանկատանը տեղավորված երեխաների մասին տեղեկությունները գրանցվում են մանկատան հաշվառման մատյանում, որը համարակալվում, թելակարվում և հաստատվում է մանկատան կնիքով:

**«ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և մանկատներում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարու-**

Լոռու մարզային  
հոգեւոյնաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

**թյան 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման XX չափորոշիչի** համապատասխան՝ մանկատանից դուրս գրվող շրջանավարտներին կամ հարազատ ընտանիք վերադարձող, որդեգրվող, խնամակալության (հոգաբարձության), խնամատար ընտանիք հանձնվող բոլոր երեխաներին մանկատունն ապահովում է համապատասխան փաստաթղթերով (ծննդյան վկայական/անձնագիր, բժշկական քարտ, կերակրողին կորցնելու կենսաթոշակի իրավունք ունեցող երեխային՝ երեխայի անձնական հաշվում կուտակված կենսաթոշակի գումարի չափի մասին տեղեկանք, ինչպես նաև նրա գույքային իրավունքները հավաստող փաստաթղթեր, եթե այդպիսիք կան):

Մանկատան շրջանավարտներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին հատկացվում է միանվագ դրամական օգնություն՝ 50.000 դրամի չափով:

**Վանաձորի մանկատանը, տնօրենի խոսքերով**, երեխաները տեղավորվում են մարզպետարանի կողմից տրված եզրակացության հիման վրա: Տնօրենը նշում է, որ մարզպետարանը տալիս է եզրակացությունը, սակայն հոգաբարձության և խնամակալության մարմինը երեխայի իրավական կարգավիճակի վերաբերյալ համապատասխան որոշում չի կայացնում:

Ներկայումս Վանաձորի մանկատանը շուրջ 60 երեխա իրավական կարգավիճակ չունի: «Արդեն 3 տարի է պայքարում ենք, բայց չի ստացվում», -տեղեկացնում է տնօրենը:

Համապատասխան իրավական կարգավիճակի բացակայությունը թույլ չի տալիս մանկատան երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունն անհրաժեշտության դեպքում իրականացնել՝ **«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին»** ՀՀ օրենքի համաձայն: Մասնավորապես՝ օրենքն առանց ծնողական խնամքի երեխաների համար երաշխավորում է անվճար բարձրագույն կրթություն, ուսման ընթացքում համապատասխան առաջադիմություն ունենալիս նաև կրթաթոշակ:

Մանկատան կենցաղային պայմանները

Օրենսդրության վերլուծություն

Երեխայի խնամքի և դաստիարակության համապատասխան պայմանների, դրանց ապահովման իրավական հիմքերը սահմանվում են ինչպես ազգային օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով:

**1989թ. նոյեմբերի 20-ին Միավորված ազգերի կազմակերպության լիավոր ասամբլեայի կողմից ընդունված** «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածով՝ մասնակից պետություններն ապահովում են երեխաների մասին հոգալու կամ նրանց պաշտպանելու համար պատասխանատու հիմնարկների, ծառայությունների և մարմինների համապատասխանությունը իրավասու մարմինների կողմից սահմանված չափանիշներին, մասնավորապես, անվտանգության և առողջապահության բնագավառներում, դրանց թվաքանակի և անձնակազմի պիտանիության, ինչպես նաև իրավասու հսկողություն սահմանելու իմաստով:

**Նույն կոնվենցիայի 27.1 հոդվածով**՝ մասնակից պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք ունի:

**Կոնվենցիայի 27.2 հոդվածով**՝ երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում պատասխանատվություն են կրում ծնողը կամ այն անձինք, ովքեր դաստիարակում են երեխաներին:

**«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով**՝ պետությունը և նրա համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի

ապրելու եւ զարգանալու համար: **Նույն օրենքի 8-րդ հոդվածն** ավելի է կոնկրետացնում կենսապայմաններ ունենալու երեխայի իրավունքը. «Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները: Ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն»:

**«Երեխայի իրավունքների մասին» օրենքի 3-րդ գլուխն** ամբողջությամբ անդրադառնում է առանց ծնողական խնամքի երեխաների խնամքին ու դաստիարակությանը: **Օրենքի 25-րդ հոդվածով**՝ մանկատներում, գիշերօթիկ հաստատություններում ստեղծվում են ընտանեկանին մոտ պայմաններ:

**«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ԳԳ օրենքն** ամբողջությամբ սահմանում է առանց ծնողական խնամքի երեխաների իրավունքները, դրանց պաշտպանության մեխանիզմները: Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետը սկզբունք է համարում դաստիարակչական, բուժական և խնամակալական կազմակերպություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կյանքի որակի պետական նվազագույն սոցիալական չափորոշիչների սահմանումը և պահպանումը:

**ԳԳ կառավարության «Երեխաների խնամքը և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատելու մասին» 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշումը**, ինչպես նաև 2007թ. մայիսի 31-ին ընդունված **«Մանկատանը /անկախ դրա կազմակերպման իրավական ձևից/ խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ԳԳ կառավարության թիվ 815-Ն որոշումը հանդիսանում են վերը նշված օրենքի կիրառման մեխանիզմները:**

Որոշումներում կոնկրետ սահմանվում են երեխաների պահման, նրանց նկատմամբ վերաբերմունքի, երեխաների սննդին, հագուստին, կրթությանը, ազատ ժամանցին վերաբերող չափանիշները:

Յիմեսական շարադրանք

Վանաձորի մանկատանը կան երեխաների համար նախատեսված 10 ննջասենյակներ:

Մանկատան ննջասենյակներում երեխաները տեղավորված են տարիքի և սեռի հիման վրա ձևավորված խմբերով: Այդ պատճառով էլ **երեխաների թիվը սենյակներում համաչափ չէ բաշխված** և կախված է նրանից, թե յուրաքանչյուր տարիքային խմբից քանի երեխա կա մանկատանը: Մեկ սենյակում միջին հաշվով ապրում է 13-14 երեխա:

Վանաձորի մանկատան ներկայիս շենքին կից նախատեսվում է կառուցել նոր մասնաշենք, որը հնարավորություն կտա, որ սենյակներում քիչ թվով երեխաներ տեղավորվեն:

Սենյակները լուսավոր են, մեծ պատուհաններով, ցերեկային և գիշերային վարագույրներով: Մանրահատակը ծածկված է գորգով, կան սեղան և աթոռներ: Ձմռանը սենյակների և ամբողջ մանկատան ջեռուցումն ապահովում է մանկատան բակում տեղակայված կաթսայատունը: Սակայն մանկատունը չունի օդափոխման ընդհանուր համակարգ, և ննջասենյակներն օդափոխելու համար երեխաները սովորաբար բացում են պատուհանները: Ննջասենյակներն ունեն նույն կահավորանքը. երեխաների թվին համապատասխան առանձին կամ երկհարկանի մահճակալներ, երեխաների թվին համապատասխան՝ հագուստների համար նախատեսված մեծ

Լոռու մարզային  
հոգեւոյնաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

պահարաններ: 1 ննջասենյակում կա միջինը 5 պահարան, յուրաքանչյուր պահարանից օգտվում են 2 կամ 3 երեխաներ: Սենյակներում երեխաներն ունեն նաև փոքր անհատական պահարաններ: Ննջասենյակի պահարաններում կարելի է պահել տվյալ եղանակին համապատասխան հագուստը: Մնացած հագուստը պահվում է մանկատան հագուստի պահեստում: Յուրաքանչյուր խմբում կոշիկների պահարանը ընդհանուր է, որտեղ դասավորվում են միևնույն խմբի բոլոր երեխաների կոշիկները միասին: Ավագ սաների ննջասենյակներում կան հեռուստացույցներ, ընդհանուր օգտագործման DVD, ձայնարկիչ:

Յուրաքանչյուր խմբի ննջասենյակին կից գործում է առանձնացված լոգասենյակն ու սանհանգույցը: Միջին տարիքային խմբի տղաների և աղջիկների ննջասենյակներին կից կան նաև հատուկ դասապատրաստման սենյակներ, որտեղ էլ դասապատրաստումից հետո երեխաները կարող են հեռուստացույց դիտել, ձայնարկիչ լսել, գիրք կարդալ կամ դաշնամուր նվագել:

Դասապատրաստման սենյակները մեծ են, լուսավոր և ընդհանուր են միևնույն խմբի բոլոր երեխաների համար: Դասապատրաստման սենյակներում կան երեխաների թվին համապատասխան դասասեղաններ, աթոռներ, գրապահարաններ, դաշնամուր, նաև բազմոց և բազկաթոռներ:

Մանկատան երկրորդ հարկում գտնվում է նաև միջոցառումների մեծ դահլիճը: Դահլիճն ունի համապատասխան կահույք, մեծ հեռուստացույց, սեղան և աթոռներ: Դահլիճի դուռը միշտ փակ է և բացվում է միայն միջոցառումների ժամանակ:

Վանաձորի մանկատան խոհանոցը բաժանվում է երկու մասի՝ ճաշասենյակի, որտեղ կան երեխաների թվին համապատասխան սեղան-աթոռներ և հիմնական խոհանոցի, որտեղ կան սննդի պատրաստման համար անհրաժեշտ տեխնիկական պարագաներ: Մեր դիտարկումների ժամանակ խոհանոցը գտնվում էր մաքուր վիճակում:

Խոհանոցին կից գործում է սննդի պահեստը: Պահեստը բաժանված է 3 սենյակի՝ նախատեսված համապատասխան սննդի տեսակամիջին պահպանելու համար:

Մանկատան լվացքատունն ու չորանոցը գտնվում են շենքից դուրս: Լվացքատունն ունի առանձին լվացքի մեքենաներ՝ նորածինների և 7 տարեկան երեխաների հագուստները լվանալու համար:

Այսպիսով, Վանաձորի մանկատան կենցաղային պայմանները ընդհանուր առմամբ համապատասխանում են ՀՀ ազգային օրենսդրությանը և միջազգային պայմանագրերով սահմանված երեխայի խնամքի և դաստիարակությանն անհրաժեշտ պայմաններին: ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով սահմանված պետության պարտականություններն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետությունն ընդունել է համապատասխան օրենքներ և իրավական ակտեր, որոնց համապատասխան էլ ձևավորվել են Վանաձորի մանկատան կենցաղային պայմանները:

## Մանիտարահիզիվելիկ պայմանները

### Օրենսդրության վերլուծություն

«Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան երեխաների իրավունքների պաշտպանության շրջանակներում կարևորում է սանիտարահիզիվելիկ պայմանների պահպանումը:

Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ մասնակից պետությունները ձգտում են տվյալ իրավունքի լրիվ իրականացմանը և, մասնավորապես՝ անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում բոլոր երեխաների առողջության պահպանումը և անհրաժեշտ բժշկական օգնության տրամադրումն ապահովելու համար՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով նախնական բժշկասանիտարական օգնությանը:

Միջազգային իրավական այս դրույթին համապատասխան՝ ՀՀ կառավարության «Երեխաների խնամքը և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատելու մասին» 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման 15-րդ հոդվածով՝ մանկատունն ապահովում է առանձնացված պայմաններում երեխաների նեղ անձնական պահանջումները, կարիքները (անձնական հիգիենա) ինքնուրույն բավարարելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում՝ աշխատողների օգնությամբ:

Նույն որոշման 17-րդ հոդվածով՝ մանկատունը երեխային ապահովում է կյանքի համար անվտանգ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան բնակելի տարածությամբ՝ հաշվի առնելով նրա սեռը, տարիքը եւ առողջական վիճակը:

Վերը նշած չափանիշները, դրույթները ենթադրում են, որ երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացնող հաստատությունները պետք է ապահովված լինեն համապատասխան սանիտարահիգիենիկ պայմաններով:

Հիմնական շարադրանք

Վանաձորի մանկատանն երեխաների համար նախատեսված 10 ննջասենյակներից յուրաքանչյուրում կա 1 լոգարան և 1 սանհանգույց՝ նախատեսված 13-14 երեխայի համար: Սենյակում բնակվող բոլոր երեխաներն օգտվում են նույն լոգարանից և սանհանգույցից:

Վանաձորի մանկատունը 7 տարեկանից բարձր երեխաների յուրաքանչյուր խմբին տրամադրում է ընդհանուր օգտագործման հիգիենայի պարագաներ՝ օճառ, շամպուն, ատամի մածուկ, զուգարանի թուղթ, տղաներին՝ սափրվելու համար փրփուր: Երեխաներից յուրաքանչյուրն ունի ատամի խոզանակ, անհատական օգտագործման 2 սրբիչներ, տղաները՝ նաև սափրիչներ:

Մանկատանը սառը ջրից մշտապես օգտվելու հնարավորություն կա, տաք ջուր լինում է միայն երեկոյան՝ ժամը 18:00-22:00-ն: Դայակը հետևում է երեխաների մաքրությանը. քնելուց առաջ հերթով բոլորը պարտադիր լվացվում են: Սաների հավաստմամբ՝ խոհանոցում ևս պարտադիր լվացվում են, նոր հաց ուտում:

7 տարեկանից բարձր սաների համար սահմանված է հատուկ օր լողանալու համար՝ շաբաթը 1 անգամ: Բայց նրանք ցանկության դեպքում կարող են լողանալ նաև ամեն օր՝ երեկոյան, երբ տաք ջուր է լինում:

7-ից փոքր տարիքի երեխաներին լողացնում են դայակները՝ ըստ անհրաժեշտության՝ շաբաթը մի քանի անգամ:

Մանկատան սաների հագուստները լվացվում են շաբաթը 1 անգամ լվացքատանը: Մինչև 12 տարեկանների և տարիքային բոլոր խմբերի տղաների հանգուստները լվանում, արդուկում են լվացքատան աշխատակիցները: Նորածինների հագուստներն ու տակաշորերը լվացվում են ձեռքով և տնտեսական օճառով /լվացքի փոշուց երեխաների մոտ կարող են առաջանալ ալերգիկ երևույթներ/:

12-ից բարձր տարիքի աղջիկներն իրենք են լվանում և արդուկում իրենց հագուստները: Յուրաքանչյուր խումբ լվացքատանը լվացքի համար իր օրն ունի: Հագուստները լվանալուց հետո դրանք չորացվում են չորանոցում՝ հատուկ սարքի միջոցով /10կգ տակողությամբ/: Անկողնային սպիտակեղենը փոխվում է ամիսը 2 անգամ, որը ևս լվացվում է լվացքատանը՝ մեքենաների միջոցով:

Վանաձորի մանկատանը սահմանված ներքին կարգի համաձայն՝ ամեն օր յոթ տարեկանից բարձր յուրաքանչյուր խմբից 2-3 երեխա հերթապահում է սենյակում, բակում, խոհանոցում: Օրվա հերթապահը մաքրում է ննջասենյակը, լոգասենյակները, սանհանգույցները, ճաշասենյակը, բակը, օգնում է խոհարարներին ճաշապատրաստման, ափսեների դասավորման և հավաքման, խոհանոցի մաքր-

Լոռու մարզային հոգեւոյաբանական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը եւ Վանաձորի մանկատանը իրականացված մոնիթորինգի արդյունքները

ման հարցում: Օրվա հերթապահին վերահսկում է դաստիարակը: Յուրաքանչյուր երեխա հավաքում է իր անկողինը, դասավորում իր պահարանն ու հագուստները:

Այսպիսով, Վանաձորի մանկատանը սաներն ապահովված են անձնական հիգիենայի պահպանության համար անհրաժեշտ պայմաններով: Անձնական հիգիենայի պահպանության համար նրանք որևէ խնդիր կամ խոչընդոտ չունեն: Մանկատան ընդհանուր սանիտարահիգիենիկ պայմանների պահպանությունն իրականացվում է մանկատան 7 տարեկանից բարձր սաների և համապատասխան աշխատակիցների մասնակցությամբ: Դրանք համապատասխանում են օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված չափանիշներին: Այնուամենայնիվ, մտահոգիչ է 1 լողասենյակից և 1 զուգարանից օգտվող երեխաների թիվը:

### Յագուստը

#### Օրենսդրության վերլուծություն

Մանկատանը խնամվող երեխաների հագուստին վերաբերող հարցերի կարգավորումն իրականացվում է «**Երեխաների խնամքը և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատելու մասին**» 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման 6-րդ չափորոշիչին համապատասխան:

Որոշման 14-հոդվածով՝ մանկատունն երեխային ապահովում է հագուստով և անձնական օգտագործման պարագաներով՝ ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից: Վեց տարին լրացած երեխան մանկատան տվյալ տարվա համար սահմանված բյուջեի սահմաններում կարող է մասնակցել իր հագուստի և անձնական օգտագործման պարագաների ընտրությանը:

«**Մանկատանը /անկախ դրա կազմակերպման իրավական ձևից/ խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին**» ՀՀ կառավարության թիվ 815-Ն որոշումը սահմանում է 5 օրականից մինչև 18 տարեկան երեխաներին տրվող հագուստի, կոշիկների, անկողնային պարագաների և սպիտակեղենի քանակն ու դրա տեսականին: Որոշումը, մասնավորապես, սահմանում է, որ մանկատանը խնամվող երեխաները պետք է ապահովված լինեն տարվա յուրաքանչյուր եղանակին և իրենց տարիքին համապատասխան հագուստով:

Վանաձորի մանկատան մինչև 7 տարեկան երեխաների խումբը խաղի ժամին



Մարդու իրավունքները  
Վանաձորի մանկատանը

Հագուստի, կոշիկի ու փափուկ գուլջի անվանումները	Չափի միավորը	Երեխաների տարիքը			
		7-18 տարեկան		3-7 տարեկան	
		քանակը	ժամկետը (տարի)	քանակը	ժամկետը (տարի)
Աղջիկների հագուստ և ներքին սպիտակեղեն					
ծմեռային վերարկու կամ մուշտակ	հատ	1	2	1	2
կիսասեզոնային վերարկու կամ կիսավերարկու		1	2	1	1
բրդյա հագուստ		1	2	2	2
հագուստ բամբակյա (կիսաշրջագգեստ, վերնաշապիկ)		3	2	3	1
դպրոցական համազգեստ		2	2	2	2
(սպիտակ վերնաշապիկ, կիսաշրջագգեստ)		1	2	1	2
տոնական շրջագգեստ՝ բրդյա		1	2	1	1
տոնական շրջագգեստ		1	2	1	2
տնային խալաթ		1	2	1	2
բրդյա սվիտեր		1	2	1	1
գուգագուլպա		4	1	4	1
թաշկինակ		4	1	4	1
ամառային գլխարկ		1	1	1	1
ծմեռային գլխարկ		1	2	1	2
շարֆ՝ կիսաբրդյա		1	2	1	2
ծեռնոց (թաթման)	գուլգ	2	1	2	1
ներքին սպիտակեղեն	լրակազմ				
գիշերանոց		2	2	2	1
գոտի՝ բամբակյա		1	1	1	1
կրծկալ		3	1	2	1
տրիկո		5	1	5	1
սպորտային հագուստ		2	1	2	1
շապիկ		4	1	4	1
բամբակյա գուլպա, կիսագուլպա, գոլֆ		6	1	6	1
բրդյա գուլպաներ, կիսագուլպա, գոլֆեր		3	1	3	1

Տղաների հագուստ և ներքին սպիտակեղեն					
ծմեռային վերարկու կամ մուշտակ		1	2	1	2
կիսասեզոնային վերարկու կամ կիսավերարկու		1	2	1	2
կոստյում՝ բրդյա		1	2	1	1
կոստյում՝ բամբակյա		3	2	3	1
վերնաշապիկ		3	1	3	1
սվիտեր՝ բրդյա		1	2	1	1
դպրոցական համազգեստ (տաբատ, սպիտակ վերնաշապիկ)		1	2	1	1
կոստյում՝ տոնական տաբատի գոտի		2	2	2	2
կոստյում՝ տոնական տաբատի գոտի		1	2	1	2
գլխարկ՝ ամառային		1	1	1	1
գլխարկ՝ ծմեռային		1	2	1	2
շարֆ՝ կիսաբրդյա		1	2	1	2
ծեռնոց (թաթմաններ)	գուլգ	2	1	2	1
ներքին սպիտակեղեն		4	1	5	1
սպիտակ		2	2	2	1
գուգագուլպա		4	1	6	1
սպորտային հագուստ		2	1	2	1
շապիկ		4	1	4	1
գուլպա՝ բամբակյա	գուլգ	6	1	6	1
գուլպա՝ բրդյա	գուլգ	4	1	4	1
թաշկինակ		4	1	4	1

ՄԱՆԿԱՏԱՆԸ ԽՆԱՄՎՈՐ  
3-18 ՏԱՐԵԿԱՆ  
ԵՐԵՒԱՑԻ ՀԱՉՈՒՍՑԻ,  
ԿՈՇԿԵՂԵՆԻ ՈՒ ՓՈՓՈՒԿ  
ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԱՆԻՆ ԵՎ  
ՔԱՆԱԿԸ (ՄԵԿ  
ԽՆԱՄՎՈՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ)

ՄԱՐԴՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Լոռու մարզային  
հոգեւոյարդաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

Աղջիկների և տղաների կոշիկներ					
կիսակոշիկ կամ կոշիկ՝ կաշվից	գույգ	2	8 ամիս	2	8 ամիս
տաք կոշիկ կամ երկարաճիտ կոշիկ		1	2	1	2
հողաթափ սպորտային կոշիկ		2	1	2	1
աշխատանքային հագուստ		1	2	1	2
զոզնոց (կրծքապանակներ նախադպրոցականների համար)		--	--	1	1
լողազգեստ (տղայի և աղջկա)		1	1	1	1
զլխարկ՝ ռետինե		1	2	1	2
հատուկ զգեստ		1	1	--	--
պայուսակ		2	2	2	2
ճամպրուկ		1	5	1	5

Անկողնային պարագաներ, սպիտակեղեն					
սավան		3	2	5	2
վերնակասավան		2	3	3	3
բարձի ներքին երես		1	4	1	4
բարձի արտաքին երես		3	2	3	2
սրբիչ		3	2	3	2
սրբիչ՝ խավավոր		3	3	3	1
բրդյա, բամբակյա վերնակ		1	6	1	6
վերնակ՝ բայկայից ներքնակ		1	4	1	4
բարձ՝ փետուրից		1	10	1	10
ձածկոց		1	6	1	6
գորգ՝ մահճակալամերձ		1	4	1	4
բժշկական մոմլաթ	մ	-	-	0.25	1
կանացի հիգիենիկ միջադիր	փաթեթ	12	1	-	-
Փափուկ գույք՝ ճաշարանի համար (100 տեղի համար)					
սփռոց	հատ	50	3		
սրբիչ՝ ամանի					
Փափուկ գույք՝ ճաշասենյակի համար (100 տեղի համար)		25	1		
սփռոց	հատ	100	3		
սեղանի մոմլաթ	մ	100	4		
սրբիչ՝ ամանի	հատ	25	1		

Յիմնական շարադրանք

Վանաձորի մանկատանը, ըստ մանկատան սաների, երեխաներն ապահովված են բոլոր եղանակների համար անհրաժեշտ համապատասխան հագուստներով:

Մարդու իրավունքները  
Վանաձորի մանկատանը

Երեխաների հավաստմամբ՝ իրենց պետության կողմից պարտադիր կերպով հագուստ է տրամադրվում տարին 2 անգամ՝ օգոստոսին՝ դպրոցի համար անհրաժեշտ հագուստներ, և հունվարին՝ ձմռան համար տաք հագուստներ: 12 տարեկանից բարձր բոլոր երեխաները նշում են, որ իրենք կարողանում են ընտրել իրենց հագուստները, եթե հագուստի տեսականի է լինում: «Հաճախ դաստիարակների հետ զնունների օր ենք կազմակերպում»,-նշեցին մանկատան աղջիկները:

Ներկայումս Վանաձորի մանկատան երեխաները նոր հագուստ են ստանում նաև մանկատան հովանավորների, իրենց անձնական քավորների կողմից: Սա է պատճառը, որ ոչ բոլոր երեխաներն են նոր հագուստ ունենում միևնույն հաճախականությամբ: Ոմանք նոր հագուստ են ստանում ըստ անհրաժեշտության: **Երբ հագուստը մաշվում կամ վնասվում է, առաջինը դիմում են դաստիարակին, հետո տնտեսուհուն:** Սաներից մեկը նշել է, որ **եթե դիտավորյալ են վնասում հագուստը, իրենց պատժում են, շոր էլ չեն տալիս: Նոր հագուստ ստանալիս իրենք պիտի ցույց տան վնասված հագուստը ու բացատրեն՝ ինչի՞ց է վնասվել:**

Այն երեխաները, ովքեր քավորներ չունեն, կարողանում են նաև իրենց համար հագուստներ գնել՝ իրենց տրվող ամսական 2000-3000-ական դրամներից տնտեսելով: Երեխաները կարող են մանկատանը դերձակի օգնությամբ ձևափոխել իրենց հագուստները, եթե դրանք մեծ են կամ փոքր:

Վանաձորի մանկատանը երեխաներին տրամադրում է նաև անկողին և անկողնային սպիտակեղեն: Բարձր, վերմակը և ներքնակը տարին 2 անգամ փոխվում են: Մանկատան սաները նշում են, որ **եթե իրենք հագուստների նման անկողնային սպիտակեղեն առնեն, աշխատողները կնեղանան, կմտածեն, թե երեխաները դժգոհում են:**

Այսպիսով, Վանաձորի մանկատանը սաներին հավասար հաճախականությամբ հագուստ չի տրամադրվում:

Հովանավորների միջոցով մանկատան առանձին երեխաներին հագուստով ապահովելը ձևավորում է խտրական վերաբերմունք երեխաների միջև և վերանայման կարիք ունի:

Մնուևնոր

Օրենսդրական վերլուծություն

**«Երեխաների իրավունքների պաշտպանության» ՄԱԿ-ի կոնվենցիան երեխայի առողջապահական համակարգի և հիվանդությունների բուժման ու առողջության վերականգնման իրավունքի պաշտպանության համար կարևորում է երեխայի բավարար սնունդը:**

Կոնվենցիայի 24.2 կետում սահմանվում է՝ **«Մասնակից պետությունները ձգտում են տվյալ իրավունքի լրիվ իրականացմանը և, մասնավորապես՝ անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում հիվանդությունների և թերսնման դեմ պայքարելու համար, այդ թվում բժշկասանիտարական նախնական օգնության շրջանակներում, ի թիվս այլ բաների՝ հեշտ մատչելի տեխնոլոգիաների և բավականաչափ սննդարար մթերքների և խմելու մաքուր ջրի տրամադրման ուղիով՝ ուշադրության առնելով շրջակա միջավայրի աղտոտման վտանգավորությունն ու ռիսկը»:**

**«Երեխաների խնամքը և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատ-**

Լոռու մարզային հոգեկայտաբանական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը եվ Վանաձորի մանկատանը իրականացված մոնիթորինգի արդյունքները

ԵՄԻՍՎՈՐ ԷՆԵՐԳԻԱՅԻ,  
ՄՊԻՏԱՎԱԿՆԵՐԻ,  
ՃԱՐՊԵՐԻ,  
ԱՐԽԱՐԱՍԵՐԻ  
ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ  
ՆՈՐՄԵՐԸ` ԸՍՏ  
ՏՐԱԿՏՈՐԻՆ ԿՏՐԱԿՆԵՐԻ

**տելու մասին» 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման 12-րդ հոդվածով`** մանկատանը երեխան ապահովվում է առողջ, անհրաժեշտ քանակի և տարիքին համապատասխան սննդով:

13-րդ հոդվածով` մանկատանը բժշկի ցուցումով, ապահովում է անհատական մոտեցում հիվանդ, թերսնվող և գերսնվող երեխաների նկատմամբ:

**«Մանկատանը /անկախ դրա կազմակերպման իրավական ձևից/ խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին 33 կառավարության թիվ 815-Ն որոշումը** սահմանում է մանկատանը խնամվող տարիքային յուրաքանչյուր խմբի համար անհրաժեշտ տեսականին և դրա անհրաժեշտ կալորիականությունը:

Տարիքը, սերը	Կալորիականությունը (կկալ)	Սպիտակուցները (գրամ)		ճարպերը (գրամ)	Ածխաջրատները (գրամ)
		ընդամենը	այդ թվում` կենդանական		
1-3 տարեկան	1540	53	37	53	212
4-6 տարեկան	1970	68	44	68	272
6,5 տարեկան/դպրոցական/	2000	69	45	67	285
7-10 տարեկան	2350	77	46	79	335
11-13 տարեկան տղաներ	2750	90	54	92	390
11-13 տարեկան աղջիկներ	2500	82	49	84	335
14-17 տարեկան պատանիներ	3000	98	59	100	425
14-17 տարեկան աղջիկներ	2500	90	54	90	360

**Հիմնական շարադրանք**

Վանաձորի մանկատանը 3 տարեկանից բարձր սաները մանկատան օրվա ռեժիմի համաձայն` սնվում են օրական 4 անգամ` նախաճաշ, ճաշ, հետճաշիկ, ընթրիք:

Ճաշացանկը կազմվում է դիետ բուժքրոջ, հոգեբանի և տնօրենի մասնակցությամբ:

Նրանք նշում են, որ ճաշացանկը կազմելիս հաշվի է առնվում երեխաների առողջական վիճակը, սննդի կալորիականությունը, նաև երեխաների ցանկությունը:

Ըստ մանկատան տնօրենի` յուրաքանչյուր երեխայի **սննդի ծախսը օրական կազմում է 960 դրամ:**

Մեր ուսումնասիրությունների ընթացքում 11-16 տարեկան 20 երեխա նշել է, որ խոհանոցում ճաշերը երբեմն պատրաստվում են իրենց ցանկությամբ: Նույն տարիքային խմբից 7 երեխա բացատրել է, որ եթե միևնույն ճաշից մի քանիսն են ուզում, անպայման պատրաստում են:

Նախաճաշը և ընթրիքը հաստատված ժամերի են, որը պարտադիր է բոլորի համար, համապատասխանաբար 8:30-ին և 20:00-ին:

Ճաշը սահմանված է 14:00-ին, հետճաշիկը` 17:00-ին: Եթե դպրոցականները և ուսանողները մանկատան են վերադառնում ճաշի համար սահմանված ժամից ուշ, ճաշում են առանձին: Սննդի հետ երեխաներին պարտադիր տարբեր տեսակի հյութեր են տրամադրվում:

Առավոտյան նախաճաշին երեխաներին ձու, կաթնամթերք և թեյ է տրվում, ճաշին սուպեր և փլավներ` երբեմն աղցաններով: Հետճաշիկը հիմնականում կազմված է քաղցրեղենից` տարբեր թխվածքաբլիթների, կոնֆետ և մրգեր:

Ըստ մանկատան սաների` մանկատանն իրենց տրվում է անհրաժեշտ քանակի և ո-

րակի սնունդ: «Շատ ընտանիքներում հիմա այդպես չեն սնվում: Մենք էստեղ լավ ենք սնվում», -նշում են մանկատան սաները: Նրանք հնարավորություն ունեն անհրաժեշտության դեպքում հավելյալ սնունդ ստանալ: Բացի այդ, խոհանոցի աշխատակիցները նրանց խնդրանքով երեխաների կողմից գնված մթերքով կարող են ճաշեր պատրաստել. «Ես տապակած կարտոֆիլ շատ եմ սիրում: **Կարող ենք տղաներով կարտոֆիլ գնել, ու խոհարարը մեզ համար կպատրաստի: Լինում են դեպքեր, երբ կարիք չի էլ լինում կարտոֆիլ գնել, եթե մանկատանը լինում է**, -նշում է երեխաներից մեկը:

Մանկատան սննդի ցուցակում երեխաների համար սուրճ նախատեսված չէ, այդ պատճառով էլ 13 տարեկանից բարձր սաներն իրենք իրենց միջոցներով են սուրճ գնում և հնարավորություն ունեն պատրաստել այն մանկատան իրենց սենյակներում: «Եթե հավես չենք ունենում ճաշարան իջնել, մեր սենյակում ենք թեյ կամ սուրճ պատրաստում: Սակայն կարող ենք նաև խոհանոց իջնել, ու էնտեղ մեր ձեռքով պատրաստել», -նշում են 16-ից բարձր տարիքային խմբի աղջիկները:

Սննդամթերքի անվանումը	Սահմանված չափորոշիչները /գրամով /		Փաստացի տրամադրվող սնունդը /գրամով /	
	1.5-7 տարեկան	7-18 տարեկան	1.5-7 տարեկան	7-18 տարեկան
Չաց /ցորենի/	150	250	240	450
Չաց /աշորայի/	90	250	-	-
Կարագ	35	50	29	10
Երշիկ	10	25	40	50
Չու	1	1	1	1
Թեյ	0.2	0.2	0.2	0.2
Շաքարավազ	55	70	40	40
Չավարեղեն, մակարոնեղեն, ընդեղեն /+ բրինձ, + ոսպ /	45	75	120	135
Բանջարեղեն, այլ կանաչեղեն /գազար, բազուկ, կաղամբ, կանաչի, սոխ /սոխ, սխտոր	400	470	300	750
Կարտոֆիլ	300	400	360	380
Բուսական յուղ	12	18	16	16
Յուղ	-	-	-	27
Վարունգի մարինատ	-	-	45	60
Աղ	8	8	0.06 կգ	1.2 կգ
Չամենունքներ /սեվ, կարմիր պղպեղ/	2	2	0.06 կգ	0.13 կգ
Թթվասեր	10	10	15	20
Տավարի միս	115	150	110	120
Տոմատ	-	-	-	0.5 կգ
Թարմ մրգեղեն /տանձ , խնձոր/	260	350	410	430
Թխվածքաբլիթ/բուլկի/, հրուշակեղեն/կարամել/	15 25	- 25	50 20	40 25
Կաթ, կաթնամթերք /մածուն/	500	500	400	400
Պանիր	10	12	15	20
Չեյթուն	-	-	20	25
Կակաո	1	2	1	1
Նրբեշիկ /երշիկեղեն/	10	25	60	70
Չկնեղեն / ձկան պահածո/	20	75	100	100
Թռչնի միս /հավի/	25	30	110	120
Ալյուր /ցորենի/	35	35	100	100
Միս խոզի	-	-	110	120
Խտացրած կաթ	-	-	40	45
Չյութեր / ֆանտա, կոլա/	200	200	180	200
Դափնու տերեվ	-	-	0.01 կգ	-

Մանկատան երեխաների ճաշացանկը սահմանված չափորոշիչների համեմատությամբ

Լոռու մարզային հոգեկայանի հոգեբանական դիսպանսերում, Վանաձորի ծերատանը եվ Վանաձորի մանկատանը իրականացված մոնիթորինգի արդյունքները

Սննդամթերքի անվանումը	Սնունդը գրանցված
Խմորիչ	1/1
Սուրճ	2/4
Հաց /աշորայի/	90/250
Կարտոֆիլի այլուր	3/3
Կաթնաշոռ	50/70
Բանջարեղենից վարունգ, լոլիկ	400/470
Հյութեր բնական	200/200
Մրգեղեն չոր	10/15

Մանկատան/հոկտեմբերի 20-23-ի/  
Ճաշացուցակում բացակայող սննդամթերքներ

Այսպիսով, Վանաձորի մանկատանը երեխաներին տրվող սնունդն ընդհանուր առմամբ համապատասխանում է օրենսդրությամբ սահմանված չափանիշներին: Երեխաները սննդից չեն դժգոհում, ապահովվում է սննդի բազմազանությունը, անհրաժեշտության դեպքում տրամադրվում է հավելյալ սնունդ: Ճաշերը պատրաստելիս հաշվի է առնվում երեխաների ցանկությունը:

### Բուժսպասարկումը

#### Օրենսդրության վերլուծություն

**Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 24.1 հոդվածը** սահմանում է՝ մասնակից պետություններն ընդունում են առողջապահական համակարգի և հիվանդությունների բուժման ու առողջության վերականգնման առավել կատարյալ ծառայություններից օգտվելու երեխայի իրավունքը: Մասնակից պետությունները ձգտում են ապահովել, որպեսզի ոչ մի երեխա չզրկվի առողջապահական համակարգի նման ծառայություններից օգտվելու իր իրավունքից:

Հոդված 24-ի 3-րդ կետով մասնակից պետությունները պարտավորվում են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել երեխայի առողջության վրա բացասաբար ազդող սովորությունների վերացման նպատակով:

**ՀՀ ազգային օրենսդրությունը Սահանդրության 38-րդ հոդվածում նշում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:**

**Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով:**

**«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքն** առանձին հոդվածով ամրագրում է երեխայի առողջության պահպանման իրավունքը: **«Յուրաքանչյուր երեխա ունի առողջության պահպանման եւ ամրապնդման իրավունք: Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար օգտվելու հնարավորությունը, իրականացնում են երեխայի առողջության պահպանմանն ուղղված պետական նպատակային ծրագրեր»:**

**«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների մասին» օրենքը 8-րդ հոդվածով սահմանվում է** առողջության պահպանման իրավունքի ապահովումը: «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվում է անվճար բժշկական օգնություն պետական պատվերի շրջանակներում: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին կարող են տրամադրվել սպորտ-առողջարարական ծամբարների, հանգստյան տների, համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում՝ առողջարանային բուժման ուղեգրեր՝ պետական եւ համայնքային բյուջեներից այդ նպատակով նախատեսված միջոցների եւ օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին»:

**Նույն օրենքի 6-րդ հոդվածը**, որն անդրադառնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքներին, անդրադառնում է անվճար բժշկական օգնությանը եւ սպասարկմանը:

**«Երեխաների խնամքը և պաշտպանություն իրականացնող հաստատությունների**

**տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատելու մասին» 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշումը** սահմանում է երեխայի առողջության իրավունքի պահպանման համար անհրաժեշտ պայմանները: «Մանկատունը պետք է ապահովված լինի առաջին բժշկական օգնության ծառայությանը եւ բժշկական սարքավորումներով: Մանկատունն ապահովում է երեխայի առողջ ապրելակերպի (սնունդ, ֆիզկուլտուրա եւ սպորտ, անձնական հիգիենա, ազատ ժամանց) համար անհրաժեշտ պայմաններ: Յուրաքանչյուր երեխա համապատասխան բժշկական հաստատության կողմից ենթարկվում է բազմամասնագիտական բժշկական հետազոտման՝ համաձայն անհատական ցուցումների: Մանկատան բուժօգնության կազմակերպման գործընթացի մեթոդական եւ խորհրդատվական օգնությունն իրականացնում է տվյալ մանկատան տարածքը սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունը: Մանկատանը յուրաքանչյուր երեխայի համար լրացվում է երեխայի բժշկական քարտ»:

**Յիմեսական շարադրանք**

Վանաձորի մանկատանը երեխաների բուժապասարկման համար աշխատում են **1 բժշկուհի՝ մանկաբույժ, 4 բուժքույր /հերթափոխով/, 1 ռացիոնալ սնման գծով մասնագետ /դիետ քույր/,** որն զբաղվում է երեխաների համար ամենօրյա ճաշացանկի կազմումով: Մանկատանը, ըստ բուժքույրերի, բուժկետի հնարավորություններին համապատասխան՝ կարելի է օգնել առողջական այն խնդիրների դեպքում, որոնք վիրաբուժական միջամտություն չեն պահանջում: Մանկատան բուժկետը, **ըստ բուժքույրերի, ունի առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայք՝ ջերմիջեցնող, ցավազրկող դեղահաբեր, ներարկիչներ, ճնշման ապարատ, հոգնաներ:** Մանկատան տնօրենը նշում է, որ հովանավորները ուզեցել են մանկատանը ատամնաբուժական ծառայություն իրականացնելու համար անհրաժեշտ բազմոց նվիրել, սակայն ինքը հրաժարվել է: Տնօրենի խոսքերով՝ տեղում երեխաների համար ատամնաբուժական ծառայություն իրականացնելու համար անհրաժեշտ կլիներ ունենալ համապատասխան հաստիք, այլ սարքավորումներ ևս, որը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը դժվար, թե տրամադրեր: Վանաձորի մանկատունը համագործակցում է «Ղարագոզյաններ» ատամնաբուժարանի հետ, որտեղ մանկատան սաներին սպասարկում են անվճար:

«ՄՕՑ» բարեգործական կազմակերպությունը IRD ծրագրով մանկատանն անվճար տրամադրում է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայք: «Աստրագա» դեղատան հետ Վանաձորի մանկատունը պայամանագիր ունի, որի համաձայն անհրաժեշտ դեղերը ստանում են կես արժեքով: Ըստ մանկատան տնօրենի՝ անհրաժեշտ դեղորայքի ցուցակը կազմում և ներկայացնում են տարվա սկզբին: Տարվա ընթացքում ընթացիկ հիվանդությունների համար անհրաժեշտ համապատասխան լրացուցիչ դեղորայքը ստանալու համար հարկավոր է լրացուցիչ թույլտվության մեջ դիմել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Այս գործընթացը բավականին երկար ժամանակ է խլում:

Մանկատան բուժկետին կից գործում է մեկուսարանը, որտեղ առանձնացնում են երեխաներին տարբեր վիրուսային վարակիչ հիվանդություններ ունենալու դեպքում:

Վիրաբուժական սուր հիվանդությունների, ստացիոնար բուժման անհրաժեշտության, վիրաբուժական կարիքի և հատուկ մասնագետի անհրաժեշտության դեպքում երեխաներին տեղափոխում են Վանաձորի թիվ 1 «Նարեկ» մանկական հիվանդանոց կամ դիմում են մոտակա թիվ 5 պոլիկլինիկան: Յիվանդանոցում մանկատան սաների բուժապասարկումն իրականացվում է անվճար, պետպատվերի շրջանակներում:

Մանկատան սաները ընդհանուր բուժզննում անցնում են 6 ամիսը 1 անգամ: Մանկատան աշխատակիցները նշում են, սակայն, որ մանկատան բուժապասարկումն ավելի արդյունավետ դարձնելու համար համապատասխան սարքավորումներ են անհրաժեշտ, օրինակ՝ ինհալյատոր, խորխահան ապարատ: «Այս դեպքում ստիպված չենք լինի երեխաներին հիվանդանոց տանել», -նշում են աշխատակիցները: Մինչև այժմ երեխաները միայն 1 անգամ են անցել կուրորտային բուժում, որը բա-

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

վականին օգտակար է եղել: Մանկատանը շատ երեխաներ կան, որոնց անհրաժեշտ է այդպիսի բուժումը / հիմնականում խրոնիկ հիվանդությունների դեպքում/, սակայն չի իրականացվում:

Մանկատան սաները նշում են, որ առողջության հետ կապված որևէ խնդիր ունենալու դեպքում նրանք դիմում են բուժքրոջը: Նա անմիջապես զննում է, ըստ անհրաժեշտության դեղահաբեր տալիս:

16-18 տարեկան երեխաների խմբից մի տղա նշել է, որ երբ իր ձեռքը կոտրվել էր, մանկատան տնօրենն անմիջապես հիվանդանոց է տեղափոխել, որտեղ էլ գիպս են դրել:

Այսպիսով, Վանաձորի մանկատանը սաների բուժապասարկումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան: Մանկատանը ստանում է առաջին բուժապասարկման համար անհրաժեշտ դեղորայքը, վարակիչ հիվանդությունների դեպքում հնարավոր է լինում կանխել հիվանդության տարածումը՝ մեկուսացնելով երեխաներին: Այնուամենայնիվ, մանկատանը, սաների բուժապասարկումն ավելի արդյունավետ դարձնելու համար, որոշ բուժական սարքավորումների կարիք ունի:

Համապատասխան ֆինանսական աջակցության բացակայության պատճառով երեխաները, նույնիսկ անհրաժեշտության դեպքում, կուրորտային բուժում չեն անցնում:

Անձնական կյանքը հարգելու և անձնական անձեռնմխելիության իրավունքը

Օրենսդրության վերլուծություն

**33 Սահմանդրության 16-րդ հոդվածը** սահմանում է՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք:

23-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Կոնկրետ երեխայի անձնական կյանքի և անձնական անձեռնմխելիության իրավունքի մասին համապատասխան դրույթ է պարունակում **33 «Երեխայի իրավունքների» մասին օրենքը**: Օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է՝ յուրաքանչյուր երեխա ունի պատվի եւ արժանապատվության պաշտպանության իրավունք: Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության եւ հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի եւ արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների: Նույն օրենքի 31-րդ հոդվածը, որն անդրադառնում է երեխաների իրավունքների պաշտպանությանը նրան պատասխանատվության ենթարկելիս, նշում է. **«Երեխան ունի անձի անձեռնմխելիության իրավունք, որը պաշտպանվում է օրենքով»:**

**«Երեխաների խնամքը և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատելու մասին» 2004թ օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման 16-րդ հոդվածով** մանկատանը դպրոցում սովորող երեխային ապահովում է անձնական մանր ծախսեր կատարելու համար անհրաժեշտ գումարով՝ 7-12 տարեկան երեխաներին տրվում է ամսական 2 հազ. դրամ, 13-18 տարեկան երեխաներին տրվում է ամսական 3 հազ. դրամ:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում երեխայի անձնական կյանքի և անձեռնմխելիության իրավունքի շրջանակներում դիտարկվել է նաև մանկատանը արտաքին աշխարհի հետ կապից օգտվելու, առանձին հանդիպումներ, այցելություններ

ուճեմալու երեխայի հնարավորությունը:

**«Երեխաների խնամքը և պաշտպանությունը իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատելու մասին» 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշումը** սահմանում է, որ մանկատունն ապահովում է երեխայի կապն ընկերների, շրջապատի հետ, եթե դա բխում է նրա շահերից: Նույն որոշման 44-րդ հոդվածը նշում է. «Մանկատունն ապահովում է ծնողական իրավունքից չզրկված ծնողների, օրինական ներկայացուցիչների կամ հարազատների տեսակցությունը երեխայի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ ծնողները, օրինական ներկայացուցիչները կամ հարազատները գտնվում են ոչ սթափ կամ հակահիգիենիկ վիճակում»:

Նույն որոշման 45-րդ հոդվածով կարգավորվում են երեխայի կապի միջոցներից օգտվելու հնարավորությունները, **մասնավորապես՝ նշվում է, որ մանկատունը պետք է ապահովված լինի կապի անհրաժեշտ միջոցներով, ինչպես նաև հանդիպումների առանձնասենյակով:**

**Ֆիմսական շարադրանք**

Վանաձորի մանկատանը հարազատների այցելությունների համար հատուկ սահմանված օրեր չկան: **Այցելությունները և հանդիպումները Վանաձորի մանկատան սահմանափակվում են միայն երեկոյան 20:00-ից հետո:** Վանաձորի մանկատան սաներին կարող են այցելել հարազատները, ընկերները: Այցելությունների համար մանկատունն ունի հատուկ սենյակ: Երբեմն այցելուներին թույլատրվում է բարձրանալ երեխաների ննջասենյակները, նույնիսկ գիշերել այնտեղ, եթե նրանք քաղաքի բնակիչներ չեն և քաղաքում մնալու տեղ չունեն:

Վանաձորի մանկատանը երեխաները **կարող են ունեն օգտվել հեռախոսից 2 սենյակից՝ հոգեբանի և մինչև 1 տարեկան երեխաների սենյակներից:** Երկու սենյակների հեռախոսագիծը նույնն է, որը թույլ է տալիս մյուս սենյակից լսել հեռախոսագրույցները: Մանկատան 14-18 տարեկան սաների մեծ մասն ունեն բջջային հեռախոսներ, որոնք ձեռք են բերել սեփական միջոցներով:

**Վանաձորի մանկատանը սաների ննջասենյակները չեն կողպվում ոչ գիշերը, ոչ ցերեկը:** Թե մանկատան սաները, թե աշխատակիցները ննջասենյակներ ներս մտնելիս անպայման թակում են դուռը:

Տնօրենի բացատրությամբ՝ ննջասենյակների դռները չեն կողպվում անվտանգության համար՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները: Այուսմենայնիվ, նախատեսվում է ավագ աղջիկների ննջասենյակի դռները դարձնել փականով:

Ըստ մանկատան սաների՝ Վանաձորի մանկատանն իրենք իրենց անձնական իրերը կարող են պահել ննջասենյակներում: Պահարանների մի մասը երեխաների ցանկությամբ կողպվում է: Նրանք, ովքեր ցանկանում են կողպել իրենց պահարանները, իրենց գումարներով կողպեքներ են գնում ու տեղադրում պահարանների դռների վրա: Իրենց ննջասենյակներում երեխաները պահում են իրենց անձնական հագուստները, անձնական հիգիենիկ պարագաները: Ննջասենյակում երեխաները հնարավորություն ունեն պահելու նաև չփչացող սնունդը, որը գնում են իրենց միջոցներով կամ ստանում դրսից:

**11-16 տարեկան սաներից 32-ը նշում է, որ իրենից բացի ոչ ոք հնարավորություն չունի ստուգել իր անձնական իրերը:**

Երեխաներին պետության կողմից տրվող ամսական 2000-3000 դրամները, երեխաների հավաստմամբ, տնօրինում են իրենց ցանկությամբ, օգտագործում իրենց կարիքների համար: Միջին տարիքի երեխաներից մի քանիսը այդ գումարները պահում են դաստիարակների մոտ:

Լոռու մարզային  
հոգեւոյարդաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

Այսպիսով, Վանաձորի մանկատանը երեխաների անձնական անձեռնմխելիության և անձնական կյանքի զարդանիության պահպանման հնարավորությունները սահմանափակ են: Մանկատանը հնարավոր է լսել սաների հեռախոսակցութունը զուգահեռ միացված հեռախոսից:

## Ազատ ժամանցը

Օրենսդրության վերլուծություն

ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածով երաշխավորվում է ՀՀ բոլոր քաղաքացիների հանգստի իրավունքը:

Երեխայի իրավունքների մասին *ՄԱԿ-ի կոնվենցիայի 31.1 հոդվածով՝ մասնակից պետությունները ընդունում են հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին և զվարճալի միջոցառումներին, ինչպես նաև մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու երեխայի իրավունքը:* Կոնվենցիայի 31.2 հոդվածով՝ մասնակից պետությունները խրախուսում են հանգստի և ժամանցի համար համապատասխան հավասար հնարավորությունները:

**«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին»** ՀՀ օրենքը, որպես երեխայի սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիք, նշում է հանգստի կազմակերպումը:

**«Երեխաների խնամքը և պաշտպանությունը իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատելու մասին» 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման 30 հոդվածով՝** մանկատունն ապահովում է երեխայի ներգրավումը իր ազատ ժամանցի՝ զբաղմունքի տեսակների ընտրությանն ու պլանավորմանը: Մասնավորապես՝ մանկատունը պարտավորվում է ապահովել երեխաների մասնակցությունը էքսկուրսիաներին, սպորտային և մշակութային միջոցառումներին: Նույն որոշման 21-րդ հոդվածով՝ մանկատունը պետք է ունենա երեխաների տարիքային խմբերի առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ եւ բարեկարգ խաղահրապարակներ:

Հիմնական շարադրանք

Վանաձորի մանկատանը, ըստ սաների, **երեխաների հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման համար որևէ խնդիր չկա:**

Վանաձորի մանկատան սաների տարիքային յուրաքանչյուր խմբի ազատ ժամանցի և հանգստի համար առանձին հնարավորություններ կան:

Վանաձորի մանկատան 11-16 տարեկան սաները նշում են, **որ իրենց հանգստի ժամ է հանդիսանում կազմում է դասերը սովորելուց հետո մինչև քնելն ընկած հատվածը:**

Նրանցից 22-ի խոսքերով՝ այդ ընթացքում նրանք անում են այն, ինչ ուզում են. ընկերներով հավաքվում են մանկատան բակում, խաղում խաղասենյակում կամ հեռուստացույց դիտում:

Տարիքային այս խմբի ննջասենյակին կից կա դասապատրաստման սենյակ, որտեղ խմբի երեխաները կարող են հեռուստացույց դիտել, երաժշտություն լսել: Դասապատրաստման սենյակում տեղադրված են աթոռներ, սեղաններ, բազմոց, բազկաթոռներ:

7 տարեկանից բարձր երեխաների խաղասենյակը գտնվում է մանկատան առաջին հարկում: Այստեղ տարբեր խաղեր կան՝ սեղանի ֆուտբոլ /2հատ/, հոկեյ /1հատ/ բիլիարդ /1հատ/, սեղանի թենիս, որոնցով երեխաները կարող են խաղալ հենց խաղասենյակում: **Մինչև 17:00-ն խաղասենյակը փակ է, բանալին գտնվում է տնտեսու-**

**հու մոտ:**

Բացի այդ, ունեն ֆուտբոլի և բասկետբոլի գնդակներ /7 հատ/, պարանոցներ /4 հատ/, օղակներ /4հատ/:

**Մանկատան բակի ետնամասում կա ֆուտբոլի և բասկետբոլի դաշտ:** Ըստ մանկատան սաների՝ նրանք մանկատան և հարևան թաղամասի երեխաներից ֆուտբոլի թիմեր են կազմում և խաղում:

Մինչև 9 տարեկան երեխաների խաղասենյակն առանձին է, որը նրանց 2 ննջասենյակներն իրար է միացնում: Փոքրերի խաղասենյակում կա բազմոց, 2 բազկաթոռ: Խաղասենյակը հագեցած է տարբեր խաղալիքներով՝ նախատեսված 1,5-ից 9 տարեկան երեխաների համար: Մեր դիտարկումների ընթացքում մենք ակամատես ենք եղել, թե ինչպես են տարիքային այս խմբի երեխաները դաստիարակների ներկայությամբ միասին անկաշկանդ խաղում խաղալիքներով:

Մանկատան այս տարիքային խմբի երեխաները հնարավորություն ունեն խաղալ նաև **մանկատան բակում, որտեղ կան 5 ճոճանակներ:** Օրվա ընթացքում դաստիարակները նրանց մի քանի անգամ դուրս են տանում:

Ամեն օր՝ ժամը 17:00-ից հետո, նրանց ֆիզիկական դաստիարակությամբ զբաղվում է ֆիզիկական դաստիարակը, որը երեխաներին օգնում է նաև կազմակերպել իրենց խաղերը:

Ամառային արձակուրդները **երեխաներն անց են կացնում ճամբարներում, գնում են արշավների՝ գիշերակաց էքսկուրսիաներ:** Ժամանցի, էքսկուրսիոն, մշակութային և սպորտային միջոցառումների համար, ըստ մանկատան սաների, չկա հստակ սահմանված օրակարգ և պլան:

Երեխաները ամիսը մի քանի անգամ մասնակցում են մշակութային տարբեր միջոցառումների՝ համերգներ, թատրոններ, պատկերասրահներ՝ կախված նրանից, թե քաղաքում ինչ մշակութային միջոցառում է լինում: Այդ միջոցառումներին մասնակցելու համար երեխաներին տոմսերը տրամադրվում է անվճար, երեխաները վճարում են միայն իրենց ճանապարհածախսը:

Ըստ մանկատան սաների՝ բացի դասագրքերից ընթերցանության համար մանկատանն այլ գրքեր չկան, են ստանում նաև մանկական ամսագրեր:

Այսպիսով, Վանաձորի մանկատանը երեխաների ազատ ժամանցը կազմակերպվում է օրենսդրությամբ նախատեսված կարգին համապատասխան: Վանաձորի մանկատանն ունի երեխաների տարիքին համապատասխան խաղասենյակներ՝ խաղալիքներով, սահմանված է ազատ ժամանցի հատուկ ժամ:

**Կրթություն**

**Օրենսդրության վերլուծություն**

**«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի մասնակից պետությունները ընդունում են երեխայի կրթության իրավունքը: Այդ իրավունքի իրականացմանը հասնելու համար նրանք.**

ա/ մտցնում են անվճար և պարտադիր տարրական կրթություն,  
բ/ խրախուսում են միջնակարգ կրթության տարբեր, ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնագիտական ձևերի զարգացումը, ապահովում են դրա մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթություն մտցնելը և անհրաժեշտության դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը,

Լոռու մարզային  
հոգեկայտաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

զ/ բոլոր անհրաժեշտ միջոցների տրամադրմամբ ապահովում են բարձրագույն կրթության մատչելիությունը, ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, որ/ կրթության և մասնագիտական պատրաստության բնագավառում ապահովում են տեղեկատվությունների և նյութերի մատչելիությունը բոլոր երեխաների համար, ե/ միջոցներ են ձեռնարկում նպաստելու կանոնավոր դպրոց հաճախելուն և դպրոցը թողած սովորողների թվաքանակի նվազմանը:

Մասնակից պետությունները միաժամանակ համակարծիք են, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը դրանց լրիվ ծավալով:

**33 Սահմանադրության 39-րդ հոդվածով՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:**

Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքները որոշվում են օրենքով:

Ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին:

**«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» 33 օրենքը սահմանում է երեխաների կյանքի որակի պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, որոնց մեջ ներառնված է նաև հանրակրթական, մրցութային կարգով միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթությունը:** Օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության միջոցառումները, որտեղ մասնավորապես նշվում է. «1. Միջնակարգ կրթություն ստացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետական, միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական դասընթացներ ընդունվում եւ սովորում են անվճար: 2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներն ընդհանուր մրցութով պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ ընդունվում են վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում: 3. Պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին անհրաժեշտ առաջադիմություն ունենալու դեպքում վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով»:

**«Երեխաների խնամքը և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատելու մասին» 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման 11-րդ չափորոշիչը սահմանում է երեխաների կրթությունը և դաստիարակությունը:** Այդ չափորոշիչներով մանկատունն ապահովվում է երեխայի հանրակրթությունը, որպես կանոն, համայն-

քի հանրակրթական դպրոցներում, անհրաժեշտության դեպքում՝ ՀՀ օրենսդրությանը սահմանված կարգով տեղավորում է հատուկ հանրակրթական դպրոցներում:

Որոշման համաձայն՝ մանկատանը պետք է մշակվի եւ իրականացվի երեխայի անձի զարգացման հատուկ ծրագիր, որում նախատեսվում են անհատական պարապմունքներ, տնային հանձնարարությունների կատարում, ընթերցանություն, ակտիվ խաղեր, մասնագիտական կողմնորոշում, մանկատան տնտեսական (սննդի պատրաստում եւ ընտրություն, սանիտարական մաքրություն եւ այլն) աշխատանքներին եւ լրացուցիչ, արտադասարանային խմբակներին (սպորտային, գեղարվեստական, տեխնիկական) մասնակցություն՝ ըստ երեխայի հակումների, հետաքրքրությունների, որոնք կարող են կազմակերպվել ինչպես մանկատան ներսում, այնպես էլ մանկատանից դուրս:

**Հիմնական շարադրանք**

Վանաձորի մանկատան սաները սովորում են հանրակրթական միջնակարգ դպրոցներում:

Վանաձորի մանկատան սաների մեծ մասը հաճախում է **մանկատանը մոտ գտնվող թիվ 28 միջնակարգ դպրոցը:**

Սաներից 15-ը սովորում են թիվ 2 հատուկ դպրոցում, որտեղ սովորում են մտավոր թույլ ունակություններով օժտված երեխաները: Դպրոցը մանկատանից բավականին հեռու է, երեխաները գնում են ավտոբուսով: Երեխաներին դպրոց են տանում այդ դպրոցի ուսուցիչները, իսկ ճանապարհածախսը տրամադրվում է պետության կողմից:

Վանաձորի մանկատան սաների կրթության՝ դասապատրաստման և առաջադիմության համար, մանկատան պայմաններին համապատասխան, պատասխանատու են մակատան դաստիարակները:

Մանկատան սաների դասապատրաստումն իրականացվում է մանկատանը յուրաքանչյուր տարիքային խմբի համար նախատեսված դասապատրաստման հատուկ սենյակներում, որը միաժամանակ հանդիսանում է հանգստի սենյակ: Այստեղ երեխաները կարող են հեռուստացույց դիտել, երաժշտություն լսել և դասերը պատրաստել: Միևնույն խմբի երեխաների դասապատրաստումն իրականացվում է միաժամանակ, և դասապատրաստման սենյակում միաժամանակ ներկա են լինում 13-14 երեխա: Նրանց մի մասը բարձրաձայն ընթերցում և սովորում է պատմողական առարկաները, մյուս մասը կատարում է մաթեմատիկայի կամ հայերենի տնային առաջադրանքները: Օրվա հերթապահ դաստիարակը երեխաներին օգնում է պատրաստել բոլոր առարկաների դասերը: «Հիմա ես վերջացրել եմ դասերս, ու հեռուստացույց եմ դիտում, բայց խանգարում եմ չէ՞», -դիտարկումների ժամանակ մեզ հարցրեց սաներից մեկը:

**Անհրաժեշտ գրենական պիտույքները, դասագրքերը մանկատան սաներին տրամադրում է Վանաձորի մանկատունը:** Մանկատան սաները նշում են, որ իրենք բոլոր դասագրքերն էլ ունեն, եթե գրիչ, մատիտ կամ տետր է պետք լինում, դիմում են դաստիարակին: Նույնը հավաստիացրեցին նաև թիվ 28 դպրոցի ուսուցիչները:

**Դպրոցի ուսուցիչներից 5-ի կարծիքով՝ մանկատան սաների ուսման համար ոչ մի խոչընդոտ չկա:** Նրանք մանկատան սաների առաջադիմությունը գնահատում են «բավարար»: Նրանք դժգոհում են մանկատան սաների վարքից: Ուսուցիչների խոսքերով՝ մանկատան սաները դպրոցի մյուս աշակերտներից տարբերվում են իրենց վարքով և դաստիարակության վրա ավելի շատ ուշադրություն դարձնելու կարիք ունեն:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում մանկատան 11-16 տարեկան 37 սաներից բոլորը հարցաթերթիկները լրացրել են կոպիտ ուղղագրական սխալներով, ինչը մեզ համար հիմք է եզրակացնելու, որ երեխաների առաջադիմությունը ցածր է:

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերուս,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

Սաների աշխատանքի կամ մասնագիտական կողմնորոշման հարցերը կարգավորվում են տնօրինության կողմից: Սաները ներկայացնում են իրենց առաջարկները ու քննարկում տնօրինության հետ, կամ դաստիարակն ու տնօրենը իրենք են որոշում դրանք՝ երեխաների հետ նախապես համաձայնեցնելով: Մանկատան 16-ից բարձր սաների 70 %-ը դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակում է ԲՈՒՀ-ում, ուսումնարանում, տեխնիկումում: **Ուսման համար սահմանված վարձը փոխանցում է ԶՕՖ-ը**, միևնույն ժամանակ ԶՕՖ-ի կողմից յուրաքանչյուր ուսանողի ամսական 10.000 դրամ թոշակ է տրվում՝ տրանսպորտային ծախսերի համար: Աղջիկները, տղաները որոշակի հմտություն են սովորում նաև մանկատան ներսում կամ մանկատանից դուրս կազմակերպվող տարբեր խմբակներում՝ վարսավիրություն, կարուձև: Խմբակների համար վճարները ևս տրամադրում է ԶՕՖ-ը: Այն տղաները, ովքեր դպրոց չեն գնում կամ այլ զբաղմունք չունեն, արհեստավարժություն են սովորում մանկատանը՝ գործող մեքենաների վերանորոգման կետում: Վանաձորի մանկատանը երեխաների համար համակարգչային դասընթացներ են իրականացվել, երեխաներին դասընթացից հետո համապատասխան վկայականներ են տրվել: Երեխաների հետ զրույցի ընթացքում, սակայն նրանք նշում են, որ համակարգչի հետ աշխատանքին չեն տիրապետում:

Այսպիսով, Վանաձորի մանկատանը ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով ապահովում է երեխաների կրթությանն անհրաժեշտ պայմանները՝ գրեական պիտույքներ, դասագրքեր: Այնուամենայնիվ, դաստիարակները հետևողական չեն 7-15 տարեկան երեխաների կրթության գործում, միևնույն դաստիարակը պատասխանատու է բոլոր երեխաների դասապատրաստման համար, այն դեպքում, երբ նրանց մի մասը բարձրագույն մանկավարժական կրթություն չունի: Սա բացասաբար է ազդում երեխաների առաջադիմության վրա:

## Աշխատակազմի վերաբերմունքը

### Օրենսդրության վերլուծություն

**«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 19.1 հոդվածով**՝ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և լուսավորչական միջոցները ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից երեխային ֆիզիկական կամ հոգեկան ճնշման ենթարկելու բոլոր ձևերից, վիրավորանքներից, կամ չարաշահումներից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ սեռական չարաշահումը, պաշտպանելու նպատակով:

**Նույն հոդվածի 2-րդ մասով.** «Պաշտպանության այդպիսի միջոցները անհրաժեշտության դեպքում ներառում են սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով պահանջվող աջակցություն ցույց տալ երեխային և այն անձանց, ովքեր հոգ են տանում նրա մասին, ինչպես նաև երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի վերջնական դեպքերը կանխարգելելու և բացահայտելու, դրանց մասին տեղեկացնելու, քննարկման հանձնելու, հետաքննելու, բուժելու և այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձևերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության, դատական գործ հարուցելու համար»:

**Հոդված 28-ը և 29-ը սահմանում են այդ ոլորտում պետությունների պարտավորությունները. մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները դպրոցական կարգապահությունը երեխայի մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանք արտահայտող մեթոդներով պահպանելու համար և սույն կոնվենցիային համապատասխան:**

Մասնակից պետություններն ապահովում են, որ.

ա/ ոչ մի երեխա չենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը վիրավորող վերաբերմունքի կամ պատժի»:  
ՀՀ օրենսդրությունը «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 9-րդ հոդվածում

նշում է. «Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակ (ֆիզիկական, հոգեկան եւ այլ) բռնությունից պաշտպանության իրավունք: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

Երեխայի իրավունքների եւ օրինական շահերի ուսնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պետությունը եւ նրա համապատասխան մարմիններն իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից եւ նրա իրավունքների օրինական շահերի այլ ուսնահարումից»:

«Երեխաների խնամքը և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափորոշիչները հաստատելու մասին» որոշման 14-րդ գլուխը կարգավորում է մանկատան աշխատակազմի և երեխաների միջև փոխհարաբերությունները:

**35-րդ հոդվածով** մանկատունն ապահովում է երեխայի ինքնուրույնության, անկախության եւ սեփական արժանապատվության գիտակցության ձեւավորումը՝ հիմնված փոխադարձ հարգանքի, վստահության բարյացակամության, փոխօգնության եւ համագործակցության վրա:

**38-րդ հոդվածը սահմանում է**, որ երեխայի դաստիարակության ընթացքում կիրառվում են համապատասխան մանկավարժական մոտեցումներ, արգելվում է ցանկացած տիպի պատժամիջոցների կիրառումը: **«Մանկատանն անհնազանդ, անկառավարելի երեխայի նկատմամբ կիրառվում է համապատասխան մանկավարժական մոտեցում՝ մեթոդներ, հնարներ՝ հաշվի առնելով նրա տարիքը եւ զարգացման աստիճանը: Արգելվում է որեւէ պատժամիջոցի (ներառյալ նաեւ սննդի, հանգստի եւ անձնական հիգիենայի պայմանների, ծնողական իրավունքից չզրկված ծնողների, օրինական ներկայացուցիչների, հարազատների հետ տեսակցության սահմանափակումների) կիրառումը»:**

Նույն որոշումը սահմանում է նաև, որ մանկատունն աշխատակազմի յուրաքանչյուր աշխատողի համար ապահովում է աշխատանքի նկարագիրը և աշխատողների պարբերական մասնագիտական վերապատրաստումն ու բժշկական ստուգումը:

**«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը նշում է, որ խնամակալական կազմակերպությունները պետք է կազմեն երեխաների կյանքի որակի նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր:** Սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրն իր մեջ ներառում է երեխայի վիճակի գնահատականը, այդ թվում՝ երեխայի առողջական վիճակի գնահատականը, հոգեբանական եւ այլ հակաճգնաժամային միջոցներ, ինչպես նաեւ երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված երկարաժամկետ միջոցառումներ, որոնք իրականացնում են սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնները՝ ինքնուրույն կամ կրթական, բուժական կամ այլ կազմակերպությունների հետ համատեղ:

**Հիմնական շարադրանք**

Վանաձորի մանկատանը, ըստ տնօրենի, յուրաքանչյուր երեխայի համար կա սոցիալ-հոգեբանական զարգացման անհատական ծրագիր: Ըստ տնօրենի՝ ծրագիրը կազմվում է սոցիալական աշխատողի, հոգեբանի, ուսուցչի, դաստիարակի, իրավաբանի մասնակցությամբ, քննարկվում երեխայի հետ:

**Տնօրենն** աշխատանքային օրվա /առավոտյան 9:00-ից մինչև 18:00-ն երբեմն, 20:00-ն/ **ցանկացած ժամին կարող է այցելել երեխաներին, զրուցել նրանց հետ,**

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

**հետաքրքրվել առկա խնդիրներով և դրանց լուծման առաջարկներով:** Այնուամենայնիվ, ըստ մանկատան սաների՝ Վանաձորի մանկատան սաների, սաների և դաստիարակների միջև առկա տարածայնությունների մասին, ով երբեմն տեղյակ չի լինում:

**Վանաձորի մանկատանն աշխատում է 13 դաստիարակ,** որոնցից յուրաքանչյուրն աշխատում է միջին թվով 8-10 երեխայի հետ: Դաստիարակներն աշխատում են հերթափոխով, յուրաքանչյուրը՝ 24 ժամ: Դաստիարակ աշխատելու համար բազային բարձրագույն կրթությունը պարտադիր չէ: Ըստ տնօրենի՝ հաշվի է առնվում աշխատանքային փորձը, կարողությունները: Դաստիարակների ընդունելությունն իրականացնում է մանկատան տնօրենը:

Մանկատան դաստիարակների համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տարին մեկ անգամ իրականացնում է վերապատրաստման դասընթացներ: Թեմաները ներկայացնում են մանկատան աշխատակիցները:

Մանկատան աշխատակիցների աշխատանքային պարտականությունները սահմանվում են նրանց աշխատանքային պայմանագրով: Աշխատանքային հարաբերությունների կարգավորման ներքին կանոնակարգ չունեն:

**Երեխաների դաստիարակության հարցերով Վանաձորի մանկատանը զբաղվում է մեկ հոգեբանը:**

Հոգեբանի հետ զրույցի համար Վանաձորի մանկատանը հատուկ սահմանված գրաֆիկ չկա: Երեխաները նրան դիմում են ըստ անհրաժեշտության: Մանկատան սաների հետ զրույցի ընթացքում, սակայն, երեխաները նշեցին, որ լավ կլինի, որ ունենան հոգեբանի հետ զրույցի հատուկ օրեր, և որ հոգեբանն անընդհատ մանկատան շենքում չլինի: Սաներից մեկը նշեց, որ արդեն մտերիմ են դարձել ու շատ ժամանակ կաշկանդվում են հոգեբանին դիմել:

Վանաձորի մանկատան սաների կողմից  
առաջարկություններ, բողոքներ,  
ցանկություններ ներկայացնելու  
հնարավորությունը

Վանաձորի մանկատան տնօրենի, դաստիարակների, սաների միջև փոխադարձ համաձայնությամբ պատրաստվել է **առաջարկությունների և բողոքների արկղ**, որը փակցրած է առաջին հարկում: Սահմանված կարգով երեխաները կարող են իրենց անանուն բողոքներն ու առաջարկությունները զցել այդ արկղի մեջ: Շաբաթը մեկ անգամ տնօրենը սաների և դաստիարակների մասնակցությամբ պետք է բացի այդ արկղը, միասին կարդան, քննարկեն և լուծում տան բարձրացված հարցերին: Արկղի պատասխանատուն մանկատան տնօրենն է, և բանալին գտնվում է միայն նրա մոտ:

Ըստ մանկատան սաների՝ արկղը, թեև ամրացված է, բայց այլևս չի օգտագործվում: «Պարբերաբար ժողովներ ենք անում, էլ գրելու կարիք չկա», -նշում է տնօրենը:

Երեխաները նշում են, որ երբ իրենք անանուն բողոքներ են ներկայացրել դաստիարակների վերաբերմունքի վերաբերյալ, և արկղը բոլորի ներկայությամբ բացվել է, բողոքներն այնտեղ չեն եղել: Արկղն առանց բանալիի բացելու դեպքեր տնօրենը չի նկատել, նրան ոչ ոք չի էլ տեղեկացրել նման դեպքերի մասին:

Մանկատան սաների կողմից ներկայացված առաջարկություններն էլ թեև անանուն են եղել, սակայն գաղտնի չեն մնացել: Ինչ-որ մեկը հանել է, և առաջարկության բովանդակությունը հայտնի է դարձել շատերին: Երեխաները նշում են, որ նման դեպքերը կանխելու համար տնօրինության կողմից միջոցներ չեն ձեռնարկվել: Այդպես էլ արկղը դադարել է գործել որպես առաջարկությունների, բողոքների ներկայաց-

ման մեխանիզմ: Ըստ տնօրենի՝ նախատեսվում է փոխել արկղի ձևը, որպեսզի վերջինս անկյուններից էլ փակվի: Հետո պետք է արկղը այնպիսի տեղ դնել, որպեսզի զցելուց չչեղա:

Ներկայումս **երեխաները դաստիարակներին են դիմում իրենց առօրյա կենցաղային հարցերի լուծման համար**: Օրինակ՝ եթե ննջասենյակը փոխելու, ազատ ժամանցի կազմակերպման վերաբերյալ ունենում են որևէ առաջարկություն, դժգոհություն, նրանք առաջինը դիմում են դաստիարակին:

Մանկատան **8-11 տարեկան սաներից 22-ը նշում են, որ իրենց առաջարկությունները դաստիարակների կողմից ընդունվում են երբեմն**:

**11-16 տարեկան տարիքային խմբից 25-ը նշում են, որ դաստիարակների կողմից իրենց առաջարկությունները միշտ են ընդունվում**:

Ըստ մանկատան 16-ից բարձր տարիքային խմբի սաների՝ դաստիարակներից մի քանիսի հետ իրենց հարաբերությունները «ընկերական են»: Այս տարիքային խմբի սաների առաջարկությունները «ընկերական» կարգով էլ հավանության են արժանանում դաստիարակների կողմից:

Կան հարցեր, որոնց լուծման համար մանկատան սաները պարտավոր են գրավոր դիմում ներկայացնել տնօրինությանը, մասնավորապես՝ մանկատանից երկար ժամանակով բացակայելու համար: «Եթե կոնկրետ նշում ես, թե ուր ես գնում, թողնում ես համապատասխան հեռախոսահամարը, տնօրենը թույլ է տալիս», -բացատրում են մանկատան սաները:

Մանկատան ներքին կարգուկանոնի, ռեժիմի, դրանց փոփոխության, դաստիարակների վերաբերմունքի վերաբերյալ առաջարկություններ սաները գրեթե չեն ներկայացնում: «Միևնույնն է չի ընդունվում», -նշում են նրանք: Այնուամենայնիվ, նրանք փորձեր չեն էլ անում:

Վանաձորի մանկատան 8-11 տարեկան սաներն իրենց նկատմամբ դաստիարակների վատ վերաբերմունքի մասին բողոքում են տնօրենին: Այս տարիքային խմբի աղջիկներից մեկը նշել է, որ դաստիարակը գիտի, որ եթե իրեն լավ չվերաբերվի, ինքը կբողոքի մանկատան տնօրենին՝ «Աշիկ քեռուն», նա էլ կջղայնանա դաստիարակի վրա:

16 և բարձր տարիքային խմբի սաները դաստիարակների վատ վերաբերմունքի մասին տնօրենին չեն տեղեկացնում «Հետևանքը դաստիարակների համար լավ չի լինի», -նշում են նրանք: Դաստիարակների հետ ունեցած այս տարիքային խմբի տարածայնությունները հարթվում են ժամանակի ընթացքում:

Պարտականություններ, պատասխանատվություններ և պատժամիջոցների առկայությունը, բռնություններ

**Վանաձորի մանկատան 7 տարեկանից բարձր բոլոր սաները նշում են, որ տեղյակ են իրենց իրավունքներին և պարտականություններին**: Դրանց մասին նրանք տեղեկացել են «Չափորոշիչներ մանկատանը բնակվող երեխաների խնամքի ու դաստիարակության վերաբերյալ» մանկատանն առկա պաշտոնական փաստաթղթից, իրենց դաստիարակների և դպրոցի ուսուցիչներից:

7 տարեկանից բարձր երեխաները պարտավորվում են.

- հետևել օրվա ռեժիմին,
- սահմանված հերթապահությամբ մասնակցել իրենց սենյակների, խոհանոցի, բակի մաքրությանը և այլ կարգի կենցաղային աշխատանքների,
- չժեծել իրենցից փոքրերին,

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերուս,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

- չբացակայել դասերից,
- մանկատանից դուրս գալու համար նախապես զգուշացնել դաստիարակին և այլն:

**25 երեխա նշում են, որ մանկատանն իրենց իրավունքներից ոչ մեկը չի խախտվում:**

Ըստ մանկատան սաների՝ իրենց նկատմամբ **կիրառվող պատասխանատվությանը ամենահիմնական միջոցներից են խաղերից, միջոցառումներին մասնակցելուց զրկելը, կարճ ժամանակով մեկուսացնելը:** Ուղարկում են սենյակները, մտնում ենք անկողին ու մինչև ներողություն չենք խնդրում, դուրս չեն թողնում կամ փակում են տուալետում», - պատկերավոր բացատրում են սաները:

8-11 տարեկան և 12-16 տարեկան երեխաները նշում են, որ եղել են դեպքեր, երբ զրկել են սննդից, երբ **աղջիներից մեկն առանց մազերը կապելու գնացել էր հաց ուտելու:**

**11-16 տարեկան տարիքային խմբից 12-ը նշում են, որ Վանաձորի մանկատանը դաստիարակների կողմից իրենց նկատմամբ կիրառվում են հոգեբանական և ֆիզիկական բռնություններ:** «Օրագիրս չլրացնելու համար դաստիարակը խփում է գլխիս կամ եթե դասերս չեն սովորում, փակում են զուգարանում»: Ըստ մանկատան այս խմբի սաների՝ մանկատանից երեխաների փախուստի դեպքեր են եղել, որոնց պատճառը եղել է հենց դաստիարակների վերաբերմունքը: «Երբ դաստիարակը ծեծեց, թողեցի ու փախա», - հիշում է նրանցից մեկը:

«Մեզ հետ լավ չեն վերաբերվում, կոպիտ են», - նշում են 8-11 տարեկան սաները: Մեր դիտարկումների ընթացքում, մեր ներկայությամբ 8-11 տարեկան սաների խմբում դայակներից մեկը բարձր գոռաց երեխայի վրա վերջինիս չարաճճիության համար. «Աղջի, հո դու հիմար չես»: Մանկատան տնօրենը չի ժխտում, որ դաստիարակները սաներին կոպիտ բառեր են ասում. «Երեխաներն անհարգալից են վերաբերվում դաստիարակներին, դա է պատճառը», - նշել է տնօրենը:

**16 և բարձր տարիքի երեխաների խոսքերով դաստիարակները վիրավորում են սաների արժանապատվությունը.** «Բացասական հնչերանգով հիշեցնում են ծնողներին՝ ինչ ձեր ծնողներն էին, էն էլ դուք եք»: Այս տարիքային խմբի սաները Վանաձորի մանկատանն իրականացվող փոփոխությունների վերաբերյալ որպես առաջարկություն ներկայացրել են՝ կրճատել մանկատան դաստիարակների 30%-ին:

Մանկատան **դաստիարակներից 5-ը** որպես երեխաների նկատմամբ կիրառվող պատասխանատվության **միջոց նշել են սիրած զբաղմունքից զրկելը:** Նրանք բացատրում են նաև, որ երեխաների հետ հիմնականում զրուցում են, նրանց սխալի վերաբերյալ միայն խորհուրդներ են տալիս:

Մանկատանը դեպք է եղել, երբ մանկատան դաստիարակներից մեկին տնօրենը հեռացրել է աշխատանքից մանկատան սաներից մեկին ծեծելու համար: 11-16 տարեկան սաներից մեկն էլ նշում է, որ ինքը միայն տնօրենին՝ Աշիկ քեռուն, է սիրում, քանի որ դաստիարակներն իրենց հետ լավ չեն վերաբերվում:

Այսպիսով, Վանաձորի մանկատանը երեխաների դաստիարակությունն իրականացվում է այնպիսի մեթոդներով, որոնք չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված չափանիշներին: Վանաձորի մանկատանը դաստիարակների կողմից երեխաների նկատմամբ կիրառվում են ֆիզիկական բռնություններ: Երեխաների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները՝ ազատ ժամանցի սահմանափակում, զրկումը սննդից, արգելված են օրենսդրությամբ: Առաջարկությունների, բողոքների համար սահմանված մանկատանն առկա կանոնակարգը չի գործում: Տնօրինության կողմից հետևողականություն չի դրսևորվում մանկատան սաների, սաների և դաստիարակների միջև հարաբերությունների կարգավորման համար:

# ՄԱՍ 4

## ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզային հոգեկենսաբանական դիսպանսեր

**Լ**ոռու մարզային հոգեկենսաբանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց սպասարկման, նրանց կենցաղային, սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ սահմանված նվազագույն չափորոշիչներ ՅՅ օրենսդրությամբ սահմանված չեն:

Հոգեկան խանգարումով տառապող անձանց անվճար բժշկական օգնության և սպասարկման համար հատկացումներն իրականացվում են ՅՅ պետական բյուջեից՝ մեկ անձի հաշվարկով, դիսպանսերի կողմից ներկայացված և Լոռու մարզպետարանի կողմից հաստատված նախահաշվին համապատասխան:

Լոռու մարզային հոգեկենսաբանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ընթացքում բացահայտվել են հետևյալ խնդիրները.

- հոգեկան խանգարումով տառապող անձանց տրամադրվող սննդի համապատասխան կալորիականությունը, բազմազանությունը և հավելյալ սննդի հնարավորությունը չի ապահովվում:
- Խմելու ջրի որակը անբավարար է:
- Լոռու մարզային հոգեկենսաբանական դիսպանսերն ապահովված չէ անձնական հիգիենայի համար անհրաժեշտ պայմաններով:
- Հոգեկենսաբանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց տրամադրվող հագուստը անբավարար է:
- Հիվանդասենյակները կահավորված չեն անհրաժեշտ գույքով (սեղան, աթոռ, պահարան, նաև օդափոխիչ):
- Առանձնացված չեն ժամանցի սրահը, ճաշարանը և այցելությունների սենյակը:
- Հոգեկենսաբանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձինք հնարավորություն չունեն՝ օգտվելու լրատվական միջոցներից կամ սահմանափակ է դրանց մատչելիությունը:
- Դիսպանսերը չի ապահովում հոգեկան խանգարումով տառապող անձանց ամենօրյա զբոսանքը:
- Լոռու մարզային հոգեկենսաբանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց նկատմամբ կիրառվում են բռնություններ, որը չի արժանանում քննության որևէ մարմնի կողմից:
- Չստակեցված չեն հոգեկան խանգարումով տառապող անձանց աշխատանքներում ներգրավման կարգը և պայմանները:
- Հանգստացնող-զսպող միջոցների տևողությունը կարող է տևել մինչև 24 ժամ:
- Հոգեկան խանգարումով տառապող անձինք տեղեկացված չեն իրենց իրավունքներին և պարտականություններին և չեն տիրապետում իրենց ի-

Լոռու մարզային  
հոգեւոյնաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

- րավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվությանը:
- Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերում չի կարողանում ապահովել անվճար և արդյունավետ դեղամիջոցներով:
- Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերում անհրաժեշտ քանակի կադրերի բացակայություն կա:
- Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերում բժշկական անձնակազմի աշխատավարձերը չեն համապատասխանում իրենց աշխատանքների բնույթին:
- Անբավարար է նոր մեթոդական ձեռնարկների մատակարարումը և կադրերի վերապատրաստման հնարավորությունները:

### Վանաձորի ծերատուն

Վանաձորի ծերատանը տարեցների խնամքն իրականացվում է Հայ Օգնության Ֆոնդի Նյու-Յորքի գրասենյակի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներով: Վանաձորի ծերատունը հանդիսանում է միայնակ ու սոցիալապես անապահով տարեցներին տեղում սոցիալական աջակցության /ծառայությունների մատուցման/ կենտրոն:

Վանաձորի ծերատանն իրականացված մեր ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են հետևյալ խնդիրները.

- ծերատան անկողնային հիվանդների նկատմամբ շուրջօրյա խնամք չի իրականացվում, նրանք անուշադրության են մատնված: Չկա խնամող քույր, տարեցների նկատմամբ խնամքը դրված է բուժքրոջ ու սանիտարի վրա:  
Աշխատողները տարեցների նկատմամբ կոպիտ են վերաբերվում, երբեմն նույնիսկ ֆիզիկական բռնություններ են կիրառվում նրանց նկատմամբ:
- Ծերատան սանիտարահիգիենիկ բոլոր պայմանները չէ, որ համապատասխանում են նվազագույն չափորոշիչներին: Խնամվողներին չեն տրվում անձնական հիգիենայի պարագաներ /օճառ, թուղթ, սրբիչներ, այլ/: Հաստատության ընդհանուր մաքրությունը անբավարար է: Անկողնային հիվանդների սենյակներում տիրում է հակասանիտարական վիճակ:
- Վանաձորի ծերատունը խնամառուներին չի ապահովում անհրաժեշտ բոլոր տեսակի հագուստներով: Անկողնային սպիտակեղենը տրվում է մեկ անգամ, իսկ դրանց մաշվելու դեպքում խնամառուն պարտավոր է իր միջոցներով գնել նորը:
- Վանաձորի ծերատանը խնամառուներին տրվող սննդի որակը չի գոհացնում խնամառուներին:
- Տարեցները տեղյակ չեն, թե ինչ նպատակով են իրենց թոշակներից պահումներ արվում և ինչպես են դրանք տնօրինվում:
- Աշխատակիցների կողմից տարեցների նկատմամբ վերաբերմունքը ավելի շատ վերահսկողական է, քան խնամակալական, առկա են նաև խտրականության դրսևորումներ:
- Ծերատունը չունի միջանձնային հարաբերությունների կարգավորման մեխանիզմ:
- Տարեցներին չի տրամադրվում սոցիալ-հոգեբանական, հարկ եղած դեպքում նաև իրավաբանական օգնություն:
- Պարտականությունները չկատարելու դեպքում կիրառվում են պատժամիջոցներ, այդ թվում նաև ֆիզիկական ու հոգեբանական բռնություններ:
- Աշխատակիցների աշխատավարձերը շատ ցածր են ու ոչ համարժեք իրենց կատարած աշխատանքին:
- Վանաձորի ծերատունը գտնվում է քաղաքից բավական հեռու և չկա ծերատուն տանող ներքաղաքային տրանսպորտ: Ուստի աշխատողները կարող են ծերատուն գնալ կամ անձնական մեքենաներով, կամ օգտվելով տաքսի ծառայությունից:
- Ծերատան խոհանոցի և լվացքատան աշխատանքային պայմանները

բավարար չեն:

Վանաձորի մանկատուն

ԵՉՐԱԿԱՆԱԿՈՒՄ

Վանաձորի մանկատանը երեխաների խնամքն ու դաստիարակությունն ընդհանուր առմամբ իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային փաստաթղթերով սահմանված իրավական նորմերին համապատասխան: ՀՀ օրենսդրությունը ներառում է միջազգային պայմանագրերով և պարտականություններով սահմանված պետության կողմից ստանձնած պարտավորություններին համապատասխան իրավական դրույթներ:

Երեխաների սնունդը, հագուստը, նրանց ազատ ժամանցը կազմակերպվում են սահմանված չափորոշիչներով:

Այնուամենայնիվ, Վանաձորի մանկատանը խնդիրներ են ծագում երեխաների իրավական կարգավիճակի, նրանց առողջությանը, կրթությանը, երեխաների նկատմամբ աշխատակիցների վերաբերմունքին վերաբերող հարցերում:

- Երեխաների համապատասխան իրավական կարգավիճակի սահմանման ժամանակ իրավասու կառույցները թերանում են: Հոգաբարձության և խնամակալության մարմինները չեն պահպանում իրավական կարգավիճակի սահմանման համար նախատեսված ժամկետները:
- Համապատասխան իրավական կարգավիճակի բացակայությունը հնարավորություն է չի տալիս մանկատան սաներին անվճար բուհական կրթություն ստանալ:
- Մանկատանը երեխաների դասապատրաստումն իրականացվում է միաժամանակ և միևնույն սենյակում, ինչը բացասական ազդեցություն է թողնում երեխաների ուսուցման արդյունավետության վրա:
- Մանկատանը երեխաների դաստիարակությամբ զբաղվող դաստիարակները չունեն համապատասխան մանկավարժական կրթություն, ինչը նվազեցնում է նրանց կողմից երեխաներին դասապատրաստման պրոցեսում տրամադրվող օգնության հնարավորությունը:
- Վանաձորի մանկատան սաները չեն անցնում կուրորտային բուժում, որը պարտադիր է որոշ խրոնիկ հիվանդությունների դեպքում:
- Մանկատան սաներին տրվող հագուստի քանակությունն ու տեսականին տարբեր է, դրսևորվում է որպես խտրականություն:
- Վանաձորի մանկատանը բացակայում են աշխատակազմի աշխատանքային հարաբերությունների կարգավորման կանոնակարգերը և համապատասխան աշխատանքի նկարագրերը:
- Դաստիարակների կողմից Վանաձորի մանկատան սաների նկատմամբ կիրառվում են բռնություններ, ցուցաբերվում է անհարգալից, մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:
- Վանաձորի մանկատանը երեխաների, երեխաների և դաստիարակների միջանձնային հարաբերությունների կարգավորման սահմանված կանոնակարգ չկա:
- Վանաձորի մանկատանն առկա երեխաների կողմից առաջարկությունների, բողոքների ներկայացման մեխանիզմը չի գործում:
- Պետությունը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար նախատեսված աշխատանքի տեղավորման, մասնագիտացված աշխատատեղեր ստեղծելու պարտավորությունը չի իրականացնում:
- Պետությունը չի կատարում առանց ծնողական իրավունքի մնացած երեխաներին 18 տարին լրանալուց հետո բնակելի տարածությամբ ապահովելու իր պարտականությունը: Ուստի Վանաձորի մանկատանն ապրում են 18 տարին լրացած 12 երեխա, որոնք բնակության այլ վայր չունեն:

Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերոււմ, Վանաձորի ծերատանը եւ Վանաձորի մանկատանը իրականացված մոնիթորինգի արդյունքները

Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսեր

- Մշակել հոգեւոյնաբանական դիսպանսերում հոգեկան խանգարումով տառապող անձանց բժշկական օգնության և սպասարկման /սնունդ, կենցաղային պայմաններ, սանիտարահիգիենիկ պայմաններ, հագուստ/ նվազագույն չափորոշիչներ:
- Ավելացնել հոգեկան խանգարումով տառապող անձանց սննդի գումարը:
- Ամենամյա ֆինանսական ծախսերի մեջ ներառել Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերի հոգեկան խանգարումով տառապող անձանց բուժման համար առանձնացված բաժանմունքի, խոհանոցի, բաղնիքների վերանորոգման ծախսերը:
- Ավելացնել Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերի աշխատանքի հաստիքների թիվը:
- Համապատասխան վերապատրաստում կազմակերպել և իրականացնել բուժակների և սանիտարների համար:
- Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերի աշխատակիցների համար իրականացնել մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացներ:
- Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերի աշխատակիցների համար մշակել հոգեկան խանգարումով տառապող անձանց հետ աշխատանքի կանոնակարգ:
- Մեծացնել անվճար տրվող դեղերի ցանկը:
- Բարձրացնել Լոռու մարզային հոգեւոյնաբանական դիսպանսերի աշխատակիցների աշխատավարձերը:

Վանաձորի ծերատուն

- Ունենալ խնամող քույր, որը շուրջօրյա խնամք կտանի անկողնային հիվանդների նկատմամբ: Կարելի է նրան ընդունել ոչ որպես մշտական աշխատող, այլ այն ժամանակ, երբ անկողնային հիվանդներ կլինեն ծերատանը: Եթե անգամ հովանավորը չհամաձայնվի խնամողի հաստիք ավելացնել, կարելի է հենց անկողնային հիվանդների ամբողջ կենսաթոշակը հատկացնել խնամողին՝ որպես աշխատավարձ:
- Ունենալ հոգեբան, որը մեծապես կնպաստի և՛ տարեցների, և՛ աշխատողների ու տարեցների միջև առաջացած խնդիրների լուծմանը, կոնֆլիկտների հարթմանը:
- Բարձրացնել աշխատակիցների աշխատավարձերը:
- Վերապատրաստման դասընթացներ կազմակերպել հաստատության բոլոր աշխատողների համար:
- Պարբերաբար ժողովներ կազմակերպել տարեցների հետ, որը հնարավորություն կտա վերհանել նրանց հուզող հարցերն ու դրանց լուծման ուղղությամբ տարեցների առաջարկները, տեղեկատվություն կտրամադրվի այն մասին, թե ինչ նպատակներով են ծախսվել նրանց կենսաթոշակներից հավաքված գումարները:
- Ժողովներ կազմակերպել աշխատողների հետ՝ վերհանելու նրանց հուզող հարցերը
- Հիգիենայի պարագաներ տրամադրել տարեցներից յուրաքանչյուրին:
- Հոգեկան խանգարումով տառապող անձանց, հաշմանդամների դեղորայքը անվճար հատկացնել:

Վանաձորի մանկատուն

- հստակեցնել համագործակցությունը կից կառույցների հետ՝ երեխաների իրավական կարգավիճակի սահմանման նպատակով
- ունենալ ժամավճարով աշխատող համապատասխան մասնագետներ՝ երեխաների դասապատրաստման համար

- Մեծացնել աշխատակազմի համար կազմակերպվող վերապատրաստման դասընթացների հաճախականությունը:
  - Վերանայել երեխաների կողմից բողոքներ, առաջարկություններ ներկայացնելու կարգը:
  - Սահմանել մանկատան 12 և բարձր տարիքի սաներից կազմված կառավարման խորհուրդ, որը կմասնակցի մանկատան սաների վերաբերյալ ընդունվող որոշումների կայացմանը, առկա ռեսուրսների տնօրինմանը:
  - Մշակել աշխատանքային հարաբերությունների կանոնակարգ
  - հետևողական գտնվել երեխաների նկատմամբ կիրառվող բռնությունների դեպքում աշխատակիցների նկատմամբ պատասխանատվություն սահմանելու գործում:
  - Ունենալ մանկատան հաստատությունից դուրս աշխատող երկրորդ հոգեբանը և սահմանել ընդունելության հատուկ օրեր:
  - Մշակել երեխաների միջև փոխհարաբերությունների կարգավորման կանոնակարգ:
  - 16 տարեկանից բարձր սաների համար ունենալ երեկոյան առանձնացված ռեժիմ:
  - Մանկատան քվորների առանձին հովանավորների կողմից տրամադրվող օգնությունը մանկատան տնօրենի կողմից տնօրինվի «ընդհանուրին» սկզբունքով:
-

Լոռու մարզային  
հոգեւոյնաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

# ՄԱՍ 5

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

«Լոռու մարզային հոգեւոյնաբանական  
դիսպանսերի մոնիթորինգ»

### **Մոնիթորինգի կոնցեպցիա**

Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքները

### **Գործունեության ոլորտ Վանաձորի հոգեւոյնաբանական դիսպանսեր**

Ռազմավարական նպատակ

Վանաձորի հոգեւոյնաբանական դիսպանսերում հոգեկան առողջության  
խնդիրներ ունեցող անձանց պահման պայմանների համապատասխանեցումը  
միջազգային ստանդարտներին

### **Օպերատիվ նպատակ 1**

Բարելավել հոգեւոյնաբանական դիսպանսերում հիվանդների պահման  
պայմանները

### **Հետազոտական խնդիր**

Հետազոտել հիվանդների պահման պայմանները հոգեւոյնաբանական  
դիսպանսերում

### **Խնդիր 1 – Սնունդ**

- Օրական քանի՞ անգամ են սնվում հիվանդները:
- Տրամադրվող սննդի կալաորիականությունը համապատասխանում է արդյոք գոյություն ունեցող չափանիշներին:
- Կա՞ արդյոք սննդի տեսականի և բազմազանություն:
- Խմելու ջրի մատչելիությունը, որակը:
- Հյութերի առկայությունը, բազմազանությունը
- Հյութերի տրամադրման հաճախականությունը
- Հավելյալ սննդի առկայությունը
- Հարազատները բերում են արդյոք սնունդ:
- Հարազատների կողմից բերված սնունդը ամբողջությամբ տրվում է հիվանդին, թե՞ ոչ:
- Ինչու՞ են հարազատները բերում սնունդ /սոված մնալու պատճառով/:
- Դրսից բերված սնունդը անհրաժեշտության դեպքում կարող են արդյոք տաքացնել
- Հիվանդասենյակում սննդի առկայություն

**Խնդիր 2 – Սանիտարահիգիենիկ պայմաններ**

- Կա՞ արդյոք սառը և տաք ջուր
- Կարո՞ղ են արդյոք հիվանդներն անարգել օգտվել ջրից:
- Լոգանք ընդունելու հնարավորությունը /ըստ սահմանված գրաֆիկի, ըստ ցանկության/ և հարմարավետությունը
- Անձնական հիգիենայի պարագաների /օճառ, խոզանակ, ատամի մածուկ, .../ առկայությունը
- Այդ պարագաները ընդհանուր են, թե՞ անձնական
- Ո՞վ է տրամադրում այդ պարագաները /դիսպանսերը, թե՞ հարազատները/
- Ի՞նչ հաճախականությամբ են փոխում սպիտակեղենը, ներքնաշորերը և շորերը:
- Ո՞վ է տրամադրում այդ պարագաները (դիսպանսերը, թե՞ հարազատները)
- Լողասենյակի և զուգարանի մաքրությունը

**Խոհանոցը և ճաշարանը**

- Խոհանոցի և ճաշարանի մաքրությունը,
- սննդի մաքրությունը

**Խնդիր 3 – Կենցաղային պայմաններ**

- Յոգեմարդաբանական դիսպանսերի զբաղեցրած տարածքը, ընդհանուր բնակմակերեսը
- Յոգեմարդաբանական դիսպանսերի շրջակա միջավայրը
- Ապահովված է արդյո՞ք հոգեմարդաբանական դիսպանսերը անվտանգության համակարգով
- Յոգեմարդաբանական դիսպանսերի դռները կողպված են արդյոք /ո՞վ է բացում, փակում/
- Յիվանդասենյակների թիվը
- Յիվանդասենյակի բնակմակերեսը և հիվանդների թիվը
- Ջուգարանների թիվը և հասանելիությունը
- Կա՞ն արդյոք առանձին զուգարաններ տղամարդկանց և կանանց համար և դրանց համապատասխանելիությունը:
- Լոգարանների թիվը և հասանելիությունը
- Առանձնացվա՞ծ են արդյոք դրանք տղամարդկանց և կանանց համար և դրանց համապատասխանելիությունը:
- Ի՞նչ հիմունքներով /հիվանդության տեսակ, տարիք, սեռ/ են տեղավորված հոգեկան առողջության խնդիր ունեցող մարդիկ հիվանդասենյակներում
- Յոգեմարդաբանական դիսպանսերի /հիվանդասենյակի/ ջերմաստիճանը և ջեռուցելու հնարավորությունները
- Յոգեմարդաբանական դիսպանսերի /հիվանդասենյակի/ լուսավորությունը /քանի՞ լուսամուտ կա, էլեկտրական լամպի առկայություն, անջատիչի և վարդակի/ռազետկի/ առկայություն և հասանելիություն
- Յոգեմարդաբանական դիսպանսերի /հիվանդասենյակի/ օդափոխման հնարավորությունները
- Ո՞վ է բացում և փակում լուսամուտները և դռները: /Յիվանդասենյակի լուսամուտները ինչպիսի՞ն են /ճաղերով, հատուկ/:
- Յոգեմարդաբանական դիսպանսերի կահավորումը
- հիվանդասենյակում առկա կահույքը /պահարաններ, սեղան, աթոռներ, մահճակալներ, դրանց քանակը և դասավորվածությունը/
- Ժամանցի սենյակում առկա կահույքը /բազմոց, աթոռ, սեղան, դրանց քանակը/
- ճաշարանում առկա կահույքը /սեղան, աթոռ, դրանց քանակը, որակը, համապատասխանությունը հոգեկան առողջության հետ կապված խնդիր

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

- ունեցող մարդկանց թվին/  
խոհանոցում առկա կահույքը /սեղան, սառնարան, գազօջախ, լվացարան,  
սպասք, սպասքի որակը և քանակը/  
• տեսակցության սենյակ

#### **խնդիր 4- Ազատ ժամանց, զրոսանք**

- ժամանցի հնարավորությունը /մշակութային միջոցառումներ,  
հեռուստացույց, ռադիո, թերթեր/:
- Կա արդյոք հատուկ ժամանցի սենյակ: Քանի՞ հատ
- Սահմանված է արդյոք օրվա ռեժիմը:
- Մասնաշենքից դուրս գալու հնարավորություն:
- Բոլորի՞ն է արդյոք դա հասանելի:
- Ո՞վ է ուղեկցում հիվանդին:

#### **Օպերատիվ նպատակ 2**

Հասցնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը  
նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի առկայության վերացմանը

#### **Հետազոտական խնդիր**

Հետազոտել անձնակազմի վարվելակերպը հիվանդների հետ

#### **խնդիր 1- Անձնակազմի վերաբերմունքը**

- Անձնակազմի վարքագծի համապարտադիր կանոնների առայությունը
- Տնօրենի կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և բուժանձնակազմի նկատմամբ վերահսկողությունը
- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարգապահական կանոնների առկայությունը
- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք տեղա՞կ են դրան
- Գործու՞մ է արդյոք խրախուսանքի կամ պատասխանատվության համակարգ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար /զսպաշապիկներ, հարկադրանքի այլ միջոցներ/
- Ի՞նչ ձևով և ի՞նչ պայմաններում են կիրառվում խրախուսանքի և պատասխանատվության միջոցները
- Վերաբերմունքը խնամքի կարիք ունեցողների նկատմամբ /լողանալ, սնվել.../
- Նրանց օգնում են անվճար, թե՞ վճարովի
- Բուժանձնակազմի վերաբերմունքը հիվանդների միջև ծագած կոնֆլիկտների դեպքում և կոնֆլիկտից հետո:

#### **Օպերատիվ նպատակ 3**

Նպաստել հոգեբանական դիսպանսերում բժշկական օգնություն ստանալու  
իրավունքի ապահովմանը

#### **Հետազոտական խնդիր**

Ուսումնասիրել բուժօգնության տրամադրման ընդհանուր վիճակը  
հոգեբանական դիսպանսերում:

**Պրոբլեմ 1.**

Բուժսպասարկման որակը

**Չեղարկվող հարցեր**

- Անհրաժեշտ որակյալ դեղորայքի առկայությունն ու հասանելիությունը
- Դեղորայքը տրամադրվում է անվճար, թե՞ վճարովի հիմունքներով:
- Անհրաժեշտ բժշկական գործիքների, սարքավորումների առկայությունն ու պիտանելիությունը
- Բուժանձնակազմի աշխատանքային գրաֆիկը
- Անհրաժեշտության դեպքում տրամադրվում են արդյոք ակնոցներ, հենակներ, լսողական ապարատներ, սայլակներ

**Պրոբլեմ 2.**

Անհրաժեշտ քանակի կադրերի առկայությունն ու որակավորումը

**Չեղարկվող հարցեր**

- Կա՞ արդյոք անհրաժեշտ քանակի բուժաշխատող:
- Ունե՞ն արդյոք անհրաժեշտ որակավում:
- Վերապատրաստվում են արդյոք, թե ոչ
- Մեթոդական ձեռնարկների առկայություն /թարմացվում են, թե ոչ/

Լոռու մարզային  
հոգեբանա-փրկարարական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

**Մոնիթորինգի կոնցեպցիա**  
Տարեցների իրավունքները

**Գործունեության ոլորտ**  
Վանաձորի տարեցների տուն

**Ռազմավարական նպատակ**

Ապահովել տարեցների իրավունքների պաշտպանությունը «Վանաձորի տարեցների տանը»

**Օպերատիվ նպատակ 1.**

Նպաստել ծերերի բժշկական օգնություն ստանալու իրավունքի պահպանմանը «Վանաձորի տարեցների տանը»:

**Չետազոտական խնդիր**

Ուսումնասիրել բուժօգնության մատչելիությունը ծերերի համար:

**Պրորլեմ 1.**

Դեղորայքի առկայությունն ու մատչելիությունը

**Չետազոտական հարցեր**

- Կա՞րողյոք անհրաժեշտ դեղորայք
- Դեղորայքը տրամադրվում է անվճար, թե՞ վճարովի հիմունքներով
- Ստանու՞մ են արողյոք որակյալ դեղորայք
- Բոլորին են արողյոք դրանք հասանելի

**Պրորլեմ 2.**

Անհրաժեշտ քանակի կադրերի առկայությունն ու նրանց որակավորումը

**Չետազոտական հարցեր**

- Կա՞րողյոք անհրաժեշտ քանակի բուժաշխատող /թերապևտ, հոգեբան/
- Ինչպե՞ս է կատարվում կադրերի ընտրությունը /հ՞նչ կրթություն ունեն, քանի՞ տարվա աշխատանքային փորձ է անհրաժեշտ, կա՞րողյոք տարիքային սահմանափակում/,
- բուժանձնակազմի համար կազմակերպվո՞ւմ են արողյոք վերապատրաստման դասընթացներ

**Պրորլեմ 3.**

Բուժսպասարկման մակարդակը

**Չետազոտական հարցեր**

- Բժշկական գործիքների, սարքավորումների առկայությունը, շահագործման ժամկետները
- օրվա ընթացքում քանի՞ ժամ է աշխատում բուժանձնակազմը

- անհրաժեշտության դեպքերում ո՞վ է ցուցաբերում առաջին օգնությունը, կանչում են արդյոք շտապ օգնություն
- կա՞ արդյոք գիշերային հերթապահ
- լինում են արդյոք հարկադիր բուժման դեպքեր
- բուժօժանայություններ վճարովի՞ են, թե՞ անվճար
- կա՞ն արդյոք առանձին սենյակներ վարակիչ հիվանդների համար
- տարեցների տնից դուրս բուժվելու հնարավորությունը /պոլիկլինիկաներում, հիվանդանոցներում/
- այդ բուժումն իրականացվում է անվճար, թե վճարովի հիմունքներով
- անհրաժեշտության դեպքում տրամադրվում են արդյոք ակնոցներ, հենակներ, լսողական ապարատներ, սայլակներ, պրոթեզներ
- տրամադրվում են արդյոք անվճար, թե վճարովի հիմունքներով

**Օպերատիվ նպատակ 2.**

Նպաստել անձնակազմի կողմից ծերերի նկատմամբ մարդկային վերաբերմունքին

**Հետազոտական խնդիր**

Ուսումնասիրել անձնակազմի վերաբերմունքը ծերերի նկատմամբ:

**Պրոբլեմ 1.**

Անձնակազմի վերաբերմունքը ծերերի նկատմամբ

**Հետազոտական հարցեր**

- Ինչպե՞ս է անձնակազմը /բուժանձնակազմ, սոց. աշխատողներ, ղեկավարություն/ վերաբերվում ծերերին, անկողնային ծերերին:
- Եթե վատ են վերաբերվում, ապա ինչո՞ւ
- Կա՞ն սահմանված վարքագծի կանոններ տարեցների համար
- Տեղյակ են արդյոք տարեցները դրանց մասին
- Ի՞նչ է անում տնօրինությունը տարեցների նկատմամբ կոպիտ վերաբերմունքի դեպքում,
- պատասխանատվության ի՞նչ միջոցներ են կիրառվում անձնակազմի նկատմամբ, տարեցների հետ վատ վերաբերմունքի դեպքում
- պատասխանատվության ի՞նչ միջոցներ են կիրառվում տարեցների նկատմամբ սահմանված վարքագծի կանոնները խախտելու դեպքում

**Պրոբլեմ 2.**

Ծերերի աշխատանքային շահագործումը

**Հետազոտական հարցեր**

- Ի՞նչ աշխատանքներ են կատարում տարեցները «Վանաձորի տարեցների տանը»
- օրվա ընթացքում քանի՞ ժամ են աշխատում նրանք
- արդյոք այդ աշխատանքները չեն վնասում նրանց առողջական վիճակին
- աշխատանքը կրում է կամավոր, թե հարկադիր բնույթ
- աշխատանքի դիմաց ստանու՞մ են արդյոք վարձատրություն

**Պրոբլեմ 3.**

Ծերերի կողմից հաստատության անձնակազմի առջև բարձրացված հարցերի

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերու, Կանադոսի  
ժերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

լուծումը

**Չետագոտական հարցեր**

- խնդիրների առկայության դեպքում ուն են դիմում տարեցները
- ի՞նչ հարցերով են դիմում ղեկավարությանը
- լուծվում են արդյոք դրանք և ինչպե՞ս
- ինչո՞վ է պայմանավորված լինում մերժումը
- ներկայացնո՞ւմ են արդյոք տարեցները առաջարկություններ իրենց խնդիրների լուծման հետ կապված
- հաշվի՞ են առնվում արդյոք դրանք

**Օպերատիվ նպատակ 3.**

Նպաստել ծերերի սեփականության և անձնական կյանքի իրավունքի պահպանմանը:

**Չետագոտական խնդիր**

Ուսումնասիրել ծերերի սեփականության և անձնական կյանքի իրավունքի պահպանումը

**Պրորլեն 1.**

Կենսաթոշակների վճարումը

**Չետագոտական հարցեր**

- Ինչպե՞ս են վճարվում կենսաթոշակները
- Կենսաթոշակի ո՞ր տոկոսը պետք է հատկացվի ծերերին
- Ստանո՞ւմ են արդյոք ծերերը կենսաթոշակի իրենց հասանելի գումարը
- Ինչպե՞ս են ստանում /առձեռն, փոխանցվում է հաշվեհամարին.../
- Ինքնուրույն են տնօրինում իրենց գումարը
- ինչի՞ վրա է ծախսվում գումարը

**Պրորլեն 2.**

Տարեցների անձնական իրերի անձեռնմխելիությունը

**Չետագոտական հարցեր**

- ունե՞ն արդյոք առանձին պահարաններ
- կողպվո՞ւմ են արդյոք դրանք
- մատչելի են պահարանները այլ անձանց համար
- եղել են դեպքեր, երբ որևէ իր է կորել
- իմացել է արդյոք անձնակազմն այդ մասին և ինչ է ձեռնարկել
- ստանում են արդյոք ծանրոցներ
- ստուգվում է արդյոք դրանց պարունակությունը

**Պրորլեն 3.**

Չաղորդակցվելու հնարավորությունը /հեռախոս, նամակագրություններ, տեսակցություններ/

**Չետագոտական հարցեր**

- հեռախոսի առկայությունը, դրանց քանակը
- աշխատում են արդյոք դրանք, հասանելի՞ են տարեցների համար
- կա արդյոք հեռախոսից օգտվելու սահմանափակում
- պահպանվում է արդյոք հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը
- նամակագրության հնարավորությունը
- պահպանվում են դրանց գաղտնիությունը
- կան սահմանված օրեր, ժամեր տեսակցությունների համար
- տեսակցությունների հնարավորությունը,
- տեսակցությունների ժամանակ հնարավորություն կա՞ դուրս գալու տարեցների տնից, ու՞մ ուղեկցությամբ

**Օպերատիվ նպատակ 4**

Նպաստել տարեցների բնակվելու պայմանների բարելավմանը

**Չեզոք տակալան խնդիր**

Ուսումնասիրել տարեցների բնակվելու պայմանները

**Պրոբլեմ 1**

Կենցաղային պայմանները

**Չեզոք տակալան հարցեր**

- սենյակների թիվը
- բնակման տարածքի համապատասխանությունը եվրոպական չափանիշներին /1 սենյակում քանի տարեց մարդ է ապրում/
- Առանձնացված են արդյոք տղամարդկանց և կանանց սենյակները
- Սենյակների լուսավորությունը,
- օդափոխությունը,
- ջեռուցումը
- Ապահովվա՞ծ են արդյոք սենյակները անհրաժեշտ կահույքով, կահույքի հարմարավետությունը
- ապահովված է արդյո՞ք տարեցների տունը անվտանգությամբ համակարգով
- արտաքին աշխարհի հետ կապի հնարավորությունը /տրամսպորտի միջոց, հեռախոս/
- սանհանգույցների, լոգարանների քանակը
- առանձնացված են արդյոք կանանց և տղամարդկանց սանհանգույցները, լոգարանները
- սանհանգույցների և լոգարանների հասանելիությունը,
- դրանց հարմարավետությունը
- սառնարանների առկայությունը, դրանց քանակը
- աշխատում են արդյոք դրանք, հասանելիությունը տարեցների համար

**Պրոբլեմ 2.**

Սանիտարահիգիենիկ պայմանները

**Չեզոք տակալան հարցեր**

- Ո՞վ է զբաղվում տարեցների սենյակների մաքրությամբ , ինչ հաճախականությամբ

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերուս,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

- Ապահովված են արդյոք տարեցները անհրաժեշտ հագուստներով
- Ի՞նչ հաճախականությամբ է փոխվում անկողնային սպիտակեղենը, հագուստը, ներքնաշորերը
- Մատչելի է արդյոք տաք ջուրը, ինչպե՞ս է այն ապահովվում
- Կա՞ն արդյոք անհրաժեշտ հիգիենիկ պարագաներ /օճառ, ատամի մածուկ, շամպուն և այլն/,
- հիգիենիկ պարագաները հատկացվում են անհատակա՞ն, թե՞ ընդհանուր օգտագործման
- Կա՞ն արդյոք առանձին լոգարաններ և սանհանգույցներ տղամարդկանց և կանանց համար
- Կա՞ արդյոք լոգարանից օգտվելու սահմանափակում /կա՞ն արդյոք հատուկ սահմանված ժամեր կամ օրեր լոգանքի համար/
- Մաքրությունը /սենյակները, սանհանգույց, լոգարաններ, խոհանոց, տարեցների տան շրջակայքը, միջանցքները, այլ/

### **Պորթլեմ 3**

Սնունդ

#### **Հետազոտական հարցեր**

- Օրը քանի՞ անգամ է սնունդ տրամադրվում
- Ապահովում են արդյո՞ք որակյալ, տարիքին համապատասխան և անհրաժեշտ քանակի սննդով
- Համապատասխանո՞ւմ է արդյոք սննդի կալորիականությունը սահմանված նորմերին
- ճաշացուցակի բազմազանությունը /քաղցրավենիքներ, հյութեր/
- Կ՞ա արդյոք տարբերակված մոտեցում հիվանդ /դիետիկ սնունդ/, թերսնվող և գերսնվող տարեցների նկատմամբ
- Բացի սահմանված ժամերից տարեցները հնարավորություն ունե՞ն օգտվել սննդից /հավելյալ սննդի տրամադրում/

#### **Տարեցների ազատ ժամանցի կազմակերպումը**

- հեռուստացույցի առկայությունը, դրանց քանակը
- աշխատո՞ւմ են արդյոք դրանք
- ռադիո, քանակը
- աշխատո՞ւմ են արդյոք
- շաշկի, քանակը
- շախմատ, քանակը
- թերթերի առկայությունը
- ինչ թերթեր են ստանում, յուրաքանչյուր թերթից քանի՞ օրինակ
- ամսագրեր, ինչ ամսագրեր, դրանց քանակը
- ձեռագործի պարագաներ, դրանց քանակը

«Վանաձորի մանկատան մոնիտորինգ»

**Մոնիտորինգի կոնցեպցիա**

Մանկատան երեխաների իրավունքներ

ՅԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Գործունեության ոլորտ**

Վանաձորի մանկատուն

**Ռազմավարական նպատակը**

Ապահովել ՄԱԿ-ի կոնվենցիայով, ՀՀ «Երեխայի իրավունքների մասին» օրենքով նախատեսված երեխայի իրավունքների իրականացումը մանկատանը

**Իրավիճակի նախնական նկարագրությունը**

Վանաձոր քաղաքում գործում է Լոռու մարզի միակ մանկատունը, որը պետական կառույց է: Այնտեղ բնակվում են մոտավորապես 110 երեխաներ՝ տարբեր տարիքային խմբերից: Մանկատունը զբաղվում է երեխաների առողջության, սննդի, կրթության, դաստիարակության և այլ հարցերով:

Սննդի, կրթության որակի, դաստիարակության, երեխաների և աշխատակազմի միջանձնային հարաբերությունների, պատժամիջոցների ձևերի, առողջության, երեխաների և նրանց ծնողների հետ հանդիպումների և երեխաների իրավունքների պահպանման մասին համակարգված տեղեկություններ չկան:

Կա մտահոգություն , որ հաճախ չեն պահպանվում երեխաների հանգստի, կրթության, սննդի և այլ իրավունքները: Օրինակ՝ երեխաներին ստիպում են աշխատել՝ լվանալ ափսեները, հատակը ավել և այլ տնտեսական աշխատանքներ վարել հանգստի համար նախատեսված ժամերին:

**Օպերատիվ նպատակ 1**

Նպաստել վանաձորի մանկատան երեխաների կյանքի պայմանների որակի բարելավմանը

**Հետազոտական խնդիր**

Երեխայի առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմաններ

**Պրոբլեմ 1**

Կենցաղային պայմաններ

**Հետազոտական հարցեր**

- մանկատան զբաղեցրած տարածքը, ընդհանուր բնակմակերեսը
- մանկատան շրջակա միջավայրը
- ապահովված է արդյո՞ք մանկատունն անվտանգության համակարգով
- արտաքին աշխարհի հետ կապի հնարավորությունը
- սենյակների թիվը
- սանհանգույցների թիվը
- լոգարանների թիվը
- Կա՞ն արդյոք տղաների և աղջիկների համար առանձնացված սանհանգույցներ
- Կա՞ն արդյոք տղաների և աղջիկների համար առանձնացված լոգարաններ
- սանհանգույցների հասանելիությունը

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերուս,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

- լրգարանների հասանելիությունը
- սենյակի բնակմակերեսը
- մեկ սենյակում ապրող երեխաների թիվը
- առանձնացված են արդյո՞ք տղաների և աղջիկների սենյակները
- սենյակի ջերմաստիճանը
- ջեռուցման հնարավորությունները
- սենյակի լուսավորությունը
- սենյակի օդափոխման հնարավորությունները
- սենյակում առկա կահույքը /պահարաններ, սեղան, աթոռներ/
- մահակալների դասավորությունը
- երեխաների տարիքային առնաձևհատկություններին համապատասխան անվտանգ խաղահրապարակների առկայությունը

### **Պորթլեն 2**

Սանիտարահիգիենիկ պայմաններ

#### **Հետազոտական հարցեր**

- Երեխայի անձնական պահանջները /անձնական հիգիենիա և կարիքներ/ ինքնուրույն բավարարելու հնարավորություն
- Կա՞ն արդյոք հիգիենիայի համար անհրաժեշտ պարագաներ /օճառ, ատամի մածուկ և այլն/
- Օճառից, ատամի մածուկից օգտվելու մատչելիությունը
- Հիգիենիայի համար անհրաժեշտ պարագաները /օճառ, ատամի մածուկ, շամպուն և այլն/ անձնակա՞ն են, թե՞ ընդհանուր
- Կա՞ն արդյոք հատուկ սահմանված ժամեր և օրեր լրգանքի համար
- Կա՞ն արդյոք լրգարանից օգտվելու սահմանափակումներ
- Կա արդյո՞ք մշտական սառը ջուր
- Կա արդյո՞ք մշտական տաք ջուր
- Ի՞նչ հաճախականությամբ է փոխվում անկողնային սպիտակեղենը,
- Ի՞նչ հաճախականությամբ է փոխվում հագուստը
- Ապահովվա՞ծ են արդյոք երեխաները անհրաժեշտ հագուստներով
- Վեց տարին լրացած երեխաների մասնակցությունը իրենց հագուստի և անձնական օգտագործման պարագաների ընտրությանը
- Ի՞նչ հաճախականությամբ են երեխաների սենյակները մաքրվում և ու՞մ կողմից
- Սննդի պատրաստման և օգտագործման պայմանները /խոհանոցի մաքրությունը, անհրաժեշտ սպասքի առկայություն/

### **Պորթլեն 2**

Ազատ ժամանց

#### **Հետազոտական հարցեր**

- Կա արդյո՞ք հստակ սահմանված ժամանցի օրակարգ և պլան
- Էքսկուրսիոն միջոցառումների առկայություն
- Սպորտային միջոցառումների առկայությունը
- Մշակութային միջոցառումների առկայությունը
- Կա՞ն արդյոք խաղասենյակներ, ընթերցասենյակներ, ֆիլմերի դիտման սենյակներ
- Հագեցվա՞ծ է արդյոք խաղասենյակը համապատասխան կահույքով, խաղալիքներով
- Կա՞ն արդյոք խաղասենյակից օգտվելու սահմանափակումներ

- Հասանելի՞ են արդյոք խաղալիքները
- Ինչպիսի՞ խաղեր են խաղում երեխաները  
ժամանցի միջոցառումների պլանի կազմման ժամանակ երեխաների մասնակցությունը

**Պրոբլեմ 3**

Սնունդ

**Հետազոտական հարցեր**

- սննդի տեսականին և բազմազանությունը
- հյութերի տեսականին և բազմազանությունը
- սննդի տրամադրման հաճախականությունը
- հյութերի տրամադրման հաճախականությունը
- սննդի որակը /թարմությունը, համը, առողջության վրա ազդեցությունը և այլն/
- անհատական մոտեցում հիվանդ, թերսնվող և գերսնվող երեխաների համար
- սննդի կալորիականությունը ըստ սահմանված նորմերի
- հավելյալ սննդից օգտվելու հնարավորությունը  
սեփական ուժերով կերակուր պատրաստելու հնարավորությունը
- խմելու ջրի որակը /թարմությունը, համը, առողջության վրա ազդեցությունը և այլն/  
խոհանոցում աշխատողների մասնագիտական փորձառնությունը

**Պրոբլեմ 4**

Բուժպասարկում

**Հետազոտական հարցեր**

- Առաջին բժշկական օգնությանն անհրաժեշտ բժշկական սարքավորումներով ապահովվածությունը
- Առաջին բժշկական օգնությանն անհրաժեշտ դեղորայքով ապահովվածությունը
- Բազմամասնագիտական բժշկական հետազոտության իրականացման հաճախականությունը /ֆիզիկական և հոգևոր/
- Երեխաների համար լրացված բժշկական քարտերի առկայությունը
- Դեղորայքի մատչելիությունը և ձեռքբերման հնարավորությունը
- Ստացած դեղորայքի որակը
- Կա՞ արդյոք անհրաժեշտ քանակի բուժաշխատող
- Ունե՞ն արդյոք անհրաժեշտ որակավում
- Օրվա ընթացքում քանի՞ ժամ է աշխատում բուժանձնակազմը
- Ո՞ր բուժօժանայություններից օգտվելու համար են դիմում այլ բժշկական հաստատություններին
- Կա՞ արդյոք գիշերային բժիշկ հերթապահ
- Այլ բժշկական հաստատություններում բուժսպասարկումից օգտվելու պայմանները
- Մոտակա հիվանդանոցի հեռավորությունը
- Մոտակա պոլիկլինիկայի հեռավորությունը
- Հարկադիր բուժման առկայությունը
- Ո՞վ է որոշում կայացնում հարկադիր բուժման վերաբերյալ
- Վարկիչ հիվանդությունների դեպքում երեխաներին մեկուսացնելու հնարավորությունը

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերուս,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

## **Օպերատիվ նպատակ 2**

Երեխայի արժանապատվությունը նվաստացնող, անմարդկային կամ այլ դաժան վերաբերմունքից, պատժից և բռնություններից զերծ մնալու իրավունք:

### **Չետազոտական խնդիրներ**

Անձնակազմի վերաբերմունքը երեխաների նկատմամբ

#### **Պրորլեմ 1**

Պատասխանատվության և պատժանիջոցների առկայությունը

### **Չետազոտական հարցեր**

- կան երեխաների համար սահմանված վարքագծի համապարտադիր կանոններ
- տեղյակ են արդյոք երեխաները դրանց
- արարքների ցանկը, որոնց համար պատժանիջոցներ են սահմանվում
- պատասխանատվության միջոցների ցանկը
- պատժանիջոցների իրականացման եղանակները
- անհնազանդ երեխաների նկատմամբ կիրառվող մանկավարժական մեթոդները
- մանկատանը երեխաների կողմից իրականացվող աշխատանքները, դրանց բնույթը
- անձնակազմի մասնակցությունը երեխաների փոխհարաբերություններում
- խնդիրների առկայության դեպքում ու՞մ են դիմում երեխաները
- անձնակազմի և երեխաների միջև ծագող խնդիրները, դրանց բնույթը
- ի՞նչ կարգի խնդիրների դեպքում են երեխաները դիմում անձնակազմին
- երեխաների մասնակցությունը մանկատան իրականացվող միջոցառումներում
- նորածին երեխաների խնամքը
- շրջանավարտների համար հետագա կյանքի անհատական ծրագրերի առկայությունը

## **Օպերատիվ նպատակ 3**

Երեխայի կրթության իրավունքի պահպանում  
Չետազոտական խնդիր

Անվճար կրթության հնարավորությունների ընդլայնում

#### **Պրորլեմ 1**

Անվճար, պարտադիր կրթության ապահովում

### **Չետազոտական հարցեր**

- Ինչպե՞ս են երեխաները դպրոց հաճախում /փոխադրամիջոցը /
- Մանկատան սաների ո՞ր տոկոսն է շարունակում ուսումը բարձրագույն հաստատություններում
- Դասերից բացի, հաճախու՞մ են երեխաները դպրոցում կազմակերպվող լրացուցիչ պարապմունքների / արտադասային պարապմունքներ/
- Ինչպե՞ս են տրամադրվում երեխաներին գրքերը, դպրոցի համար անհրաժեշտ այլ գրենական պիտույքները

- Ո՞վ է վճարում դրանց համար/ վճարում են ըդհանրապես /
- Կա՞ն արդյոք նրանց համար սահմանված գեղչեր
- Ինչպիսի՞ն է երեխաների առաջադիմությունը
- Ուսուցիչների կողմից կա՞ արդյոք հատուկ վերաբերմունք մանկատան սաների նկատմամբ
- Ինչպիսի՞ն է երեխաների առաջադիմությունը

**Օպերատիվ նպատակ 4**

Անձնական կյանքն հարգելու և անձնական անձեռնմխելիության իրավունք

**Չետազոտական խնդիր**

Պահպանվում է արդյո՞ք երեխաների անձնական կյանքի անձեռնմխելիությունը

**Պրոբլեմ 1**

Անձնական կյանքի գաղտնիության պահպանման հնարավորությունը

**Չետազոտական հարցեր**

- կա՞ արդյոք անձնական իրերը պահելու հնարավորություն
- կողպվու՞մ են արդյոք պահարանները
- կողպվու՞մ են արդյոք սենյակի դռները
- բացի երեխաներից, էլ ու՞մ համար են հասանելի այդ պահարանները և ո՞ր դեպքերում
- սենյակներում ստուգումներ իրականացնելու հաճախականությունը
- ընտանիքի, հարազատների և մտերիմների հետ շփվելու հնարավորությունը
- ընտանի կենդանիներ պահելու հնարավորությունը
- փակվու՞մ են արդյոք լոգասենյակները և սանհանգույցները
- պահպանվու՞մ է արդյոք հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը
- նամակագրության հնարավորությունը
- պահպանվու՞մ են դրանց գաղտնիությունը
- տեսակցությունների հնարավորությունը
- անձնական մանր ծախսերի համար տրամադրվող գումարները
- այդ գումարների ծախսման հնարավորությունը
- Չամաձայն ՉՉ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2004թ-

ի N 34-Ն հրամանի սահմանվում է «Պետական կենսաթոշակների մասին» ՉՉ օրենքի 30-րդ և 58-րդ հոդվածներով նախատեսված պետության լրիվ խնամքի տակ գտնվող և խնամակալական կազմակերպությունում / մանկատուն, տուն-ինտերնատ / ապրող կենսաթոշակառուին կենսաթոշակ վճարելու կարգը, այսինքն՝ մանկատանն ապրող երեխային վճարվու՞մ է կերակրողին կորցնելու դեպքում նշանակված կենսաթոշակի 50 տոկոսը: Մինչև 18 տարին լրանալը կազմակերպությունից դուրս գրվելու դեպքում մանկատանն ապրած ամբողջ ժամանակահատվածում կուտակված կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուին վճարվում է նրա 18 տարին լրանալուց հետո, իսկ օրենքով սահմանված կարգով ավելի վաղ գործունեություն ձեռք բերելու կամ գործունակ ճանաչվելու դեպքում՝ այդ օրվանից: Կենսաթոշակի կուտակված գումարը վճարվում է անձի՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում և անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելուց հետո՝ 1 ամսվա ընթացքում, միանվագ:

Չամաձայն այս օրենքի 18 տարին լրանալուց հետո երեխաներին տրվու՞մ են արդյոք այդ գումարները:

«Վանաձորի հոգեւոյնաբանական դիսպանսերու»  
իրականացված մոնիտորինգի

Լոռու մարզային  
հոգեւոյնաբանական  
դիսպանսերու մ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

**Դիտարկման քարտ**

Հաստատության վիճակը ներսում և դրսում

- որտե՞ղ է տեղակայված շենքը \_\_\_\_\_
- տարածքի մաքրությունը \_\_\_\_\_
- շենքի վերանորոգումը \_\_\_\_\_
- հարկերի քանակը \_\_\_\_\_
- բակում կա՞ն նստարաններ/քանակը/ \_\_\_\_\_
- պատուհանները /ճաղապատ, հատուկ/ \_\_\_\_\_
- դռները փական՞վ են արդյոք \_\_\_\_\_
- պատերին փակցված հայտարարությունների, կանոնադրության, էթիկայի նորմերի և այլնի առկայությունը \_\_\_\_\_
- միջանցքի մաքրությունը \_\_\_\_\_
- միջանցքում նստելու հնարավորությունը \_\_\_\_\_

**Անձնակազմի վերաբերմունքը հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ**

- հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց դիմելու ձևը  
\_\_\_\_\_
- հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հետ խոսելու տոնը  
\_\_\_\_\_

**Հիվանդների արտաքին տեսքը**

- կա՞ն արդյոք կապտուկներ \_\_\_\_\_
- միանմա՞ն են արդյոք հագուստները \_\_\_\_\_
- հագուստի մաքրությունը \_\_\_\_\_
- խնամվա՞ծ են արդյոք եղունգները, մազերը \_\_\_\_\_

**Խոհանոց, ճաշարան**

- խոհանոցի, ճաշարանի մաքրությունը \_\_\_\_\_
- ճաշացանկի առկայությունը / յուրաքանչյուր օրվա համար, 1 շաբաթվա համար, 1 ամսվա համար / \_\_\_\_\_
- սպասքի առկայությունը \_\_\_\_\_

- սպասքի մաքրությունը \_\_\_\_\_
- սպասքի որակը \_\_\_\_\_
- սննդի մաքրությունը \_\_\_\_\_
- սեղանների մաքրությունը \_\_\_\_\_
- սեղանների քանակը, որակը \_\_\_\_\_
- աթոռների քանակը, որակը \_\_\_\_\_
- սառնարանի առկայությունը, քանակը \_\_\_\_\_
- զազօջախի առկայությունը, քանակը \_\_\_\_\_
- խոհանոցում աշխատողների արտաքին վիճակը \_\_\_\_\_

**Հիվանդասենյակ**

- հիվանդասենյակների թիվը \_\_\_\_\_
- առանձնացված են տղամարդկանց և կանանց հիվանդասենյակները \_\_\_\_\_
- հիվանդասենյակի մաքրությունը \_\_\_\_\_
- սպիտակեղենի մաքրությունը \_\_\_\_\_
- քանի՞ մահճակալ կա մի սենյակում \_\_\_\_\_
- կա՞ արդյոք պահարան/քանակը/ \_\_\_\_\_
- մի պահարանից քանի՞ մարդ է օգտվում \_\_\_\_\_
- կահույքի որակը \_\_\_\_\_
- անձնական իրերի առկայությունը սենյակում \_\_\_\_\_
- պահարանում \_\_\_\_\_
- սննդի առկայությունը \_\_\_\_\_
- հնարավո՞ր է արդյոք օդափոխել սենյակը \_\_\_\_\_
- պատուհանների քանակը, ինչպիսին լինելը/վանդակաճաղեր/ \_\_\_\_\_
- դռների ինչպիսին լինելը/փական, ապակի/ \_\_\_\_\_
- ո՞վ է բացում - փակում դռները, ինչպե՞ս \_\_\_\_\_
- աթոռների առկայությունը \_\_\_\_\_
- սենյակներում սեղանների առկայությունը \_\_\_\_\_
- լուսամտի փի առկայությունը \_\_\_\_\_
- միացնիչ- անջատիչի, ռազետկի առկայությունը, տեղը \_\_\_\_\_

**Չուզարան**

- քանի՞ զուզարան կա յուրաքանչյուր հարկում \_\_\_\_\_

ՄԱՐԴՈՒ  
ԻՐԱՎԱՆՈՒՆՔՆԵՐԸ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

- առանձնացված են տղամարդկանց  
և կանանց զուգարանները \_\_\_\_\_
- միշտ բաց է արդյոք զուգարանի դուռը \_\_\_\_\_
- ներսից փակվում է զուգարանի դուռը \_\_\_\_\_
- զուգարանի մաքրությունը \_\_\_\_\_
- լվացարանի առկայությունը, աշխատելը \_\_\_\_\_
- գործում են արդյոք ծորակները           այո՞    ոչ՞ \_\_\_\_\_
- գործում է կոյուղին                           այո՞    ոչ՞ \_\_\_\_\_
- կա՞ ջուր
- սառը՝   այո՞    ոչ՞    քա՞    այո՞    ոչ՞ \_\_\_\_\_

- կա՞ արդյոք թուղթ \_\_\_\_\_
- կա՞ օճառ \_\_\_\_\_
- կա՞ սրբիչ /մաքրությունը/ \_\_\_\_\_
- կա՞ ատամի մածուկ/քանակը, օգտագործվածությունը/ \_\_\_\_\_
- կա՞ ատամի խոզանակ/քանակը, օգտագործվածությունը/ \_\_\_\_\_
- պարագաները անհատական են,  
թե ընդհանուր, որտե՞ղ են պահվում \_\_\_\_\_

**Լողասենյակ**

- քանի՞ լողասենյակ կա յուրաքանչյուր հարկում \_\_\_\_\_
- բաց է արդյոք լողասենյակի դուռը \_\_\_\_\_
- ներսից փակվում է լողասենյակի դուռը \_\_\_\_\_
- առանձնացված են տղամարդկանց  
և կանանց լողասենյակները \_\_\_\_\_
- լողասենյակի մաքրությունը /լողախցիկները/ \_\_\_\_\_
- աշխատում է արդյոք ցնցուղը \_\_\_\_\_
- ջուրը տա՞ք է           այո՞    ոչ՞ \_\_\_\_\_
- կա՞ օճառ \_\_\_\_\_
- կա՞ շամպուն \_\_\_\_\_
- կա՞ մաշակակա \_\_\_\_\_
- կա՞ սրբիչ /քանակը, մաքրությունը/ \_\_\_\_\_
- մազերը չորացնելու հնարավորություն \_\_\_\_\_
- կա՞ սանր \_\_\_\_\_
- կա՞ մկրատ, սափրիչ \_\_\_\_\_



Լոռու մարզային  
հոգեբանական  
դիսպանսերում,  
Վանաձորի ծերատանը եվ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիտորինգի  
արդյունքները

**Պիտարկման քարտ**

Այցելության ժամը \_\_\_\_\_

Որտե՞ղ է տեղակայված հաստատությունը /քաղաքից հեռավորությունը,  
մոտակայքում ի՞նչ հաստատություններ կան.../

**Հաստատության շրջակայքը**

- Տարեցների տունը պարսպապատված է \_\_\_\_\_
- շենքի վիճակը /վերանորոգված է, թե ոչ/ \_\_\_\_\_
- հարկերի քանակը \_\_\_\_\_
- բակի առկայությունը, մեծությունը \_\_\_\_\_
- տարածքում կա՞ն նստարաններ  
այո \_\_\_ ոչ \_\_\_ քանակը \_\_\_
- տեղաշարժման հնարավորությունը հաստատությունից դուրս  
/փոխադրամիջոցների առկայությունը/

**Հաստատության ներսը**

- տեղաշարժվելու՝ բարձրանալ-իջնելու հարմարավետությունը տարեցների  
համար
- սայլակներով հաշմանդամների ազատ տեղաշարժման հնարավորությունը  
հաստատության ներսում \_\_\_\_\_
- ո՞ր ծերերն են ապրում վերին հարկերում \_\_\_\_\_
- պատերին կա՞ն փակցված տարեցների իրավունքներն ու  
արտականությունները  
այո \_\_\_ ոչ \_\_\_

**Կենցաղային պայմանների դիտարկում**

- սենյակների քանակը \_\_\_\_\_
- սենյակների լուսավորությունը

պատուհանների քանակը \_\_\_\_\_

պատուհանների մեծությունը \_\_\_\_\_

պատուհանների մաքրությունը \_\_\_\_\_

Էլեկտրական լամպերի քանակը \_\_\_\_\_, աշխատում են \_\_ չեն աշխատում \_\_

վարդակների քանակը \_\_\_\_\_ աշխատում են \_\_ չեն աշխատում \_\_

- ճաղավանդակների առկայությունը այո \_\_ ոչ \_\_\_\_
- սենյակներում օդափոխման հնարավորությունը /օդափոխիչների առկայությունը

- սենյակների ջեռուցման հնարավորությունը

- 1 սենյակում ապրող տարեցների թիվը

- սենյակի մակերեսը \_\_\_\_\_

- սենյակի կահավորանքը

- մահճակալ քանակը \_\_\_\_\_
- փոքրիկ պահարան քանակը \_\_\_\_\_
- աթոռ քանակը \_\_\_\_\_
- սեղան քանակը \_\_\_\_\_
- հանդերձապահարան քանակը \_\_\_\_\_

- կահույքի հարմարավետությունը

ոչ բավարար \_\_\_\_\_ բավարար \_\_\_\_\_ լավ \_\_\_\_\_

- կա՞ն սառնարաններ

այո \_\_ ոչ \_\_\_\_ քանակը \_\_\_\_\_

- աշխատո՞ւմ են դրանք այո \_\_ ոչ \_\_\_\_

- տարեցներն օգտվո՞ւմ են դրանցից այո \_\_ ոչ \_\_\_\_

Եթե ոչ՝ ինչու՞

**Սանիտարահիգիենիկ պայմանների դիտարկում**

Հիգիենայի համար անհրաժեշտ պարագաների առկայությունը

- մշտական ջուր՝

սառը՝ այո \_\_ ոչ \_\_\_\_

տաք՝ այո \_\_ ոչ \_\_\_\_





ՄԱՐԴՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Լոռու մարզային  
հոգեւոյարդաբանական  
դիսպանսերոււմ,  
Վանաձորի ծերատանը եւ  
Վանաձորի մանկատանը  
իրականացված մոնիթորինգի  
արդյունքները

- թերթեր կա \_\_\_ չկա \_\_\_ քանակը \_\_\_
- ամսագրեր ստանում են \_ չեն ստանում\_ քանակը \_\_\_
- ձեռագործի պարագաներ կան \_\_\_ չկան \_\_\_ քանակը \_\_\_
- այլ

**Բուժկետ**

- բուժկետի առկայությունը \_\_\_\_\_
- բուժկետի մաքրությունը \_\_\_\_\_
- բուժկետի հագեցվածությունը /գործիքներ, սարքավորումներ, այլ/  

- դեղորայքի առկայությունը / ի՞նչ դեղամիջոցներ են ստանում, ձեռք բերում/  

- դեղորայքի պիտանելիությունը /կա՞ն արդյոք ժամկետանց դեղեր

«Վանաձորի մանկատանն իրականացված  
մոնիտորինգի»

ՅԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Ղիտարկման քարտ**

1. Կենցաղային պայմանների ղիտարկում

Հաստատության վիճակը դրսում և ներսում /նկարագրել ըստ հետևյալ  
չափանիշների/

- որտե՞ղ է տեղակայված շենքը \_\_\_\_\_
  - տարածքի մաքրությունը \_\_\_\_\_
  - շենքի վերանորոգումը, հարկերի քանակը \_\_\_\_\_
  - բակում կա՞ն նստարաններ \_\_\_\_\_
  - բակում կա՞ խաղահրապարակ \_\_\_\_\_
  - արտաքին աշխարհի հետ կապի հնարավորությունը \_\_\_\_\_
  - հեռախոս /աշխատում է , չի աշխատում/ \_\_\_\_\_
  - փոստ /գործում է, թե ոչ / \_\_\_\_\_
  - ինտերնետ կապի առկայությունը \_\_\_\_\_
